1594
5 VIII 7

ԳԻՐՔ XLV



ՀԱՅԿ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1907 № 1—2 ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՍ., 7.
1907 51

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր արիւնոտ անցեալից, Խանզադէ. 3
Թագաւորը պէտք է ճանաչէ բարեկամն ու թշնամին, Սաադիի, պարսկ. թարգմ. Մ. Վ. Մաքսուտեանց . . 29
Տ. Գաբրիէլ Պատկանեան, Երուանդ Շահազիզ. 33
Միրէյօ, Պրովանսական քերթուած, Ֆրեդերի Միսթրալի, ֆրանս. թարգմ. Արշակ Չոպանեան 49
Գիւլասար, Ս. Քամալեանց 65
Իշխ. Կոստ. Բեհբուդեանի յիշատակին, Նիկ. Քարամեանց 66
Գրականութիւն և կեանք, Մինաս Բերբերեան. 70
Հայագիտական, Բ. Խալաթեանց 79

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թոքախտը որպէս սոցիալական հիւանդութիւն, Օր. Նուարդ Աղանեանց 81

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արդի կացութիւնը, Դար. Ենգիբարեան.—Ներքին լուրեր.—Խմբագրութեան կողմից 86
ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.
ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱԶԴ (կազմի վերայ).

(wolen)

1907-8

1-2,1-4

nach

Muster

(1018)

25

54



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1907 *№ 1—2* *ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ*

ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՍ., 7.
1907 51

ՄԵՐ ԱՐԻՆՈՏ ԱՆՑԵԱԼԻՑ

Մայիսը դեռ նոր էր սկսուել։ Դեռ նոր էր Գողթնեաց գաւառի ողջ բնութիւնը զարդարուել, պճնուել և նորահարսի նման արտաքս բերել իր սքանչելի գեղեցկութիւնը, որը ամենուրեք իր փարթամ, իր հարուստ արդուզարդով հիասթափիչ տպաւորութիւն էր թողնում նայողի վրայ և իր հրաշագեղ բուրմունքով ասես մի տեղ մի նկարագրում է քեզ բնութեան հրաշակերտ գործութիւնը։

Սակայն այդ տարուայ մայիսը խիստ զանազանւում էր նախընթաց տարիների մայիսից. թւում էր թէ՝ մի դիւական ստուեր էր անցել գուսանների այդ նուիրական աշխարհի վրայով և իր յետևից թողել մի ինչ որ խորհրդաւոր, ինչ որ մեռելային լռութիւն։ Եւ այդ այնքան ակներև էր աչքի ընկնում, այնքան զգալի ցցւում առաջիդ, որ ինքդ էլ ակամայից ստիպուած էիր լինում դիտել շուրջդ համոզուելու թէ՝ արդեօք լրտողներ չ'կան քեզ, և երբ մենակ էիր զգում քեզ, հարցնում էիր քեզ ու քեզ. «ի՞նչ դիւական դաւադանի ազդեցութեա՞ւ է արդեօք քար կտրել համայն այս բնութիւնը և գերեզմանական լռութեան կապանքների դիրկը ընկել։ Մի՞թէ տարաբաղդ հողի քաղցրախօս գուսաններն էն ոտքի կանգնել և մի սպառնական հայեացքով պապանձեցրել բոլորի լեզուները, ասելով թէ՝ «մեզանից յետոյ, ո՛վ ապերախտ ծննդավայր, դու սուգ չ'պահեցիր, դու չ'ողբացիր քո հարազատ երգիչներիդ կորուստը, այժմ արժանի է քեզ պապանձուել և ցաւատանջ երերուումների խոհերով մաշուել, ապա հասկանալ, որ մեր հայրենի ծնծղանե-

րի ծայները անդարձ կորել են քեզ համար...Չ'կային և առօրեայ եռուն շարժումներ: Անցուդարձը վաղուց էր դադարել. նոյնիսկ ամենամօտիկ դիւղից միւսը անցնել խիստ դժուարացել էր և վտանգաւոր դարձել, իսկ քաղաքի հետ յարաբերութիւնները մի շաբաթից աւելի էր, ինչ իսպառ կտրուել էր: Եւ ամենքը սև թախիծով լցուած՝ ակնապիշ սպասում էին, թէ ի՞նչ տեղեկութիւն է գալիս քաղաքից: Բայց տեղեկութիւն չը-կար ու չ'կար: Եւ վերջապէս, ո՞վ էր իր գլխից ձեռք վեր առել որ քաղաք անցնէր, և ամեն «խէր ու շառը» իմանար ու վերադառնար մեզ այդ աւետելու: Իսկ ով յանդգնում էր դուրս գալու, որպէս զի քաղաք գնայ և մի բարի «խաբար» բերէ մեզ, այլևս չէր վերադառնում. թուրքերը ամեն ծակ ու ծուկ բռնել էին՝ երևացողին խփում էին և սպանում: Հէնց այդ էր պատճառը, որ այդ մի շաբաթուայ ընթացքում անհասկանալի սպանութիւնները օր ցերեկով տեղի էին ունենում, յանախ նոյնիսկ պաշտօնական անձանց քթի տակին:

Այսպէս էր մեր դրութիւնը 1905 թ. մայիսի 12-ին:

Այսպէս էր և գրեթէ բոլոր մեր հայ դիւղերի դրութիւնը:

Մենք ընդհատուած էինք քաղաքից, հետևապէս և դրսի աշխարհից և անկարող էինք ստուգելու թէ՝ ի՞նչ է կատարուում մեզանից ոչ հեռու, մի քանի վերստի վրայ, մեր եղբայրների, մեր հարազատների և մեր սիրելիների հետ:

Այսպիսի խոհերով ծանրաբեռնուած՝ մենք երեկոյեան զանգակների ծայների հետ շտապեցինք եկեղեցի: Այսպիսի դառն ճգնաժամերում հայի պապենական յատկութիւնն է առանձնանալ իր եկեղեցում և աղօթել, երբ յոյսը, ճարը կտրած է լինում ամեն տեղից: Այդ օր եկեղեցում սովորականից աւելի բազմութիւն կար. սակայն բոլորի էլ դէմքերի վրայ պարզ կարդացւում էր մի հոգեկան խորին դառնութիւն, մի ներքին կրբակ, որը իր ցաւոտ հետքերը այդ օր աւելի քան ինքնուրոյն դոյներով էր դրոշմել իր զոհերի ճակատներին, ուր անյոյս փոթորիկը, ալէծուփ յուզմունքը թանձր շերտերով հեռուից նըշմարւում էին նրանցից իւրաքանչիւրի կնճիռների արանքներից:

Ո՞վ կասէր, թէ եկեղեցու այդ մեծ բազմութիւնը աղօթ-

քի, մաղթանքների խոկումներով է զբաղուած։ Ո՛չ, այդ աղօթք չէր, այլ մի սրտամորմոք հեծկլտանք և խուլ հառաչանք։ Ամենքն էլ կասես բնազդմամբ զգում էին, որ իրանց ապատում է մի արիւնոտ, մի կսկծեցուցիչ ապագայ, որը պիտի օրհասական նշանակութիւն ունենայ թէ իրանց և թէ ողջ հայութեան համար։ Գեղչուկը յաճախ է լսում իր սրտի ծայնին, նա նրա ըստրուկն է. նա չ՝գիտէ՝ ի՛նչ բանէ բնազդը, այլ դրանից աւելի լաւը գիտէ սրբադործուած իր բիւրաւոր փորձութիւններով. նա այսպիսի պարագաներում միշտ կրկնում է. «սիրտս վկայում է, որ մի փորձանք, մի սև օրին պիտի գայ գլխիս»։ Այո՛, գեղչուկը ունի սրտի լեզու։

Հէնց այսօր էլ այդպէս էին ամենքը համակուած և ակամայից մրմնջում էին այն, ինչ դուրս էր ցայտում նրանց ներքին խռովութիւնից։

Տխուր էր և եկեղեցին, ուր միայն մեր տէր Սիմէօնի դուրեկան ծայնն էր լսւում, որպէս անապատում փչող քաղցրաշունչ զեփիւռի հովերի, որը անկարող է շարժել կեանքը և ուրախութիւն սփռել իր շուրջը։ Այդպէս էին այդ օր նրա մաղթանքները, շարականները, մեղեդիները, որոնք միայն ասես եկեղեցու պատերին էին լսելի լինում՝ բաղմութիւնը իր ծով ցաւն ու սև դարդը ունէր։

Եկեղեցուց յետոյ բաղմութիւնը ըստ իր մշտօրեայ սովորութեան խռնուեց եկեղեցու բակում։

Դուրս եկաւ և քահանան։ Ամենքը նրա կողմը դնացին։ Տէր Սիմէօնը, տեսնելով իր հօտի վիշտը, ինքն էլ թախծոտ տեսք առաւ. բայց որովհետև իր սովորութեան համաձայն պիտի մի բան խօսէր, սիրտ տար, ողևորէր իր հօտին, այդ պատճառով նախ հազաց, միրուքը շփեց և յենուելով իր գաւազանի վրայ, որը իրօք հովիւի մահակի շատ նման էր և որի մասին նա լի պարծանքով էր խօսում թէ՝ «հասարակ գաւազան չէ, որ դիքս, իմ ծեռնադրութեան տարուանից սա անկորուստ ծեռքիս է եղել և հետս էլ գերեզման պիտի տանեմ. քսան և եօթ տարի է հա՛, հէ՞շտ է»...

Ժողովուրդ, հիմի՞ ի՞նչպէս է, կ՝հաւատաք հօ՛ ծեր տեր-

տէրին. ախր ասած է՝ «մեծի ասած, փոքրի լսած», բայց արդեօք դուք լսել էք ինձ. ոչ երբէք,— նկատեց տէր Սիմէօնը:

— Ի՞նչ է եղել, տէրտէր ջան, մենք միշտ հնազանդ ենք եղել քեզ. ի՞նչու ես զայրացել.—վրայ բերեց Մելիք Վարդանը:

— Ի՞նչպէս թէ՝ ի՞նչ է եղել, օրհնած. ցասման հոտ է գալիս, հոտ:

— Ատուծոյ կամքն է,—ասաց դուքանչի Խաչօն,— տէր-հայր, մենք ի՞նչ կարող ենք անել:

— Օրհնած, ի՞նչու չէք կարող անել, եթէ ինձ լսէիք, էսօր, կարելի է, էս օյինը մեր գլխին չ'գար:

— Տէր տէր ջան, դու մեզանից պիտի գոհ լինիս, մենք միշտ քո ծառան ենք եղել:

— Ճիշտ է, օրհնած, լեզուով միշտ ծառայ էք եղել, բայց գործով՝ ոչ. Խաչֆայ Յակոբ,—որին նա յանախ Խաթեցի Յովնան էր կոչում,—միտք է, որ միշտ քեզ ասում էի՝ «Խաթեցի Յովնան, մեզ խէր չի գալ էդ գեալմաններից՝ (դաղթականներից). դրանք իրանց համար ինչ եղան, որ մեզ համար ի՞նչ լինին»:

— Է՛հ, տէրտէր, դու էլի քո հին գարմանն ես քամուն տալիս. ախր գեալմանները մեզ ի՞նչ արեցին և կամ նրանք ի՞նչ մեղաւոր են, որ էսօր մեր դրութիւնը էսպէս սեաւոր է: Մարդը իր աչքը քօռ կ'ուզի. նրանք էսօր մեր մէջն են ապրում, մի՞թէ կ'ուզեն, որ նորից ականատես լինին արիւն-արցունքի, ցաւ ու տառապանքի»:

— Զէ, որդի, մարդի ոտն էլ պիտի խէրով լինի: Մի՞տք է, որ նրանք եկան, ես ծեզ, բոլոր ժողովուրդիդ, զօռում էի, թէ դրանց չ'ընդունենք մեր մէջ, դրանք որ կան՝ բուի նման են, որտեղ որ տան գլխին երևացին, էնտեղ աւերակ կ'դառնայ:

Մինչ սրանք այսպէս խօսում էին, նրանց կամաց-կամաց մօտեցաւ յիսունին մօտիկ տարիք ունեցող մի դաղթական, որը մի տարուց աւելի էր, ինչ եկել էր երկրից և որի կրակոտ աչքերում թաղնուած կար մի ինչ որ խորհրդաւոր, ինչ որ վեհ: Այն օրուանից, երբ նա իր այրիացած հարսի—Մաղիկի և մի տարեկան թոռան—Ուսմրշատի հետ ոտք էր դրել մեր գիւղը, ոչոք նրա ծիծաղը չէր տեսել ու լսել և ոչոք համարձակ խո-

սակցութիւն չէր ունեցել նրա հետ։ Նրա հայեացքը միշտ խոժոռ էր ու խոժոռ։ Նա իր նակատի քրտինքով էր վաստակում իր առօրեայ պարէնը և դրանով ապրում էր պատուաւոր կերպով՝ հեռու մեր գիւղի «խէր ու շառից»։ Մեր գիւղացիները ամենքն էլ քաշւում էին նրանից, և նա մեր ժողովրդի ամեն խաւերում պատկառանքով տեղ ունէր բռնած։ Նա այն աներես դայլթականներից չէր, որոնք ստէպ-ստէպ յուսահատեցնում էին տէր Սիմէօնին։ Ոչոք նրա լռութեան, տրտմութեան պատճառը չէր իմանում, և ամենքը կարծում էին, որ այդ բանը առաջ է եկել հէնց այն ժամանակից, երբ երկրից գաղթելու միջոցին նանապարհին քրդերը սպանում են թէ նրա կնոջը և թէ միւնուճար որդուն, Ծաղկայ ամուսնուն, և այդ պատճառով թոռան անունը Ումրշատ է դրել, որ գոնէ դրա «ումրը» շատ լինի։

Եւ այդ մարդը Բուլանխցի Ցունօն էր։

— Իղուր է, իզուր, տէր հայր, քո կասկածը, նկատեց դարձեալ Խութեցի Ցոլնանը։

— Ո՛չ, ո՛չ, օրհնած, գեալման ու բայդուշը մէկ են, մէկ, ինձ չե՛ս կարող համոզել, չե՛ս...

— Ձեր դուռը բլի, ծեր,—յանկարծ նչաց Ցունօն, որը ուղիղ աէրտէրի աչքերին նայելով, շարունակեց,—խրշմը մդնից չէ, չէ. մենք չ'ինք ընդոր պատճառը, յո՞րի վրը մրդի կ'բաք, բացէք վրը ծդի, օր ծուռ ճամպով ուսուցիք ծեր ըռեաթը։ Ըսինք, թէ յուպա մենք ինք գիւնաքեար, բա՞ էն քամբախ, էն աւեր էրկիրը ո՞ընա մեպաւոր. էլի մէ՞նք, հա՞։ Ի՞նչա, մենք մրր աչքը քեօռ կ'ուղինք։ Ձէ՞ էլի մրր վէրան վաթան ծեր ջուռէքն էին, օր մդի ջարդեցին-բրդեցին։ Ընդոնք լէ զբդի պէս յուրանց աչքի դերան թողած՝ դուրիշի աչքի չօփ կ'տեսնին. աւեաարան թարս հասկցուցուն զմդի ու մդնից մրր ասպաս-մասպաս առան ու խունարհ մանճկնիր դուրս բերին մդի։ Ցօ, տէր բաբա, դու օր յուդէնէք մդնից ազնաւուրնիր կ'շինէիք, համա մրդնից դուք քօռ աղչիկ շիքիք, թէ չէ ինչի՞ պտի դու ու քու մամլաքեաթը մկայ դարդանդ քաշէք թուրքերաց։ Ընդոնց Աստուած քանի հոդի ա տուել. մէ հոդի մերնա, մէկ՝ ընդոնց. աօ՛

մղնից արուն կէ՛տայ, ըդոնցից՝ ջո՞ւր։ Մէկ օր էղիլինք, մէկ օր լէ կ՛մեռնինք, հմա թասիբով պտի մեռնինք։ Զէ թէ գախի, բէդ-ախի ցախաւէլնի չամռոտիք ու դեպմանների վրին զարկիք։ Է-կայ էս էրկիր... հարամ էղնէր դէն գալը, ի՛նչ ազիզ ունէնք, ճամ-պին թաղեցի... Մկայ յիմցար, օր դուք իք գիւնսքար մըր յու-ըդա գալուն...

Յունօյի ձայնը երերուեց. անցեալի դառնագին յիշողութիւն-ները խորտակեցին նրա հսկայական կորովը, և նա անզգայ գր-լուխը կորացրեց, իր հնամաշ չուխի փէշով սրբեց այն երկու կա-թիլ խաշոր արցունքները, որոնք լռութեամբ գլորուեցին նրա թախծալի աչքերից, որից յետոյ նա դարձեալ շարունակեց. —Տե՛ս տէր բաբա, զիդայ շաբթուց մի յէւելա, օր իրըմ բռնելա մըր սար ու ձոր, հմա ձզնից սիրա մի էրող չ՛կայ, օր էթա շհար, յիմնա, թէ ի՛նչ օրի, ի՛նչ դուլի մէջին յուրանց ազգական-բա-ր եկամները, ետ չէ առաջնորդին տեսնա, խօսա զրմէն բան Դուք զէդ չ՛էրիք, հմա ես կէ՛նիմ, ես վճռեցի էս գիշեր էթամ սաղսալամաթ տեղ հասնիմ, բալի խէր խաբար մի բերիմ...

— Մինչ բալմութիւնը խորին հետաքրքրութեամբ և ամօ-թով լսում էր նրան, նա շուռ եկաւ ու հեռացաւ նրանից։ Ամենքն էլ դիտէին Յունօյի բնաւորութիւնը, գիտէին, որ նա այս գիշեր պիտի քաղաք անցնի և մի լուր բերի իրանց։ Ժո-ղովրդի յարգանքը առաւել ևս զօրացաւ դէպի նա։ Յունօն այլևս հասարակ գեալմայ չէր նրա աչքում, այլ անձնուրացու-թեան հսկայական մի տիպար։

Ահ ու դողով լի գիշեր վրայ հասաւ։ Ամեն մարդ ժամ առաջ աճապարեց իր տունը մտնել ու փակուել այնտեղ։ Յունօն էլ նեքսև գնաց, փոքր ինչ հաց ու պանիր կերաւ առանց մի բան ասելու հարսին, որը իր Ումրշատին նոր էր քուն դրել և օրօրոցի կողքին նստած ծանր ու դաժան խոհերի տակ հալումաշ լինելով ու անպատար երերուելով, լռիկ-մնջիկ կար էր անում։

Ընթրիքը վերջացնելուց յետոյ Յունօն դարձեալ անխօս վերկացաւ, իր զէնքերը բերեց, փորձառու մի հայեացքով տնդեց նրանց, ապա իւրաքանչիւրը իր որոշ տեղում կապեց վրան, յետոյ դարձաւ դէպի Ծաղիկը։

—Ծաղիկ լաս, մկա ես կէթամ շհար. դուռ ու մուռը զպրաղ կ'փակիս ու արխալին կքնիս. ես քաւոր Ղզրօյին թամբէ էրէրիմ, օր մուղաթ եղնի մրր դուռ ու երթիսին, չուրի ես իդամ. լուսուն ինչ կայ, չ'կայ էնտեղ կիմնան, մէկ էլ դիշեր լէ կ'դառնամ, ասաց ու դուրս գնաց:

Ծաղիկը չ'խօսկան էր սկէսրարի հետ, հենց դրա համար էլ չ'կարողացաւ հարցնել նրան թէ՝ ո՞ւր, ի՞նչու համար է գնում: Երկար նա լուռ մնաց նստած, վերջապէս որ դռաց, գիշերից բաւականին անցել է, առանց հանուելու, պարկեց քնելու, չ'մոռանալով նախօրօք դուռը ամուր փակել:

Զարտուղի ճանապարհներով մերթ խորին զգուշութեամբ առաջ ընթանալով, մերթ կանգ առնելով, դեռնի վրայ պարկելով և ոտքից գլուխ լսելիք դառած ականջ դնելով այս ու այն նոյնիսկ թեթև շշուկին, շարունակեց Յունօն իր ճանապարհը մինչև հասաւ քաղաքի այգիներին մօտ: Այստեղ նա դարձեալ մարագ մտած կատուի նման պարզուեց գետնին, երկար-երկար ականջ դրեց՝ հեռուից Թուրքերին խօսելու փսփսուկի ձայներ էր ականջին դարնում. սակայն, դժբախտաբար, անկարող եղաւ մի բան որոշել այդ խօսակցութիւնից. միայն եկաւ այն եզրակացութեան, որ Թուրքերը այնտեղ խիստ հսկողութիւն էին նշանակել, ուրեմն այն տեղից քաղաք մտնելու յոյսը ապարդիւն էր: Նա նոյնպիսի զգուշութեամբ անցաւ քաղաքի միւս ծայրը, դարձեալ պահապանների հանդիպեց: Այստեղ նրանց Թիւը աւելի շատ էր, որովհետև այդ մասումն էին գտնում խանի ապարանքը: Անցաւ մի ուրիշ ծայր՝ դարձեալ պահապաններ: Վերջապէս, ուր որ գնաց, հանդիպեց պահապանների: Թուրքերը, որպէս զի արգելեն հայ գիւղերից քաղաքի հայերին օգնութեան դալը, վաղօրօք բռնել էին ամեն մի ծակ ու ծուկ: „Թֆու, փնթփնթաց Բուլանխի հսկան, - գծեր հօր դաղտը անիծուի. իմամ են փաթիլ դէորս կողմը. հմա չէ, իշու դաւկներ, ես ոռն եմ, ես ծեր դէրկթէ բաղաննէրուց լէ կ'ընցնիմ. ընծի Բուլանխցի Յուսնօ կ'ասին Յունօ...

Ասաց թէ չէ, ոտքերի չշաներն ու վարտիկը հանեց, կապեց մէջքին և մտաւ մօտակայ առուակը, որը անցնում էր քաղաքի միջով:

Այսպես նա կռացաւ, դրեթէ հաւասարուեց ջրի մակերևութին, որի բարձր եղերքները պաշտպանում էին նրան դիտող աչքերից, և այդպէս կուզէկուզ շարունակեց իր ճանապարհը մինչև հասաւ քաղաքի հայկական թաղը։ Փոքր ինչ շունչ առնելով ջրի մէջ, նա դարձեալ իրան յատուկ դգուշութեամբ նստեց առուակի եղերքին, հագաւ իր չշտերն ու վարտիկը և պատերի ստուերների մէջ կորչելով, որ նշմարողներ չլինեն, շարունակեց իր ճանապարհը։ Այսպէս քիչ առաջ անցաւ թէ չէ, մէկ էլ հեռուից տեսաւ դէպի իրան եկող մի քանի մարդկանց։ Ծտի արագութեամբ նա ցատկեց մօտակայ ծառի վրայ և կորաւ նրա սաղարթախիտ տերևների մէջ։ Այլ ևս ուրիշ ելք չկար։ Բարեբախտաբար, նրան նշմարել անկարող եղան անցնող թուրքերը։ Որքան նա ուզեց իջնել և առաջ շարժուել, անկարելի եղաւ, ամեն անգամ փողոցով անցնում էին թուրքեր և ինչ որ բաներ էին նշանակում հայերի թէ տների և թէ խանութների դռների վրայ, որ հեշտութեամբ իրանց գաղանային ծրագիրը իրագործել կարողանան և չշփոթեն նրանց թուրքերի տների հետ։ Այսպէս մինչև առաւօտ նա մնաց իր ծածկավայրում աննշմարելի։

Առաւօտեան նա փողոցում ոչ մի հայ չտեսաւ։ Նրանք մի քանի օր էր, ինչ փակուած էին իրանց տներում։ Բայց մի քանի միամիտներ հարած իւղի տեղ ընդունելով տեղական խաների և փոխդնդապետի դլխովին երաշխաւորութիւնները, դիշերհանայ գնացել էին շուկայ և խանութ էին բաց արել։ Մինչ Յունօն տեսարում էր առաջ ընթանալ դէպի յաշորդարան, յանկարծ խանների ապարանքից լսուեց չարագուշակ հրացանի որոտ - ազդանշանը և շիկացած արհիները սուլելով ու վզզալով անցաւ քաղաքի մի ծայրից միւսը. դրան իբրև պատասխան որոտաց երկրորդ հրացանը մէջիդից, որից յետոյ միաժամանակ քաղաքի հաղարաւոր անկիւններից լսուեցին բազմաթիւ հրացանների որոտումներ և գաղանացած թուրք խուժանը սկսեց շուկայում եղած մի բուռն խաղաղ հայերի կեանքը ամարդաբար կարնել, կոտորել ու այրել առանց որևէ արդելքի պատշաճաւոր իշխանութեան կողմից։ Սպանութիւնների հետ միաժամանակ սկսուեց և հայկական շուկայի ալան-թալանը և հրդեհը։

Յունոն Ֆնաց քարացած. յարձակումը այնքան անսպասելի էր նրա համար, որ նա չիմացաւ թէ՝ ինչի պիտի ձեռնարկէր։ Այդ ժամանակ նրան ուշքի բերեց Թուրք ամբոխի մոլեգին և դիւային քրքիջը, որը հարայ-հրոցով շրջապատել էր տեղական հայ հարուստներից մէկի տունը, ուր պատսպարուել էին քսանից աւելի ընտանիքներ քաղաքի հայ աղքատ խաւերից, և գերմարդկային ճիգեր էին թափում ներս խուժել և կողոպուտի ենթարկել նրա ունեցած-չունեցածը ու առևանգել այնտեղ պատսպարուած հայ հրաշագեղ օրիորդներին, որոնց հմայիչ գեղեցկութիւնը խելացնոր էր արել երիտասարդ սրիկայ Թուրքերի ուշ ու միտքը։ Տարաբախտ պատժուածների դիմադրութիւնը այնքան էլ զօրեղ չէր, այդ պատճառով եթէ օգնութեան չ'դար մի հզօր ոյժ, գռների խորտակումը անուրանալի էր։ Մինչ դժոխային ցնորքներով հարբած խուժանը „եա Ալի" էր ճչում և ուժեղացնում յարձակումը, որտեղից որ էր ոչ հեռուից, մի կիսախարխուլ շինութեան աւերակներից որոտաց հրացանը, և երկու Թուրք դետին գլորուեցին։ Ունենալով ուժեղ դիրք՝ որոտը կրկնուեց մի քանի անգամ, խլելով պաշարողների սատար շարքերից զոհեր։ Մի քանի րոպէ ևս . . . և Թուրք կատղած խուժանը իրար վրայ թափ-թափուելով դիմեց փախուստի։ Հրացանաւորը իր ծածկավայրից դեռ էլի երկար նրանց յետևից շարունակեց իր գործը, մինչև փողոցը խպտռ մաքրուեց այդ փրփրոտած ամբոխից։ „Ըհը, ձեր Թարեղնի անիծիմ, դէ'հ մի փախէք, էհ, վիրն իք ըռասա էկէ"։ Հրացանաւորը Յունոն էր, որին ամբոխի քրքիջը ուշքի բերեց, և նա դիրք մտնելով մօտակայ տան աւերակներում փրկեց պաշարուածներին անխուսափելի մահից և թերևս խայտառակութիւնից։

Մինչդեռ այդ ժամին քաղաքի շուկայում Թուրք տարրը այնպիսի չ'տեսնուած ու չ'լսած գազանութիւններ էր գործ դնում իր ճանկը ընկած դժբախտ հայերի դէմ, որի մի առ մի նկարագրելը երբեք պատիւ չէ բերում մի ազգի, որը կոչուած է տարբելու և որը կապուած է ընդհանուր մարդկութեան հետ անխզելի կապերով և նրա օգակներից մէկն է կազմում։ Նրա կատարած մոլեգին սխրագործութիւնները աննեերելի է և այն

կառավարութեանը, որի հզօր հովանու ներքոյ իրականութեան հողի վրայ են դրուել այդ արիւնռուշտ ազգի նոյնքան արիւնոտ երևակայութիւնները։ Այն ինչ մենք և մեզ հետ շատերը, որոնք լուրջ ուսումնասիրած են Թուրք ազգի հոգեբանութիւնը, կասեն, որ բաւական էր կառավարութեան մի անկեղծ սպառնական հայեացք, և հաղարաւոր Թուրք փրփրոտած ամբոխը մկան ծակը մտած կ'լինէր և երբէք երևան չէր բերիլ իր գազանային լի բռնկումներով հակումները, որին, դժբախտաբար ակնատես եղանք։ Իրանք Թուրքերն են այժմ ասում „մի կաղակի անկեղծ ներկայութիւնն էլ բաւ էր սարսափ ազդելու մերոնց վրայ, բայց այդ չ'կար։" Սակայն, ցաւօք սրտի, պէտք է ասել, որ հայի համար անցել են վաղուց այն երջանիկ ժամանակները։ Եւ այժմ նա դրեթէ տէր չէ համարում ոչ իր անձի, ոչ իր սեփականութեան և ոչ իր պատուին։

Դառնանք դէպի մեր պատմութիւնը։

Թուրք փրփրոտած և խաժամուժ ամբոխը, ինչպէս շեշտեցի, նպատակ էր դրել նախ՝ որքան հնարաւոր է, կոտորել հայ մեծամեծներին, իշխաններին և հարուստներին, ապա Թալանել նրանց ունեցածը։ Եւ այսպէս, նրանց մի ստուար վոհմակ շրջապատեց քաղաքի առաջնակարգ հայի՝ Պ. Ադամեանի խանութը։ Թուրք խաները և փոխգնդապետը ամենից առաջ այս բարեպաշտ հային էին համոզել ու երաշխաւորել, որ սա անպատճառ բաց անի իր խանութը, հաստատ իմանալով, որ նրան կ'հետևեն տասնեակ ուրիշ վաճառականներ։ Եւ իրօք այդպէս էլ եղել էր։ Այժմ էլ այս միամիտ ծերունին էր ամենից առաջ դոհ գնում նրանց դաւադրութեան։

— Քեզ ասում ենք, բաց դուռը—ճչում էր Թուրք մոլեգին ամբոխը։

— 'Իսէր Ալիին, 'ի սէր Մուհամէդին և վերջապէս 'իսէր մեզ ու ձեզ ստեղծող Աստուծին՝ ձեռք վերցրէք ինձանից. ջանմ, փող էք ուզում, ահա ձեզ փող՝ երեք հազար միայն նաղդ ունեմ, եթէ դա քիչ է, ամբողջ խանութս ձեզ կ'տամ, վէկսել կ'տամ, որ վաղը որքան ուզէք տամ, միայն Թէ խնայէք մեզ. ախր ինձանից ի՞նչ վատութիւն էք տեսել դուք, չէ՞ ձեզ համար բարեխնամ հայը եմ

եղել, — ներսից նուաղած ձայնով աղերսում էր Ադամեանը։

— Քեաւթառ շուն, ասես չ՚ասես, էդ բոլորը մերն է. ի՞նչի պիտի քեզ էդքան լինի, իսկ մեզ՝ ոչ։

— Ա՛յ դարդաշներ, ի՞օմ չ՚եմ դողացել, ճակատս քրտինքով եմ վաստակել, մ՞իթէ դուք չէք իմանում, որ կեանքումս մի ճանճ էլ կոխ տուած չ՚կամ։

— Սուս, անզգամ, — աւելի զաղանացած գոռում էր ամբոխը, դ�.ռը բաց։

— Երդուեցէք Սպիի գլխով, բաց անեմ։

— Տօ շուն, դու մեր գլխի տերը դարձար, որ երդում ես պահանջում. քեզ բան չ՚ենք անում, մեզ փէսէդ Ցովսէփն է պէտք, Թանդիօվն օղլի։

— Իսէր Ալահի, ինձ սպանէք, նրան՝ ոչ. նա ջահել է, կին-երեխաներ ունի,-աղերսում էր դառնագին ձայնով Ադամեանը։

— Տօ քեօպակ, մեզ հենց ջահիլներն են պէտք. կնոջ համար դարդ մի արա. նրան տանելու ենք, մեզ հենց էնպիսի խանմերն են պէտք։

— Ա՛յ ամօղլիներ, որ էդպէս է, չ՚եմ բաց անիլ, սուած ծարաւ էստեղ կ՚մեռնեմ և ձեր ձեռքը չեմ ընկնիլ։

— Հա՞, լաւ . . . ճչաց խուժանը, հաչի, — դիմեց նա իրանց ղեկավարին — այրենք խանութը։

„Այրել“ բառը մի սոսկում յառաջ բերեց թշուառ պաշարուածների վրայ, և նրանք փոքր ինչ յետոյ եկան այն եզրակացութեան, որ կամայ-ակամայ պիտի դուռը բաց անեն, այլ պատճառով Ադամեանը շարունակեց։

— Ա՛յ քիրվաներ, մ՞իթէ դուք իմ աղ ու հացը չ՚էք կերել, ի՞նչու էք էդպէս անում. խոստացէք մեզ ազատ թողնել, ես դուռը բաց անեմ, մանաւանդ, որ Ցովսէփը էստեղ չէ, -Ցովսէփին նա ուղեց պահել տախտակների տակ, ենթադրելով, որ քաղցած խուժանը ապրանքի վրայ կ՚պրծնի և ձեռք չի տալ տախտակներին, իսկ Ցովսէփը կ՚ազատուի և գիշերը տուն կ՚փախչի։

— Խոստանում ենք, դէհ, բաց,-աղաղակեց ամբոխը։

— Հայրիկ, մի՛ բաց, կ՚խաբեն, ես էդ խարդախ շների հոգին վաղուց եմ փորձել, —նկատեց Ցովսէփը։

— Ա՜խ, ծեր ազուէս, բա էլ ո՞ւմ փափաղն է, ճչաց հաին, —ա՛յ տղերք, նաւթ ածէք գրան վրայ։

— Զէ, Հաչի, լաւ կ'լինի չարդենք դուռը լծով — ասաց միւսը։

— Դէ՛հ, լաւ... համաձայնեց Հաչին։

Սկսեցին դուռը չարդել։ Դժբախտ Ադամեանը սրտաստուքը աչքերին սկսեց աղօթել. սակայն Յովսէփը բոպէական լռութիւնից յետոյ ձեռքը գրպանը տարաւ և իր ատրճանակը դուրս բերեց. „պիտի մեռնեմ մարդասպանի մահով. իմ նախնիքը՝ Սիւնեաց քաջերը, ամեն անգամ այդպէս են դիմաւորել մահին և այդպիսի մահով կնքել իրանց վախճանը,“ — ասաց ու խանութի փոքրիկ լուսամուտից պարպեց ատրճանակը դէպի ամբոխը։ „Վա՜յ վո՜ւյ,“ — աղմկուեց խուժանը և վայրկենաբար ցաք ու ցրիւ եկաւ ու սկսեց փախչել,—ա՜յ, քո լիրը հաւատն անիծուի՝ Հաչուն սպանեց, Ալաքպարն էլ վիրաւորուել է. աւ, անամօթներ, ո՞ւր էք փախչում, սրանից յետոյ մի՞թէ դրանց պիտի սաղ թողնել, — կշտամբեց ամբոխին Մաշադին։ Խուժանը դարձեալ խռնուեց դռան մօտ և սկսեց չարդել դուռը։ Ներսից ատրճանակը դարձեալ որոտաց, դարձեալ հարուածը անշեղ էր։ Երկու ժամ այդպէս շարունակուեց անընդհատ կռիւը։ Բայց աւա՜ղ, Յովսէփի փամփուշտները վերջացաւ։ Այս անգամ նա խանութի ահագին մուրճը ձեռքն առաւ և կանգնեց դրան մօտ։ Մի քանի բոպէից յետոյ դուռը խորտակուեց և կատաղած ամբոխը ներս թափուեց։ Առաջին մտնողը գոհ գնաց մուրճի շեշտակի հարուածին։ Երկրորդը՝ նոյնպէս, երրորդը՝ նոյնպէս։ Տեսնելով բանն ինչումն է, խուժանը գրոհ տուեց և միանգամայն նեքսև խուժեց։ Դժբախտ երիտասարդը ընկաւ այդ անհաւասար կռուում. ընկան և միւս երկու-երեք պրիկաշչիկները։ Ադամեանին դեռ չէին սպանել։ Բոլորից յետոյ նրան խանութի մէջ տեղը բերին։

—Քեզ, ինչպէս խոստացել ենք, չենք սպանելու, եթէ միայն մեր պահանջը կատարես,նկատեց Մաշադին։

Ադամեանը լուռ էր։

—Ի՞նչու չես խօսում, կրկնեց իւր հարցը Մաշադին։

Դարձեալ նա լուռ մնաց։

— Ի՞նչու չես խօսում, դեռ լեզուդ չենք կտրել։

— Ախր էլ ինչ խօսեմ, ինչ ուղում էք արէք, մրմնջաց Ադամեանը, որին հետզհետէ սկսեց խօսեցնել Մաշադին։

— Մի վախիր, ոչինչ չենք անի, եթէ մեր պահանջը կատարես, որը ոչ թէ մեր պահանջն է, այլ մեր խանի։

— Ինչ է, ինձ համար այսուհետև բոլորը մէկ է. մեռնելը լաւ է։

— Սուս, հերիք է դուրս տաս. դու մի նամակ գրիր կնոջդ, որ նա վերցնի իր հետ իր երեխաներին, աղջիկներին և մեզ հետ գնայ խանի տունը. խանին միայն քո մարտ աղջիկդ է պէտք, իսկ մնացածներին անփորձ և անվտանգ կ'պահենք. քեզ էլ՝ նամակ գրելուց յետոյ կ'տանենք դարձեալ խանի տուն, ծերոնց մօտ։

Ադամեանի տունը լինելով հայկական մասում, թուրքերը չէին կարող ապաշկարայ յարձակուել նրա վրայ, որպէս զի նրա գեղանի աղջկանը կորզէին, այլ դիմել էին այս միջոցին։

— Սրիկայ Մաշադի, եթէ մաս-մաս կոտորելու էլ լինէք, նկատեց հաստատամիտ ձայնով Ադամեանը,—ես այսքանից յետոյ չեմ ցանկանայ, որ իմ ապականուած շունս էլ կեանք գրտնի այդ խանի յարկի տակին։ Ես նզովում եմ մարդկային նզովքի անհուն դառնութեամբ և զզուանքով այդ խանի աղ ու հացը, որ պատճառ դարձաւ այսքան անմեղ արիւնների։ Ես քրիստոնէական անշեղ հաւատով զուշակում եմ, որ կգայ մի օր, մի ժամանակ, երբ նա իր պատճառած այս ծով արիւն-արտասուքի պատճառով պատասխան կրտայ երկնքի արդարադատութեան և իր արժանի պատիժը կ'ստանայ. այժմ այս քամբաղդ աշխարհում, այս խարդախ, այս նենգամիտ լուսնի տակին, նրա համար պատիժ չկայ. նա ազատ է իր սխրագործութիւնների մէջ. նա կատարում է այն, ինչ նրան թելադրում են, ինչ նրան հրամայում են... նրա ձայնը բերանում մնաց՝ դաշոյնի անխնայ հարուածը բոպէաբար գետին թաւալեց նրան։ Մահը վայրկենական էր։

Սրա վիճակին ենթարկուեցին եղբ. Խալաթեանները, որոնց խանութները կողոպտելուց յետոյ դիակները այրեցին։ Այս-

պէս այդ օրը քաղաքում 50—56 անմեղներ և ամբողջ հայկական շուկան զոհ գնացին Թուրքերի գազանութիւններին։

Հետևեալ օրը խանի մունետիկները կայծակի արագութեամբ թռան շրջակայքի Թրքական գիւղերը աւելի խաւարամիտ Թուրք գեղջուկին ոտքի կանգնեցնելու, որից յետոյ սկսուեց հայկական գիւղերի ջարդը, ալան-Թալանը սոսկալի հրդեհներով և եկեղեցիների սրբապղծութիւններով, որոնք ժամանակին մանրամասն լոյս են տեսել մեր պարբերական մամուլի էջերում։

Ցունոն տեսնելով քաղաքի բարբարոսական ջարդը, անհամբեր սպասում էր գիշերուան, որ կարողանայ մի կերպ իրան դրցել իրանց գիւղը։

III

Գիշերային մթաշաղ խաւարը մերթ-մերթ փոփոխում էր իր սրտամաշ երեսը և լուսաւոր տեսք ստանում. երբեմն էլ այնքան էր Թանձրանում, այնքան վհատեցուցիչ դառնում, որ կամայ-ակամայ ամբողջ էութեամբ փշաքաղւում էիր ու սոսկումների, երերումների դիրկը ընկնում։ Գիշերուայ այդ տագնապալից պահուն ոչ Թէ ծաղիկի նման սև դարդով լի պանդուխտ կանայք, այլ նոյն իսկ ամենահամարձակներն էլ չէին սիրտ անում դուրս մնալ և մանրաղնին հետաքրքրութեամբ ուշքի առնել Թէ՝ ինչ է կատարւում իրանց շուրջը և կամ դեռ ինչ է կատարուելու։ Վաղուց, շատ վաղուց նախազգուշութեան ցանկալի ոգին մրափել, մեռել էր մեր Թշուառ գեղջուկի գիտակցութեան մէջ, և նա իր սեւաւոր ճակատագիրը, բաղդը գիտակից աչքերով տեսնելու, որոշ հիմքերի վրայ դրնելու ընդունակութիւնից զրկուել էր։ Պէտք էր մի ուժեղ հարուած, մի ուժեղ ցնցում, որ նա իր բնածին ինքնուրոյն Թափով ոտքի կանգնէր և իր սարեգրուած բաղդի ղեկը իր ձեռքը առնէր և ըստ այնմ չափէր ու ծնէր իր հալածուած կամքը, իր բռնադատուած, ոտքի տակ տրուած և անսասան անդգայութեամբ ցեխերի մէջ շաղախուած դարաւոր իրա-

ւունքը։ Եւ այժմ զանազան մթին ու չարոգի ինտրիգանների ստոր դաւադրութեամբ պատրաստուել էր այդ սնխնայ, այդ անսիրտ հարուածը, որը միանգամայն սթափեցրեց թէ մեր բրոնակալ հակառակորդներին և թէ մեզ, որ հայ ազգը այնքան էլ հեշտ կուլ տալու պատառ չէ։ Դարեր էին կռել-կոփել այն տարաբաղդ ազգի ճկուն և դիմացկունութեան ոգին, որը այն սև ու մութ դարերի ընթացքում անցել էր մարդկային ոյժից բարձր հալածանքի բովից և ճաշակել էր արիւն-արցունքով լի բաժակի դառնութեան լեղին։ Պէտք էր պահուած մոխրի կոյտերի տակից դուրս բերել ազգային ինքնագիտակցութեան դաբերով սրբագործուած ոգին, որի համար քիչ եղան մեր ճառերն ու քարոզները, և այն արեց մեր ստորաքարշ ոսոխը։

Եւ այսպէս, ահեղ փոթորիկը դիզուել էր համայն հայութեան գլխին, որին, աներկբայ եմ, գիտակից էր և կառավարութիւնը։ Միայն ինքը, տարաբաղդ հայութիւնն էր անտեղեակ, միայն նա էր վստահ, որ թաթարական, Լէնկ-թիմուրական արշաւանքները ու պան-թալանը անդարձ կորել էին։

Սակայն այսպէս չէր դժբաղդ Ծաղիկը։ Նա ասես զգում էր, որ օգում մի ինչ որ արտասովոր իրարանցում է տիրում. լսւում են հապար ու մի շշուկներ, փսփսուկներ, լռիկ-մնջիկ պատրաստութիւններ, և այդ բոլորից նրա անարատ, նրա չքնաղ, բայց դարդով լի սիրտը փշաքաղւում էր ու տակն ու վրայ լինում։ Նա այն վէրան վաթանում շատ էր նման արիւնալի տեսարանների ականատես եղել. շատ էր նրա կարմիր հորիզոնում վիրաւորանքների ենթարկուել նրա կանացի թոյլ ու նազանքով լի սիրտը. շատ էր նա արիւն արտասուք քամել իւր սեւորակ աչերից և այժմ նա, ասացի, փշաքաղւում էր, երբ զգում էր, որ միևնոյն ծով, միևնոյն սնտակ վիշտը, ցաւոտ իրականութիւնը պիտի կրկնուէր և այստեղ։ Էլ ի՞նչու թողեցին հայրենի այն նուիրական վայրերը, էլ ի՞նչու անարգուած անտէրութեան մատնեցին հայրենի երկրի դարաւոր օջախը, երբ այստեղ էլ մի հզօր քրիստոնեայ գահակալի նոյնքան հզօր հովանու տակ պիտի նոյն արիւնը, նոյն ցաւ ու տանջանքը, վիշտ ու տառապանքը և պատուի անարգանքը կրկնուէին։ Այսպիսի պարադաներում անհատի սիրտը լցւում է աննկարագրելի մի դառնութեամբ և կամաց-կամաց փնտռում է իր նման մէկին, որ-

զէսզի բաժանի նրա հետ իր չարքաշ մտատանջութիւնները։ Բայց մի՞թէ գիշերուայ այն պահուն այդ բաղդից հալածուածը կարող էր իր նման մէկին գտնել ու խօսել նրա հետ։ Եւ մենակութիւնը ճնշող էր ու սոսկալի։ Յաճախ լինում էին նոյն իսկ այնպիսի րոպէներ, որ նա ախ ու վախով էր նայում իր շուրջը։ Վերջապէս, սարսափով լցուած մօրը այդ անել դրութիւնից, այդ տաղտկալի անհարութիւնից դուրս բերեց նրա Ումրշատը. նա զարթնեց, ծիծ էր ուզում։ Սիրելի զաւակի քաղցրիկ ճիչը ցրեց մօր ուղեղից այն սև մշուշը, որի տակ նա տանջւում էր։ Նա ամեն բան մոռացաւ և սկսեց գուրել դուրգուրել իր սիրուն զաւակին և ծիծ տալ։ Ծիծ ուտելուց յետոյ, նա չքնեց, խեղճ մայրն էլ հէնց այդ էր ուզում. նա իսկոյն հագցրեց իր աննման զաւակի շորերը և սկսեց զբաղուել նրանով։ Որդու իւրաքանչիւր ճիչը, ուրախ ծիծաղը որքան ուրախութիւն էր սփռում դարդոտ մօր սրտի վրայ, նոյնքան աւելի ցաւ էր պատճառում նրան. չէ՞ որ որդու ներկայութիւնը յիշեցնում էր նրան իր թառլան, իր բէմուրաղ ամուսնուն, որին նա հայրենի երկրի նահապետական պարզ սիրով սիրել ու առել էր։ Այո՛, այդ որդին շատ բան էր դժբաղդ մօր համար։ երբ նրան տեսնում էր, ասացի, որ նրա կրակոտ յիշողութեան մէջ պատկերանում էր իր սրտի պաշտած «եարը» իր առնական տեսքով, որի հետ և շաղկապուած էր նրա անուշ հոգ ու ջուրը, հայրենի դրախտանման սար ու ձորը, իրանց հմայիչ, իրանց աննման երկինք-դետինով. մի խօսքով, նրա ներկայութիւնը յիշեցնում էր նրա սգով լի արիւնով տուն-տեղը՝ Բուլանխը։ Էլ ի՞նչ կայ անհատի համար այնքան պաշտելի, քան սիրած «եարը» և հայրենի-երկիրը։ Եւ այն երկու բարոյական բարձր զգացմունքների ներկայութիւնը նա տեսնում էր իր փոքրիկ Ումրշատի մէջ։ Զկար այժմ իր բէդի նման կորած «եարը», չկար և իւր սեւաւոր Վասթանը։ Զէ՞ որ ամեն անգամ երբ նա յիշում էր Բուլանխը, անցած կեանքի նուիրական պատկերների մի անսպասելի օղակ շարան-շարան գալիս էին ու անցնում նրա վարվռուն երևակայութեան մէջ։ Էլ ի՞նչեր չէր տեսնում այդտեղ թշուառ կինը, անդարդ անմեղ իր մանկութիւնը, երբ ինքը դառների

յետևին սիզուէտ, հաղար ու մի բուրմունքով լի ծփացող հովիտն էր աճապարում ու թռչում-թռչկոտում նրանց յետևից, տպա խմբական խաղեր սարքում իր ընկերուհիների հետ։

Որքան քաղցր ժամեր էին դրանք...

Կամ, երբ կուժն ուսին, ինքը ջրի էր գնում, հաւատացած լինելով, որ «նրան» անպատճառ աղբիւրի գլխին մարաղ մտած կըտեսնի. էլ ի՞նչ հոգեկան խորունկ բերկրութեան հովերով չէր բուրում չէր համակւում նրա կուսական չքնաղ սիրտը և կամ ի՞նչ գերադոյն կրակով չէր տապակւում, չէր այրում-խորովւում նրա նաղելի էութիւնը... Ա՜խ, որքա՜ն երջանիկ ժամեր էին... Եւ կամ Բուլանխի այն նահապետական հարսանիքը, երբ ինքը զուգուած, զարդարուած Գեօնդի մէջ պարում էր ու աչքի տակով թամաշ անում, թէ «նա» ի՞նչպէս է ջրինդ տալիս, գլուխ-կօնծի կանգնում ծիսի վրայ և այդ բոլորը դարձեալ իր սիրու համար։

Այժմ ո՞ւր են այն բոլորը...

Անցեալի նուիրական պատկերները որքան էլ գողտրիկ օրօրներով ու շնչով են բուրում, դարձեալ նրանք մի ինքնուրոյն հիասթափութեան ու դառնութեան են մատնում անհատին, երբ նա յիշում է այդ բոլորը։

Այսպէս էր և Ծաղիկը։ Նա տխրեց և թախծոտ լի մաղծը իր խռովայոյզ նաւի վրայ նրան շատ հեռու տարաւ, ուր նրա սիրտը իր ամբողջ էութեամբ ալէկոծւում էր և մրրկածուփ շառաչիւն արձակում։ Եւ նա ակամայից սկսեց դնչնալ Բուլանխի իր մանկութեան երգերից.

Երկինքն ամպելա ամպով,
Եարիս թաղել եմ ճամբով,
Զմեռայ քեզի յապով,
Ումրո, լուրիկ, գառմ լուրիկ...

Ումրշադը ակնապիշ եղած ասես հասկանում էր բառ առ բառ մօր երգը։ Տեսնելով Ումրշադի այդ դրութիւնը, Ծաղիկը մէկ խօսում էր որդու հետ, մէկ իր երգն էր երգում։

«Բա՛, Ումրո ջան, իմ ումր ու արևը քզի յապովա, լաս, իմ խոգի»։

Որդին ծիծաղեց։
Մայրը շարունակեց,
Բուլանխ ծուխ ու մուխ էր.
Իմ սիրածը շատ թուխ էր.
Ափսոս, մահը կանուխ էր...
Ումրո լորիկ, ջանմ լուրիկ...
Ընկայ չօլէչօլ սէյրան,
Պատռեցի հագիս դէյրան
Ես ու էն քզի հէյրան,
Ումրո լուրիկ, դառմ լուրիկ, ջանմ լուրիկ...

«Ախ, լաո, Ումրո ջան, հա, հա, բալայ, ես ու էն, էն սևաբաղդ հէրդ, քզի ղուրբան, քզի հէյրան։ Օր դու չիղնէր, ես մկայ շուտուց էնք մեռել»։

Որդին լուռ էր, թուում էր, թէ նա ղղում էր դժբաղդ մօր հոգեկան դրութիւնը և թախծոտ աչքերով նայում էր նրան։

«Ա՜յ, էն ջանիդ մեռնիմ, կ'սիս թէ կրխասկնայ, թէ ինչ կսիմ»։

Ումրո, լաո, ջօջացիր,
Մօրդ դարդեր հասկրցիր,
Սրտիս եարէն իմացիր,
Դարդիս դարման, լաո, ցաւիս դարման, Ումրո, լուրիկ...

Դժբաղդ այրին սկսեց հեկեկալ. արտասուքը լռութեամբ գլորում էր նրա սևորակ աչքերից, որոնց պղտոր տեսքը արտայայտում էր նրա հոգու անհուն տագնապը և խռով դրութիւնը։ Այդ բոպէին նրա փոքրիկը յիշեցնում էր նրան շատ բան, հետևապէս և նա դառնութեամբ լցուած, իր ալեծուփ նաւի վրայ գնում էր հեռու, շատ հեռու։ Սակայն այն անորոշ դրութիւնը տևողական չէր, հէնց այդ որդու իւրաքանչիւր հայեացքը, շարժուածքը լցնում էր նրա սիրտը անսահման բերկրութեամբ, ուր նա տեսնում էր իր միակ մխիթարութիւնը։ Նա սիրող մայր էր։ Նա կռացաւ, ջերմագին շրթունքներով համբուրեց որդուն, ապա շարունակեց իր երգը, իր լուրիկը.

Էրնէկ, լաո, էն օրուան,
Քեզի բերի մեր Թովլան,

Ուտեցուցի տաք շորուան
Ումրօ, լուրիկ, գառօ, լուրիկ...
Ի՞նչ եղան էն օրեր՝
Սրախս սաւդէնա կորել,
Սիրտս էրիր սև հորել.
Ումրօ, լուրիկ, ջանօ լուրիկ...
Ե՞րբ կիդայ էն դարուն,
Էլիկս սեսնիմ անարուն,
Ծաղկով ծաղկած դալարուն,
Ումրօ, լուրիկ, գառմ լուրիկ...

Ցանկարծ հարիւրաւոր հրացանների որոտը ընդհատեց թշուառ կնոջ ձայնը, և նա սարսափահար եղած՝ ոտքի թռաւ և որդուն ամուր գրկած՝ շանթահար եղածի նման մի քանի բոպէ մնաց անշարժ կանգնած։ Հրացանները շարունակեցին անընդհատ որոտալ, և հազարաւոր գոռում-գոչիւնների, լաց ու աղաղակի ձայները թնդացրին օդը իրանց դառնադին սուգ ու շիւանով։

Մէկը ճչում էր. «վա՜յ, էրեցին». միւսը «վա՜յ, վա՜յ, աղջկաս տարան». երրորդը՝ «աման, մի՛ մորթէք, մի՛ սպանէք»։ Այդ ընդհանուր խառնաշփոթութեան մէջ մերթ-մերթ լսւում էր թրքական խաւար ամբոխի ոգևորիչ աղաղակը՝ «Եա Ալիի...» Վերջին բաղմաձայն կոչը ասես պարզեց Ծաղկան թէ՝ բանը ինչումն է, և նա իւր Ումրշադին ամուր կպցրած կրծքից դուրս թռաւ, որ ինչպէս և լինի իրան հասցնէ քաւոր Ղզրօյենց տունը։

Դեռ նա բաղի դռան չհասած՝ «բում», լսուեց հրացանի որոտը, և տարաբաղդ կինը, ստանալով մահացու վէրք գլխից, վայրկենաբար փռուեց գետին։ Փոքրիկ Ումրշադը մի սուր ճիչ արձակեց ու լռեց. նա ամուր բռնել էր մօր պարանոցը և պոկ չէր գալիս...

Փոքր ինչ յետոյ, ողջ գիւղը հրդեհի մէջ էր։ Բնակիչները, որը սպանուեց, որը փակուած մնալով իր սեաւոր յարկի տակին՝ կրակի ճարակ դարձաւ, որը մի կերպ փախաւ և ապաստան գտաւ մեր հարևան բաղմամարդ հայ Շ... գիւղում, որից յետոյ ալան-թալանը իր սոսկալի գոյնով շարունակուեց։

Մի քանի ժամից յետոյ, այդ շէն գիւղը ներկայացնում էր աւերակների և կրակի մի ահռելի կոյտ։

Կեանք ասած բանը այլևս գոյութիւն չունէր այնտեղ։

IV.

Մարդկային անիրաւութիւններով յղփացած լուսինը մերթակի դուրս էր բերում իր վախլուկ երեսը խոժոռած սև-սև թուղպերի շերտերի արանքից, անփոյթ աչքերով դիտում այն ամէն չարիքը և արիւնոտ պատկերները, որոնք անխնայ բռնել էին մեր սար ու դաշտը, ապա նոյնքան ցաւոտ ցոլքերով խորասուզում ամպերի թանձրութեան մէջ, որից յետոյ դարձեալ անվերծանելի աղջամուղջը իր գիրկն էր առնում մեր տնքացող, մեր արիւնլուայ սար ու ձորը։ Ոչ մի ծայն, ոչ մի ծպտուն չէր խանդարում խաւարի դաժան իշխանութիւնը, որը ասես ծրդտում էր աննշմարելի պահել զթոտ հայեացքից մարդկային եղեռնագործութիւնների այդ չարաշուք տեսարանները։ Բայց և այնպէս, եթէ անցնէինք դէպի մեր քաղաքը տանող խորդ ու բորդ ճանապարհը, անշուշտ կարող կըլինէինք նկատել, որ այնտեղ մի մարդ խորունկ վշտի խոցերով լցուած՝ պաշտպանելով տանջանքների և հազար ու մի փորձութիւնների մէջ ելփուած մարդի անվիճելի զգուշութիւններ, լուռ շարունակում էր ճանապարհը դէպի մեր գիւղը։ Որքան նա մերձենում էր մեր գիւղին, այնքան նրա դէմքը ծածկւում էր դարձլու մարդի ցաւոտ կնճիռներով։ Ահա՛ նա մօտեցաւ գիւղի կալերին, որոնք գիւղերում յաճախ ընկած են լինում ծայրերից էլ գրեթէ փոքր ինչ հեռու, և յանկարծ շանթահար եղածի նման կանգնեց. մի ինչ որ մանկան ծայն գիշերուայ այդ պահուն աւելի քան դրաւեց նրա ուշադրութիւնը։

Գիւղի ընդհանուր տեսքը, որը տակաւին ծխում էր կրակի մէջ, այնքան երերող ցնցումներ յառաջ չբերեց նրա կրծքում, որքան այդ ծայնը։ Ծխացող գիւղի և այդ մանկան դառնագին ճիչը տարբեր տեղեր ունէին բռնած նրա ապառաժ կրծքում։

Մանկան ճիչը կրում էր իր մէջ այն նուիրական զգայմունքը, որը յատուկ է հարազատ սրտերին. իսկ գիւղի սևացած, խանձուած ու հրդեհուած պատկերը բորբոքում էր նրա վառ հայրենասիրութիւնը և վրէժ պահանջում։

Որքան վերջինն էր ալէկոծում նրա ողջ էութիւնը և խրո

այն կարմիր հեղուկը, որ ծոր-ծոր թափուում էր նրա վերքերից։

Անծանօթը քար կորածի նման տեսաւ այդ ամէնը, ապա յանկարծ նրա լեզուի կապանքները արձակուեցին, և նա «Ծաղ, լաւ» ճչաց ու ընկաւ դժբաղդ դիակի վրայ։

Սարսափահար եղած մանուկը վայրկենաբար դադարեց լաց լինելուց և սնդղող աչքերով ոտից մինչև գլուխը նայեց անծանօթին։ Նա ճանաչեց իր թշուառ պապին և նրա պարանոցովը փարուեց «պա», «բի», «հու» մռմռալով։

Ուշաթափուած պապին ուշքի եկաւ, հարազատի քնքշութեամբ գրկեց իր մատաղ թոռան և երկար-երկար համբուրեց նրա երեսը. սակայն յանկարծ զարհուրածի նման մնաց ապշած՝ նա իր աչքերին չէր հաւատում. մանկան, իր սիրելի Ումրոյի քիթ ու պռ.օշը ողջ արեան մէջ էր։ Նա փոքր ինչ մանրազրնին նայելուց յետոյ համոզուեց, որ թոռը վիրաւորուած չէ. բայց երբ տեսաւ խեղճուկ Ծաղկայ կուրծքը, իր ամբողջ էութեամբ սարսեց, նրա ծծերի պտուկները կարած էին, որից տակաւին թափուում էր կարմիր արիւն, որը քիչ առաջ ծծում էր անբաղդ մանուկը, որից և կարմրել էր նրա դէմքը։

Զայրոյթի դառն կրակով լցուած՝ այդ եղկելի պապին թոռան դէպի երկինք բարձրացրեց և մի խորհրդաւոր ու մի հառաչող ձայնով աղաղակեց.

«Երկինք, քար, կռապաշտ, ապստամբ երկինք, էլ ի՞նչի սաղ կրմնաս, չ՛ես փլիլ. ի՞նչես տուիլ զիս, չ՛ես կռնաս առնիս։ Էնտեղ, էն վերան երկիր դու արուն ու վարամ կերցուցիր մդի, փախանք, օր պրծնինք քու արնխում ճանկերուց, հմա էլի չարայ չ՛եղաւ։ Երկինք անիրաւ երկինք, կորսուցինք թագ, պսակ, կորսուցինք տուն-տեղ, կնիկ-ճիժ, արուն-աղրաբայ, մէկ գլուխ դնելու տեղ լէ խիանաթ կէնիս։ Մըր ուտածն ա արուն, մեր խագածը՝ սև, մըր կողինքը չոր գետին, էլ ի՞նչ կուզիս, դա հրլա բոլ չեղաւ, անգութ, անխիղճ երկինք»...

Յետոյ ոտքի ելաւ, ման եկաւ աւերուած տան շուրջը, գտաւ բահը, բագի պատի տակին մի խոր փոս փորեց, ուր և դրեց սեւաբաղդ Ծաղկայ մարմինը, ապա Ումրոյին կռացրեց

մօր կրծքին ու նկատեց նրան այնպէս, որպէս թէ նա բան է հասկանում.

«Տե՛ս, լաւ, դքու մօր պառկները անօրէնները կարած տարած են յուրանց ջօջերուն շանց տալու խմար. թրխ ես Բուլանխցի Յունան չեղնիմ, որ մէկին տաս հայիվս չհանիմ. էն վախտ տե՛ս քզի ինչ կիտամ փէշքաշ։ Դու էլ ուխտ էրա, լաչ, թէ իմ թոռնիս»... Ասեց և թաղեց հարսի մարմինը։ Յետոյ շալակեց թոռան ու ընկաւ ճանապարհ։

Հետևեալ առաւօտ նա Սահունու մօտ էր։

«Տես, պ. Սահունի[1]), իդա զիմ թոռնա, շները զիտոր մօրը սպանածին, պառկներ լէ կտրած տարածին իրանց ջօջերուն փէշքէշ։ Դու զիտոր պտի պահիս, խնամիս, չուրի ես քէնս առնիմ։ Թէ կրմեռնիմ, թէ զիս կսպանին, դու էղնիս քու ճրժերու արև-Աստուածը, զիտոր պտի ջօջրցուս ուրսիս թէ՝ ինչի մեռայ։ Ես կորած, ցրուած ընկերներ ունիմ, պտի գտնիմ ու էլման մըր յառջուայ փէշաք բանցունք։ Մէկն օր՝ Դարբինից Սահրատը[2]) յուդա եա։ Մնացածին լէ կրգտնիմ»...

Ասաց, թոռան համբուրեց ու դուրս եկաւ։

V.

Անցաւ վեց ամիս։

Սիւնեաց լեռների մէկի գագաթին հանգստանում էին մի խումբ մարդիկ, որոնք բոլորն էլ սպառազինուած էին և խորունկ հեռաբրքրութեամբ յառել էին իրանց հայեացքը դէպի Գ. տանող ճանապարհը, ուր հաղիւ-հաղ նշմարւում էր մի հատիկ ճանապարհորդ, որը դէպի լերան գագաթը, դէպի խումբն էր ընթանում։

— Տղէրք, եկողը կասես Մկօն լինի։

— Չէ, Սահրատ, Մկօն զիդայ տեղրանք ի՞նչ կշինա, ես զէնոր թոդուցի էրկիրը։

---

1) 2) Տես իմ յօդ. 1906 թ. «Լումայի» մէջ։

— Մկոն է, Յունս, թէև դու շատ անդամ պարծենում ես քո բոլանխցու հեռատեսութեամբ, բայց ես հաստատ քեզ ասում եմ, որ Մկոն է,—նկատեց Սահրատը։

— Ենի, ի՛նչ ըսիմ, դրուստ կրսիս թէ՝ Մկոն եղնի.

Մինչ սրանք այսպէս խօսում էին, ճանապարհորդը մօտեցաւ նրանց այնքան, որ բոլորն էլ ճանաչեցին իրանց նախկին ընկերին, և նստողներից մէկը վազեց ընդառաջ՝ աւելի շուտ գրկելու իր հայրենակցին։

— Տօ, բարև, Մկո,—ասաց նա,—երկրէն կուգա՞ս։

— Խա վայլա, օղորմի քեզ խէր։

— Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, Մկո, դրուստ՝ մրը ջոջ եղ կրմնա՞յ։

— Խատաւ։

— Ցօ՞րի։

— Քեար կրքաշին վրը քո պապուն, քեար ոտ կոտրեց, խատաւ։

— Եա՜, դիմ պապ մեռա՞ւ։

— Վեց շաբաթ ինչ, քեզ խէր։

— Եա՜, դիմ խէրն էլ մեռա՞ւ։

— Յետպա քեզ մօր կսկիծ դինոր սպանեց։

— Եա՜, դիմ մէրն էլ մեռա՞ւ։

— Երկու շաբաթ, ինչ քեռ աղբրտիք։

— Տօ, ապրբտինքս էլ մեռա՞ն, ասայ իմ տուն ակօլաւ։

— Ակօլաւ չրմ գինայ, Սրբ Կարապետ, ի՛նչ կրսիս, համա ես գալուն ծեր տան տեղ կանափի արտեր...

— Տօ հէրիք է դպտարկաբանութեամբ պարապէք. դրանք թազա խաբարներ չեն արիւնոտ երկրից. թող Մկոն գա՛, տեսնենք ի՛նչ հալի է,—նկատեց Սահրատը։

Մկոն եկաւ և բոլոր ընկերներին բարևելուց յետոյ, յայտնեց նրանց իր ուրախութիւնը, որ լաւ ժամանակ է հասել։

— Տօ՛ աղբէր, ըսի մրը քամբախ էրկիրը դժոխքա, կորիմ ըռատ էղնիմ. հմա հոս դհա դէշա դարծել։ Ցէրիկ հասայ Սահունու մօտ, էն գիս հասկցուց ծեր ո՛ւր էղնելը, ես լէ ճամպա ընկայ։ Մկայ փա՞ռք Աստու, յօր գտայ զծզի սաղսալամաթ։

— Զէ, չէ ուշ էպ հասել Մկո,—նկատեց նրան Սահրատը։

— Ինչ որ սա, Սահրատ, լաւ վախտա էկել, կրսիս Աստուած ճամպած էղնի՝ զիդա շաբաթ մի կեղնի, ցեղը մտերա զիս, կսիս թէ կրբրդա՛յ, թէ՝ «գնա՛ Ումրոյիդ տես»։ Սրբ Կարապի լաւ վախտ ա հասել՝ էդ թր՛ղ Ֆնա՛ զիմ տեղ, ես խրլրսուն կէթամ Սահունու մօտ Ումրոյիս տեսնելու և զծղի թազայ խաբարներ բերելու։ Հոն մէկ օրից չէվել չրմ Ֆնայ։

— Շատ լաւ, Ցունօ, որ էդքան ուզում ես, գնա։

— Հա՛, զուրբանիմ զքզի։

Միւս օր երեկոյեան Ցունոն Սահունու մօտն էր։ Նա երկար նրա հետ առանձնացած խօսեց, մինչև Ումրշատը զարթնեց, ապա նա իր գթոտ ձեռքերով գրկեց, համբուրեց նրան և մի խորհրդաւոր լռութեամբ դուրս բերեց գրպանից մի «տէր ողորմեա»։

Սահունին մնաց քարացած՝ «տէր ողորմեան» իր ողջ հատիկներով կազմուած էր մարդկային պտուկներից, որոնք մի առանձնակի խնամքով չորացրած և ինքնուրոյն ձև էին ստացած։

Սահունին քար կտրածի նման դիտում էր, թէ ի՞նչ է անում յաւահատ վրէժխնդրութեամբ լցուած ծերուկը։ Նա այդ «տէր ողորմեան» մի ուրոյն ձևով դցեց թոռան պարանոցով ու արտասուաթոր աչքերով նկատեց։

— Լաւ, Ումրո, իմ խոզի, անօրէնները զիս գազան դարձուցին, հմա զիմ գազանութէնը ընդոնցի չափը չէ՝ ես կտրել իմ զէնոնց էն ուղամարդոց պտուկները, որոնք անմեղ մարդկանց խեղճերի, թոյլերի անմեղ արուն կըթափէին. ես կտրել եմ էն շներու անօրէն պտուկները, որոնք մայրերի, կնիկների էին սպանում, ու ճժերուն առանց ծծի թողնում։ քզի լէ, լաւ, առանց ծծի թողին, հմա, տե՛ս քզի ի՞նչ յիշելիք եմ բերի էդ սև օրերից։ շատ զին, զոհ՝ 54 խատաս. հմա քանի Ցունօն չմտե գերեզման, էս ճամպի թարդ չիտայ. մեղքը առչի էրողի խոզուն էղնի։

Խոստացի՛ր, լաւ, դու էլ պապուդ ճամպով էթաս, թէ չէ անէծք ու նզովք կրկարդամ։ Քանի սաղիս, լաւ, զիդա «յիշելիքը» չպիտի վղիցդ խանիս. էդտեղ մի յեղայ նազլ պատմութէն կայ հայի սև օրերից. անտէր խայի սաղ վիճակնա էդ-

տեղ։ Զէդ մրը ներկան է և անցեալը, տեսնանք ապագան ինչաղ կէղնի։ Էս պատուէրներս դռիկա շատ վախտ կունենամ քզի ըսելու, հլա ջոջիր, լաօ»—Ասաց ու խեղտուած ձայնով դուրս ելաւ իր սրտի դառնութիւնը, մաղձը թափելու, որը կրակի նման այրում էր նրա ամբողջ էութիւնը։

Սահունին սառածի, շշմածի նման երկա՜ր-երկա՜ր ոչինչ չէր խօսում. միայն, երբ ծերունին դուրս գնաց, հազիւ կարողացաւ մռմռալ.

«Խոտորնակին խոտորնակ»։

ԽԱՆ-ԶԱԴԻ

ԹԱԳԱՒՈՐԸ ՊԷՏՔ Է ՃԱՆԱՉԷ ԲԱՐԵ-ԿԱՄՆ ՈՒ ԹՇՆԱՄԻՆ

ՍԱԱԴԻԻ

Մի օր Դարեհը երբ գնաց որսի,
Բանակից հեռու մնաց մենակուսի.
Դէմն ելաւ նախրորդն յանկարծ փախն ի փախ
Ասաց Դարեհը սրտումն ահ ու վախ.
Էս եկողն անշուշտ թշնամի է ինձ,
Նետս հանեմ իսկոյն ու խփեմ կրծքից.
Ու լարեց թէ չէ արքունի աղեղն,
Ահից չքացաւ ինքն էլ տեղն ու տեղ։
(Ամայի դաշտում թշնամուց վախիր.
Անփուշ վարդն եկ մեր ծաղկոցից քաղիր.)
Հովիւն արձակեց սրտանց աղաղակ,
Թէ չեմ թշնամի,—մի՛ ջնջիր իմ կեանք։
Ասաց. «Ո՞վ արքայդ Իրան Թուրանի,
Որ այդքան վատ ես ինձ մտիկ տալի,
Այստեղ ես Շահիդ ձիերն եմ պահում,
Անգործ, անզբաղ զուր չեմ թափառում»։
Սրտաբեկ արքան սիրտ առաւ կրկին,
Ժպտաց ու ասաց. «Ո՛րդեակ իմ անգին,
Երկնուց հրեշտակն եղաւ քեզ սատար,
Որ հէք գլուխդ չեղաւ նետահար»։
Ձիապանն ասաց սիրալիր ժպտով.
«Թոյլ տուր՝ Տէր արքայ, որ անկեղծ սրտով
Ասեմ քեզ ուրն է կարգը մեծութեան,—
Ճանաչել փոքրին՝ արդեօք ո՞վ է այն։

Թագաւոր ասածդ պէտք է որ ճանչէ,
Թէ ում բարեկամ ում ոսոխ կանչէ,
Այսքան ժամանակ քեզ ծառայում եմ,
Ամեն հրամանդ ես կատարում եմ,
Այժմ էլ ընդ առաջ եկայ քո սիրուն,
Իսկ դու դէպի ինձ սլաքդ ես սրում։
Ես պահում եմ, Տէ՛ր, մեր հարիւր հազար,
Ձիերի ամբողջ հաշիւն անվթար.
Թէ ինձ պէս հովւին հարկ է խելք ու միտ,
Ո՞րքան աւելի քեզ, հովւապետիդ»։
Դարեհն երբ հովւից լսեց այս խրատ,
Կարմրեց, թէև շռայլեց դրուատ.
Ապա դառնալով մտածեց ինքնին,
«Գրեմ այս խրատն իմ սրտի խորքին.
Անկումից զատ ինձ չկայ ուրիշ ելք,
Երբ հովուի չափ էլ չունիմ միտք ու խելք։
Ե՞րբ եմ ես լսել բողոք, աղաղակ,
Մինչ բարձրում է գահս որպէս Երևակ.
Այնպէս պառկիր, որ լացն ականջդ հասնի,
Երբ հպատակներդ գան դատաստանի։
Երբ կան զրկողներ իմ սահմանից ներս,
Նոյնն է թէ լինիմ զրկողը միշտ ես։
Թէ չը լինէին տգէտ շանտէրեր,
Չէր հաջիլ, անցորդ, շունն երեսդ ի վեր։
Կեցցես դու, Սասդի, անվախ խօսքի տէր,
Բաց պահիր սուրբդ ձեռումդ անվեհեր,
Այն ասա, ինչ որ կարծում ես արդար,—
Ոչ կաշառ կեր դու, ոչ էլ տուր կաշառ։

Դեռ ուժեղ բազկի համն առած չէի,
Տկարների սիրտն ես կը տանջէի.
Կերայ մի բռունց ուժեղի ձեռից,
Էլ ոյժ չտեսաւ տկարն իմ ձեռից։

Պարսկ. թարգմ.
Մ. Վ. Մաքսուտեան.

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ[1]

Գլուխ Ա.

Տէր-Գաբրիէլը ծնուել է 1802 թուի փետրուարի 26-ին Թիֆլիզում, որտեղ նորա հայրը Սերովբէ Պատկանեանցը ապրում էր իւր կնոջ Մարիամի և զոքանչ Թամարի հետ։ Պատկանեանց ընտանիքը Պոլսեցի էր և իւր հայրենի քաղաքում կոչւում էր տանկական բառով „Մինասիք", որի թարգմանութիւնն է Պատկանեանց ազգանունը։ Սերովբէի պապը Տէր-Գաբրիէլը և նորա հայրը Տէր-Պետրոսը քահանայ էին Պոլսի հայաշատ Ղալաթիա թաղի եկեղեցում [2])։ Տէր-Գաբրիէլ տատը քահանայի օջախը յայտնի էր ամենին, դա մի հայ նահապետական ընտանիք էր շատ հիւրասէր և գոնաբաց և վայելում էր ամենքի սէրն ու յարգանքը։ Ամենքի առաջ բաց էին այդ „օրհնեալ օջախի" դռները, նա մանաւանդ աղքատների և օտարականների, չենք խօսում արդէն Պոլսի վերայից Երուսաղէմ, Հնդկաստան և ուրիշ տեղեր անցնող, գնացող-եկող նշանաւոր հայերի։ Եփրեմ կաթուղիկոսը դեռ իւր արքեպիսկոպոս եղած ժամանակ Հնդկաստանի նուիրակութիւնից վերադառնալիս, գտնում է մեծ հիւրասիրութիւն Տէր-Գաբրիէլի տանը և ծանօթանում է այդ ընտանիքի անդամների հետ։ Ներսէս Աշտարակեցին իւր պատանեկութեան օրերում, երբ դեռ ուսանում էր Թադէոս վարժապետի դպրոցում, ընդունւում է իբրև հարազատ որդի Մինասիքների օջախում և ծանօթանում է Տէր-Գաբրիէլի թոռան Սերովբէի հետ։

Սերովբէն, որ ծնուել էր 1760 թուին, մի ժիր, աչքաբաց

խելօք մանուկ է լինում. նա դարձնում է իւր վերայ յայտնի Զմիւռնայի Խօջենց Մարդարի ուշադրութիւնը, որ լաւ ծանօթ էր Տէր-Գաբրիէլ Մինասիբին, և նորա հոդացողութեամբ ուղարկուում է Վենետիկ Ս. Ղազարու վանքը ուսանելու: Աչքաբաց Սերովբէն մանում է վանքի դպրոցը և լիակատարօրէն իւրացնում է հայկական գրաբառագիտութիւնը, կրօնագիտութիւնը, դառնում է ճարտար քերականագէտ և վերադառնում էՏրիեստի վերայով Պոլիս, Մնալով ընդամենը Վենետիկում և Տրիեստում 7 տարի:

Պոլսում Սերովբէն բաց է անում իւր սեփական դպրոցը և սկսում է վարժապետութիւն անել և նորա հռչակը իբրև հմուտ քերականագէտի և լեզուագէտի կամաց-կամաց տարածւում է մայրաքաղաքի ստուար հայութեան մէջ: Ամենքը շտապում են իւրեանց որդոցը տալ նորա դպրոցը և զլխաւորապէս հարուստ վաճառականները և ամիրաները: Նորա յաջողութիւնը սակայն շատ երկար չի տևում. „Մարդարէ չիւրում գաւառի պատիւս ոչ ունի“: Մի քանի տարի գոյութիւն ունենալուց յետոյ, նորա դպրոցը փակւում է և իւր կեանքում մի „ապէկոծութեան“ հանդիպելով, թողնում է Պոլիսը և 1794 թուին ընկնում է Թիֆլիս:

Այստեղ Վրաստանի մայրաքաղաքում ևս Սերովբէն ծեռնարկում է իւր վարժապետութեան գործին. նա բաց է անում մասնաւոր դպրոց և հաւաքում, ուսուցանում Թիֆլիսի ամենալաւ և առաջնակարգ ընտանիքների մանուկներին: Նորա լաւ վարժապետ լինելու հռչակն այստեղ ևս հասնում է մինչև իսկ Յովսէփ Արղութեանի ականջը, որ Յովհաննէս Լազարեանին մի մասնաւոր թոշակ է կապել տալիս նորան և կոչում նորան „վարժապետ հայոց“, և այնուհետև Սերովբէ Մինասիբը ուրիշ պէս չի կոչւում, բայց եթէ „Սերովբէ վարժապետ“: Սերովբէն իւր վարժապետութեան հետ միասին պարապում է գրականութեամբ. նա գրում է գրաբառ տաղեր, որոնց բովանդակութիւնը առնում է Աստուածաշնչից և կապում հայոց կեանքում տեղի ունեցող զանազան երևոյթների և գործող անձանց գործունէութեան հետ: Եփրեմ կաթուղիկոսը այդ երգերը, ո-

ոնք յետոյ հրատարակւում են մի առանձին հատորով, համարեա թէ ծայրէծայր բերանացի է իմանում եղել, երգերից մի քանիսն էլ Ներսէսի խնդիրքով և պատուէրով են գրուած լինում, Ներսէսի, որ 1802-ի վերջին և 803-ի սկզբին ամբողջ 8 ամիս անց է կացրել նորա տանը Թիֆլիսում և Գաբրիէլ մանուկին շատ անդամ գրկել ու սիրել։

Եփրեմ արքեպիսկոպոսը, ինչպէս յայտնի է, իւր նուիրակութիւնից էջմիածին վերադառնալուց յետոյ, նշանակուեց Ռուսաստանի առաջնորդ, որ Յովսէփի մահից յետոյ մնացել էր թափուր։ Նա Հաշտարխան դնալիս, հանդիպում է Թիֆլիս, հիւր է լինում Սերովբէի տանը, վերանորոգում է իւր ծանօթութիւնը նորա հետ և հասնելով իւր տեղը, գրում է նորան, որ նա ևս երթայ այնտեղ վարժապետութեան պաշաօնով։ Հաշտարխանում այդ ժամանակները յայտնի էին մի քանի շուղայեցի դերդաստաններ, որոնք ժամանակակից, հայրենակից և ճանապարհակից էին եղել Լազարեաններին,—Գալստեանք, Արղումանեանք, Ազաբաբեանք, Ասկարխանեանք, Դելանեանք և միւսները, և որոնք յաջող առևտրական ծեռնարկութեամբ մեծ հարստութիւն էին դիրել և հասել բարօրութեան։ Նշանաւոր էին մանաւանդ երկու եղբայր Ազաբաբեանք՝ Նիկողայոս և Յակոբջան, Յովհաննիսի որդիք, որոնք իրանց կարողութիւնը ծեռք էին բերել Մոսկուայում և վերադարձել, ապրում էին Հաշտարխանում։ Եփրեմի տեղ հասնելու ժամանակները յանկարծակի մեռնում է Յակոբջանը և նորա եղբայր Նիկողայոսը, որ ունէր երեք որդի՝ Յովհաննէս, Պետրոս և Յակոբջան, կամենալով իւր եղբօր յիշատակը վառ պահել, խոստանում է իւր համաքաղաքացիներին ի յիշատակ հանգուցեալին հիմնել մի վարժարան և այդ մասին յայտնում է նոր միայն քաղաքը ժամանած առաջնորդին։ Սորանով նա կամենում է; բացի իւր եղբօր յիշատակը անմահացնելուց, և մխիթարած լինել Հաշտարխանցւոց, որոնք Յովհաննէս աղա Լազարեանի մահուամբ, որ խոստացել էր մի ուսումնարան բանալու Ռուսաստանի առաջնորդանիստ քաղաքում և չէր կարողացել իրագործել իւր խոստումը, անմխիթար էին մնացել։

Ահա այդ Աղաբաբեան բացուելիք դպրոցի համար էր, որ դրել էր Եփրեմը Սերովբէին և յորդորել, որ նա թողնէ Թիֆլիսը և երթայ Հաշտարխան. նա նոյն բանի մասին գրել էր և Ներսէսին և խնդրել, որ նա ևս իւր կողմից համոզէ նորան և ստիպէ ընդունելու իւր առաջարկութիւնը: Սերովբէին, որ արդէն բաւականին մեծ ընտանիքի տէր էր և բաւական իւր վիճակով, թէև չէր կամենում քանդել իւր տունը և իւր ընտանիքը ենթարկել այդքան հեռաւոր տեղ տեղափոխուելու զրկանքներին, բայց վերջ 'ի վերջոյ ստիպուած է լինում կատարել իւր բարեկամների՝ Եփրեմի և Ներսէսի ցանկութիւնը և մի առժամանակ իւր ընտանիքը թողնելով Թիֆլիսում, գնում է մենակ, մինչև որ կարողանայ տեղեկանալ բոլոր հանգամանքներին և ամեն բան պատրաստել իւր ընտանիքի համար: Նա հասնում է Մոզդոկ 1805 թուին և հրաման է ստանում Եփրեմից, որ այդ ժամանակները գուրս էր եկել իւր վիճակը շրջագայելու և գտնուում էր Ղզլարում, գնալու այնտեղ: Ղզլարն էլ այդ ժամանակները շատ առաջ էր գնացել, ծաղկել ու բարգաւաճել. նորա մէջ էլ առաջ էին եկել մի քանի զերդաստաններ, որոնք քաղաքի իշխանների դեր էին կատարում և իրանց ուղածի պէս կառավարում հասարակութեան գործերն և ընթացք տալիս քաղաքացւոց կեանքին,—Բուրչպեանք, Փառակեցեանք, Թանդոյեանք, Երուսաղիմեանք, Քյաչքաչեանք, Իղմիրեանք, Սերեբրակեանք, Էլդարեանք և ուրիշները: Սոքա ժանօթանալով Սերովբէի հետ և հաւանելով նորան, հաւաքւում են առաջնորդի մօտ և խնդրում, որ նա թողնէ նորան Ղզլարում վարժապետութիւն անելու համար, բայց առաջնորդը չի համաձայնում, ասելով, որ ինքը խոստացել է Հաշտարխանցւոց և չի կարող խոստմնազանց լինել: Սակայն որպէսզի բոլորովին անկատար չթողնէ քաղաքացիների խնդիրքը, նա թողնում է նոցա վարժապետ Սիմէօն կաթուղիկոսի եղբայր գիտնական Գէորգ Խուբեանին, որ եկել էր դոյն իսկ ժամանակները Ղզլար Եփրեմի մօտ քարտուղար լինելու նպատակով:

Եփրեմն և Սերովբէ վարժապետը գուրս գալով Ղզլարից, հասնում են Նոր-Նախիջևան 1805 թուի վերջին Խազէզ կա-

բապետի քաղաքագլխութեան վերջին օրերը և իշխանում Յովսէփի առաջնորդարանում։ Նախիջևանի աղաները գնում գալիս են առաջնորդարան, տեսնում, ծանօթանում են Սերովբէի հետ։ Նոքա էլ Ղզլարեցւոց նման շատ հաւանում են նորա հեզ բնաւորութեան և քաղցր ծայնին և միտքներն են գնում խնդրել առաջնորդին, որ նա անպատճառ նորան թողնէ Նախիջևանում, թէև լսած են լինում Ղզլարցւոց անյաջողութիւնը։ Նախիջևանում այդ ժամանակները կար մի Յովհաննէս սարկաւագ, որ եկել էր Պոլսից, դրագիտութիւն և եկեղեցական երգեցողութիւն էր սովորեցնում և յայտնի էր «Յովհաննէս վարժապետ» անունով։ Բայց այդ Յովհաննէսը գրութիւն չգիտէր. նորան պահում էին Նախիջևանում, որովհետև կար մի կուսակցութիւն, ծեր հոգևորականներից ու ծեր մարդկանցից բաղկացած, որոնք կամենում էին վերականգնել Պոլսի երգեցողութեան եղանակը Նախիջևանի եկեղեցիներում, որ խանգարուել էր Յովսէփի մացրած Էջմիածնի եղանակով։ Հներին հակառակ էին նոր մարդիկ և նոր հոգևորականները, որոնք Յովսէփի աշակերտներն էին։ Առաջին կուսակցութիւնը սիրում էր Յովհաննիսին, երկրորդն ատում էր։ Վարժարանն էր «խօնախը», որ մի հասարակ նախակրթարան էր և որտեղ Յովհաննէսը սովորեցնում էր շարականներ, մեղեդիներ և շատ քիչ դրագիտութիւն։ Այդ խօնախը Պատեօմկինի Եկատերինէ կայսրուհու համար շինած նախկին պալատն էր, որտեղ պիտի իշխանէր թագուհին Ղրիմ գնալու ժամանակ։ Երբ կայսրուհին ուրիշ ճանապարհով գնաց և Նախիջևան չմտաւ, նոյն պալատը ընծայուեց Յովսէփ Արղութեանին, որ նորա մի մասը դարձրեց առաջնորդարան, իսկ միւս մասը յատկացրեց վարժարանի [3])։ Ապարանքի շինութիւնը, որ եղել էր Միքայէլ Գէորգեան Կողբէթլեանի երկրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուելու միջոցին, Նախիջևանի հիմնարկութեան երկրորդ՝ եռամեակի—1782,83 և 84-ի ընթացքում, միջավայրում փայտակերտ էր, երկու անկիւններում քարաշէն։ Արևմտեան անկիւնի քարաշէն մասը տեղի հետ միասին 1801 թուին Յովսէփի մահից յետոյ, խառնակութեան ժամանակ, գնել էր Բայազետցի Կարապետ վարդա-

պետից, որ Ս. Խաչ վանքի վանահայրն էր և Նախիջևանի յաջորդը, նշանաւոր Մահտեսի Յովհաննէսի անդրանիկ որդի Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, իսկ արևելեան անկիւնի տանը բնակւում էր Եփրեմի թարգման Յակոբ աղան-Եակոբ Մինայիչը։

Եփրեմ առաջնորդարան հաւաքուած Նախիջևանի աղաներին, որոնք խնդրում էին թողնել Սերովբէին, խոստանալով տալ նորան ռոճիկ և քաղաքի հաշուով վարձած բնակարան ու վառելիք, պատասխանեց նոյնը, ինչ որ Ղզլարեցւոյ, և աշխատեց համոզել նոցա շատանալ Յովհաննէս վարժապետի գիտութեամբ։ Բայց Նախիջևանցիք, որ ժառանգել էին Անեցւոց կամակորութիւնը, պնդեցին և իրանց խօսքն առաջ տանելու համար, սկսան զանազան արատներ դնել Յովհաննէսի վերայ, ուրանալով միանգամայն նորա եռամեայ աշխատութիւնը։ Սակայն այդ բոլորը զուր էր. Յովհաննէսն եթէ ունէր պակասութիւն, այդ էլ այն էր, որ նա, բացի ժամակարգութիւնից, շարականից և մեղեդիներից, ուրիշ ոչինչ չգիտէր։ Բայց այդ էլ շատ քչերն էին հասկանում, ինչպէս Թուֆլիկեան Մանուկ ու Մարտիրոս աղաները, Մահտեսի Յարութիւն Արարատեանը, Ստեփան աղա Փէհլէվանեանը, որոնք ժամանակի ուսեալ մարդիկն էին Նախիջևանում և ճանաչում էին նորա գիտութեան չափը։ Յովհաննէսի պաշտպանն էին աղա Յարութիւն Խաթրանեանը, որի թոռը Գէորգ Պօղոսեանը սովորում էր նորա մօտ այբուբենը, աղա Պետրոս Մահտեսի Եղիազարեան Բաբասինեանցը, որի ներծաղը պատանի Յարութիւն Պօղոսեան Խալիբեանը յաճախում էր խօնախը, և միւսները։

Տեսնելով, որ աղաները պնդում են, իսկ առաջնորդը չի համաձայնում, Տուֆլիկեաններն առաջ գալով, ասում են. «Սրբազան, շնորհակալ ենք, Յովհաննէս վարժապետն ինչ գիտէ, լաւ է սովորեցնում. մեր երեխաները քահանաների չափ ժամակարգութիւն գիտեն, բայց նոքա քահանայ լինելու չեն, այլ վաճառական, որոնց հարկաւոր է գրութիւն, որ կարողանան իւրեանց գործի նամակները գրել. թո՛ղ Յովհաննէսը գայ այստեղ, և դուք նորան մի նամակ սուէք գրելու. եթէ հաւանէք նորա գրածին, մենք յօժար ենք շատանալու նորա գիտութեամբ,

իսկ եթէ ոչ, Պատկանեանցը մնայ Նախիջևանում»։ Յովհաննէսը դալիս է և ինքը խոստովանում, որ գիր չգիտէ և իւր անունը հազիւ է գրում և գրածն էլ ինքը դժուարանում է կարդալ։ Եփրեմը մնում է անպատասխան։ Վիճաբանութիւնն երբ երկարում է, ժամանակի քաղաքագլուխ Խաչերես Հալաչեանը, որ ընտրուել էր Խաղէզ Կարապետից յետոյ տասներորդ եռամեակի—1806,7,8-ի համար, ասում է. «Սուրբազան, եթէ դու մեր խօսքը ոտքի տակ կընես, գիտցիր, որ Նախիջևան առաջնորդ ըլլալու չես. շատ Գրիգորը, շինտի ծիւորը կխաւրինք և հոս տաւէթ կանինք, ան տուն ինչ խատար կամենաս, պաղ չուր դարկ»։ Մէջ է մտնում Տուֆլիկեան Մանուկ աղան և ասում է. «Հարցնենք իրան Պատկանեանցին. նա ստրուկ չէ, ինչպէս կամենայ, այնպէս էլ կլինի»։ Գնում են միւս սենեակ, որտեղ Սերովբէ վարժապետը նստած՝ Եփրեմի հարկաւոր նամակներն էր գրում, և համոզում են նորան, որ նա մնայ և տարածայնութեան պատճառ չլինի հասարակութեան և առաջնորդի մէջ և չբորբոքուի Եփրեմի և Գրիգորի առաջնորդութեան խնդիրը։

Այդ Գրիգորը Արղութեանի Զաքարեան Գրիգոր վարդապետն էր, որ Յովսէփի մահից յետոյ, Դաւթի կողմն անցնելով և Յովսէփի սուտ կտակը ցոյց տալով ս. Էջմիածնի միաբանութեան, համոզել էր ամենքին նորա կողմն անցնելու և ինքը ևս այդպիսով Դաւթի աչքը մտնելով, եպիսկոպոս էր ձեռնադրուել և Ռուսաստանի առաջնորդ կարգուել։ Այս հանգամանքի մասին Յովհաննէս Գեղարդպկիր արքեպիսկոպոսը, որ բանտից ազատուելով, ս. դեղարդն առել, փախել էր Թիֆլիս, մի նամակ էր գրել Սերովբէի ձեռքով Եփրեմին և ամեն բան իմաց տուել։ Եփրեմն էլ գրել էր Ռուսաստանի հայերին գրել Դաւթին, որ Գրիգորին առաջնորդ չուղարկեն։ Գրիգորը գուրս գալով ս. Էջմիածնից և գալով Ռուսաստան, ամեն տեղ էլ անարգանքով էր ընդունուել։ Դորանից յետոյ էլ շուտով Եփրեմի խնդիրքով կայսերական հրաման էր արձակուել Պետերբուրգից, որ Գրիգորն արգելուած մնայ Ռուսաստանի սահմաններում։ Ահա՛ այս

Գրիգորի առաջնորդութեան ծգտելու հանգամանքի մասին էր ակնարկում քաղաքագլուխ Հալաջեանը։

Սերովբէ վարժապետը յօժարում է Ճնալ Նախիջևանում այն պայմանով միայն, որ Յովհաննէս վարժապետն էլ Ճնայ երգեցողութեան ուսուցիչ։ Նախիջևանցիք էլ թէև ընդունում են նորա առաջարկութիւնը և մի առ ժամանակ թողնում են այդ Յովհաննէսին խօնախում, բայց յետոյ հանապարհ են ծգում նորան Պոլիս։ Այսպիսով Նախիջևանցիք Սերովբէի ձեռքով 1806 թուին վերսկսում են այն կանոնաւոր դպրոցը, որի հիմքն առաջին անգամ դրել էր Ս. Խաչ վանքում Յովսէփ արքեպիսկոպոսը և որ դորանից տաս տարի առաջ, կորցրել էին նոքա, Հաշտարխան փոխադրել տալով թէ դպրոցը, թէ աշակերտներին, թէ տպարանը և թէ «Քիտապիւտան» կոչուած Թադէոս Մարուզեան վարդապետ վարժապետին [4])։ Սերովբէն սատանծնելով վարժապետութեան պաշտօնը խօնախում, խնդրում է, որ վարժարանն ունենայ մի տեսուչ, որ, գոնէ, շաբաթն երկու անգամ գայ դպրոց և վերահասու լինի, թէ ի՞նչ են անում և թէ արդեօք աշակերտները կանոնաւորապէս յաճախում են դպրոց, թէ չէ, բայց տղա Մանուէլ Շահինեանը պատասխանում է, թէ նորան են յանձնում դպրոցը, որովհետև ինքեանք մի այնպիսի մարդ չունեն, որ կարողանայ տեսչութիւն անել։ Սերովբէն խնդրում է, որ իրան արուի, գոնէ, մի ցուցակ, որ իմանայ, թէ ի՞նչ պէտք է սովորեցնել, կամ թէ ի՞նչ են ուզում, որ նա սովորեցնէ։ Աչակովսկի Սիմէօն աղան պատասխանում է, թէ գիտցածդ պիտի սովորեցնես։ Սերովբէն ասում է, թէ օգուտ չի լինիլ, եթէ ինքը սովորեցնէ այբուբեն և հինգ կանոն սաղմոս. նոքա պիտի տան իրան քիչ շատ գրագէտ տղայք, որ կարողանայ քերականութիւն սովորեցնել։ Մարտինեան Մարկոս աղան հարցնում է. «Քերականութիւն նէ մանի դրր»... Մահտեսի Յարութիւն Արարատեանը պատասխանում է, թէ քերականութիւն բիր էօլէ քիթաբ դրր... Եփրեմը ծիծաղելով ասում է՝ Հայոց վարժարան էք հիմնում, հայերէն խօսեցէք։ Մանուէլ Շահինեանը պարծենում է, թէ ինքը տեսել է քերականութիւնը. «Էփէի մեծկակ թուղթ է, Երեմիա Չելէ-

պին մէկհամ ունէր»։ Առաջնորդը կամենալով Սերովբէ վարժապետին հանել այդ ծիծաղելի դրութիւնից, ասում է նրան. «Հա՛, ես լսել եմ, որ Երեմիա Չելէբին քո աշակերտն է եղել»։ Սերովբէն երբ վերադարձել էր Տրիեստից, Սաեփան ամիրան առաջինն էր եղել, որ իւր որդուն տուել էր նորան աշակերտութեան։ Քերականութիւնն էլ հէնց այն տարին էր տպագրուել, երբ Սերովբէն գնացել էր Ղազարու վանքը. տպագրութիւնը այդ ժամանակ դեռ շարունակւում է եղել և նա սովորել էր անկապ թերթերի վերայ։

Գլուխ Բ.

Սերովբէ վարժապետը Նախիջևանում ունենում է 350 աշակերտ, բոլորեքեան էլ բորոտ. նա բժշկում է նոցա, մաքրութեան ընտելացնելով և զանազան դեղեր տալով նոցա, որ մատակարարում էր Նախիջևանում այդ ժամանակ յայտնի Հէքիմ Կարապետը։ Առաջին անգամ նա է շինել տալիս նստարաններ, որոնց վերայ նստեցնում է տաս-տաս աշակերտ. երկու ծայրին նստողները լինում էին դրագէտ և ուսուցանում էին իրանց մօտ նստած չորսին։ Աշակերտների հետաքրքրութիւնը զարթեցնելու, նոցա զբաղեցնելու և նոցա մէջ սէր յարուցանելու համար դէպի ուսումը և դպրոցը, Սերովբէ վարժապետը իւր դասատուութիւնն անում էր հեքեաթի ձևով. նա ս. Գրքից, Հայոց, Հռովմայեցւոց և Յունաց պատմութիւններից զանազան հետաքրքրական դէպքեր էր պատմում և աշակերտները սիրով լսում էին, աշակերտները միմեանց հարցեր էին տալիս և վիճաբանութիւն էին անում. ով որ լաւ էր պատասխանում, վեր էր նստում, ով որ վատ— վար։ Առաջին անգամ Սերովբէ վարժապետն է մացնում Նախիջևանցւոց մէջ միասին կարդալ գրելու եղանակը, մի խօսքով, նա մացնում է ուսուցման այն ձևն ու ոճը, որ ինքը տեսել էր Վենետիկում և Տրիեստում։ Սակայն նորա գործը շատ դժուարութեամբ է առաջ գնում, որովհետև աշակերտները կանոնաւորապէս չէին յաճախում դպրոց, ուսումնական պիտոյք չէին բերում և, որ գլխաւորն է, ազգաներն ամենքն էլ պահանջում էին, որ Սերով-

բէն իրանց խնջոյքների ժամանակ իւր աշակերտներով դայ երդէ նոցա ներում։ Նա սարքուած է լինում այս պահանջին բաւականութիւն տալու համար, ընտրել 12 ծայնաւոր աշակերտ և սովորեցնել նոցա իւր, Մխիթար աբբայի և Բաղդասար դրպրի երգերից. նա շարադրում է ուրիշ երգեր էլ, որոնց բովանդակութիւնն առնում է Նախիջևանի կեանքից, ինչպէս բարեկենդանի երգը, որ նա գրում է 1807 թուին և որ սկսւում էր «Սիրով Սուրբ Հոգ ոյն կապակցեալ Նոր-Նախիջևանցիք» խօսքերով և «Աստուած հզօր» երգը. որի մէջ գովաբանւում էին քաղաքի բոլոր նշանաւոր տղաներն անուն անուն։ Այս վերջին երգը մեծ խռովութեան պատճառ է լինում, որովհետև բոլորքեքեան էլ պահանջում էին, որ երգն անվերջ շարունակուի և ամենքի անունն էլ մէջը յիշուի, մինչև իսկ և նոցա անունը, որոնք ոչ մի արժանի յիշատակի գործ չէին արել հասարակութեան համար։

1807-ին, երբ Եփրեմը դարձեալ եկել էր Նախիջևան, գալիս է Նախիջևան և Ներսէս Աշտարակեցին, որ այդ ժամանակ դեռ վարդապետ էր, և իջևանում է առաջնորդարանի արևելեան անկիւնի քարաշէն բնակարանում Մահտեսի Աղաբէկեանի տան հանդէպ, որի վերնայարկն հասարակութիւնը վարձել էր Սերովբէի համար, իսկ ներքնայարկում բնակում էր իւր զաւակների հետ Աղքիրմանցի Տէր Յովհաննէսի մատաղահաս այրի երիցուհի Բահալը, որ Մարտիրոս Տուֆլիկեանի քեռին էր։ Նա բերել էր Դանիէլ կաթուղիկոսի կոնդակը Ռուսաստանի Հայերին, ինչպէս նոյնպիսի մի կոնդակով Պոլիս էր գնացել և. Յովհաննէս Գառնակերեան եպիսկոպոսը։ Այստեղ բնականապէս վերանորոգւում է նորա և Սերովբէի հին բարեկամութիւնը. նա յայտնում է իւր անբաւականութիւնը թէ նորան, որ խաբուելով «մեծ դրդակ» Նախիջևանցիների մեծարանութիւնից, մնացել էր նոցա մէջ և. սկսել էր իւր երգերով գովաբանել նոցա, այն ինչ նոցա մէջ չկար մէկը, որ կարողանար ազգի օգուտը, կամ փնտրտ հիշդ որոշել, և թէ առաջնորդին, որ մոռացել էր իւր առաջ խոստումը Հաշտարխանցւոց և համաձայնել էր թողնել նորան Նախիջևանում։ Եւ որովհետև նա իւր

այս դժգոհութիւնը յայտնում էր շատ անգամ դպրոցում ի լուր աշակերտների, որոնց մէջ այդ ժամանակները ծաղկել էին մի քանիսը՝ Մելքոնեանը, Տիւրկէնեանը և տիրացու Կարապետ Խալփա՛չեանը, և ի լուր դպրոցի մշտական այցելուների՝ Տուֆ-ֆիկեանների, Պետրոս Բաբասինեանի և Պօղոս Խաթրանեանի, թէ Սերովբէն և թէ այդ ազգները շատ վշտանում էին, վախենալով, որ չլինի թէ այս բոլորը հասնի քաղաքագլուխ Հալաչեանի ականջը և խոտութեան պատճառ լինի։

Սորանից յետոյ շուտով պատահում է մի դէպք, որ մի կողմից արդարացնում է Սերովբէ վարժապետի երկիւղն ու կասկածը, միւս կողմից էլ սառնութեան առիթ է լինում նորա և Ներսէսի մէջ, սառնութեան, որ յետագայ հանգամանքների ազդեցութեան ներքոյ գնալով տեսում ու զարգանում է, փոխուելով թշնամութեան ու ատելութեան, որ յետոյ անցնում է և նորա որդի Տէր-Գաբրիէլի վերայ ու այնքան դժբաղդութեան պատճառ լինում նորա համար։ Ասում են, որ մի անգամ առաջնորդը, Ներսէսը և Սերովբէն հրաւիրուած են լինում խնջոյքի Զորայ Սահակ ազգայի տունը։ Հացկերոյթի ժամանակ Ներսէսը կամենում է իմանալ, թէ կա՞ն արդեօք և ո՞յք են Քէֆէյի նշանաւոր Տէր-Բարթուղիմէոսի և Եւպատորիայի նշանաւոր Տէր-Մարկոսի ժառանգները, որոնց այնքան սէր ու յարգանք է ցոյց տուել Յովսէփ Արղութեանը դպրութեան ժամանակ։ Նորան պատասխանում են, թէ Տէր-Բարթուղիմէոսի որդին լինում է համանուն Տէր-Բարթուղիմէոս քահանան Քէֆէյում, նորա որդի Մատաեսի Թորոսը, որ դալիս է Նախիջևան, տեսնում է Յովսէփին և սէր ու պատիւ վայելում նորանից, և դորա որդին Տէր-Յակոբը, որ գնացել է Մոսկով. իսկ Տէր-Մարկոսի որդին լինում է համանուն Տէր-Մարկոս քահանան Եւպատորիայում, դորա որդին էլ Մատաեսի Յովհաննէսը, որ դալիս է Նախիջևան և Մատաեսի Թորոսի հետ տեսնում Յովսէփի հետ և դրա որդին Մարկոս ազգն, որ ապրում է առաջնորդարանի արևմտեան անկեան քարաշէնտան մէջ և հէնց այժմ էլ գտնուում է այստեղ։ Ներսէսն իւր զարմանքն է յայտնում, թէ ի՞նչպէս է եղել, որ պապատի մի մասն անցել է օ-

տար մարդկանց ձեռքը, և ինչ իրաւունք ունէր Բայազիտցի Կարապետ վարդապետը ծախելու այն տունն ու տեղը։ Մարկոս աղան շատ բարկանում է, բայց չի պատասխանում. նորա տեղ անպատասխանում է Ներսէսին քաղաքագլուխ Հալաջեանը, մատը 3 անգամ զարնելով սեղանին և ասելով. «Վարդապետ, դու հոս էկիլիս մէջերս կռիւ կուզիս ծդել. բարի եկար, գնա՛ վանք, հոն ինչ գուզիս, մամշէ, հոս ծանրդ չէլլէ»։ Մէջ են մրտնում և հաշտեցնում, և քաղաքագլուխը ի նշան հաշտութեան միւս օրն առաջնորդին և Ներսէսին իւր տունն է հրաւիրում և այդ առթիւ մեծ հացկերոյթ սարքում։ Այդտեղ պատեհ րոպէ գտնելով, Մարկոս աղան ասում է Ներսէսին, որ եթէ նա չի հաւատում, թէ տունը գնուած է Կարապետ վարդապետից, թող գայ իւր մօտ և նա «քուփչիները մէմէկ-մէմէկ նորա աչքի պէպէքը կրխօթէ»։

Ներսէսը դորանից յետոյ իբրև թէ գնում գալիս է Մարկոս աղայի տունը, որ ամրագիրը տեսնէ, և ծանօթանում է աղախնի հետ, որ նկատում են Մարկոս աղան և Բահալը երիցուհին, որի հետ իբրև թէ նոյնպէս մօտ ծանօթութիւն է կապած լինում վարդապետը։ Մարկոս աղայի տան և առաջնորդարանի մէջ լինում է մի դռնակ։ Այս դռնով մի օր Ներսէսն իբրև թէ գնում մտնում է բաղանիս, որտեղ այդ ժամանակ լուացք է անում եղել աղախինը։ Մարկոս աղան այդ նկատելով, գնում փակում է վերան դուռը և ինքը շտապով վազում է առաջնորդի մօտ, որ բերէ ցոյց տայ նորան։ Բահալը, որ քննում է եղել Ներսէսի ամեն մի քայլափոխը, տեսնելով, որ Ներսէսն անժամանակ մտաւ Մարկոսի տունը և Մարկոսն էլ շտապով դուրս եկաւ և գնաց առաջնորդարան, կասկածում է և գնում իմաց է տալիս Սերովբէ վարդապետին, որ գալիս բաց է անում դուռը և ապատում Ներսէսին։ Այդ օրուանից ահա՛, ասում են, ընկնում է սառնութիւն Ներսէսի և Սերովբէի մէջ, որովհետև դա իմացել էր նորա կեանքի գաղանիքներից մէկը, և Սերովբէի և Մարկոս աղայի մէջ, որովհետև նա խանդարել էր նորա դարանակալութիւնը։ Թէ որքան ճշմարտութիւն կար այս կանացահնար վիպասանածև պատմութեան մէջ,—մենք

չենք կարող ասել, բայց որ մի բան պատահած պէտք է լինի և սառնութիւն ծղած նոցա յարաբերութեան մէջ հէնց այդ ժամանակները, այդ սայդ է։ Տէր-Գաբրիէլը, գոնէ, որ այդ պատմութիւնը իր հօրից պէտք է լսած լինի, հաւատում էր գորան և այդ համարում սկզբնական պատճառ Ներսէսի տաժած աստելութեան դէպի ինքը և դէպի նորա հայրը։

Քանի որ Եփրեմը Նախիջևանումն էր, Սերովբէ վարժապետը տեսնելով դպրոցի սխուր վիճակը և համոզուելով, որ այդպիսի հանդամանքներում ինքը չպէտք է կարողանայ շատ բան անել, խնդրում է նորան, որ տանէ իրան Հաշտարխան, բայց այս անդամ արդէն ինքն առաջնորդը խնդրում է, որ նա մնայ, մինչև որ ինքն երթայ Հաշտարխան և տեսնի բան պատրաստէ։ Սերովբէն տեսնում էր, որ Նախիջևանում խօսողը շատ է, քան թէ լսողը, իսկ հասկացողը ևս աւելի քիչ։ Թէև այն չորս այցելուները սիրտ էին տալիս նրան և լաւ համբաւ տարածում դպրոցի մասին, բայց նա չէր կարողանում հաշտուել։ Քերականութիւն սովորելու համար պատրաստի աշակերտներ չկային. 300 աշակերտներից, որոնք հաւաքուած էին մի դահլիճի մէջ, կէսից աւելի գիրք չունէին։ Ով պէտք է նոր միայն այբուբենը սովորէր, նա բերում էր մի մեծ Նարեկ, որի վերայ վարժապետը պիտի նորան գրելը ճանաչեցնէր, միւսն աւարտում էր գրերը և գիրքը վաճառում էր ընկերին և ինքն առանց գրքի էր մնում, մինչև որ Երուսաղէմ գնացողները վերադառնային և Պոլսից գրքեր բերէին։ Գրքերը բերում էին, բայց ոչ քերական և ոչ քերականութիւն։ Բերում էին Ագաթանգեղոս, Պղնձի քաղաքի պատմութիւն, Էֆիմերաէ, Տօնացոյց, ոմանք ութ կանոն Սաղմոս, ոմանք էլ ժամագիրք։ Ագաթանգեղոսի վերայ մէկը տառերի հեղեն էր սովորում, միւսը դրամարժութիւն Էֆիմերաէի վերայ։ Երեխաները մինչև իրանց հասակի 11 տարին այսպէս ժամանակ էին կորցնում, յետոյ ծնողներն առնում, տալիս էին իրանց որդոցը վաճառականների մօտ. նոցա ստացած ուսումը հէնց այն էր լինում, ինչ որ նոքա լսել և ուսել էին ուսուցչի արած պատմութիւնից։ Ցուսահատութեան մէջ էր Սերովբէն։

1808-ին դալիս հասնում է Նախիջևան և Սերոբէի ընտանիքը—կինը՝ Մարիամ, որդիքը՝ Գէորգ, Գաբրիէլ և Պետրոս և

զոքանչդ՝ Թամար, որ իւր գալու քառասներորդ օրը մեռնում է և թաղւում Համբարձման եկեղեցու սրահի գերեզմանատանը։ Վեց տարեկան Գաբրիէլը մեծանում է Նախիջևանի վերոյիշեալ խաւար կեանքի խաւար մթնոլորտի մէջ, որտեղ ոչ հրատ էր երևում, ոչ լուսատու աստղ։ Նորա հայրական տունը միակ օվաղիսն է լինում մեծ անապատի մէջ, որտեղ նորա մանկական հոգին զովանում է, միաքը պարարւում. նորա հայրը լինում է նորա համար միակ լուսատու աստղը, որի հառաջայթներով դեռ այդ վաղ հասակից առաջնորդւում է նա և նախապատրաստւում ապագայ տառապալից կեանքի ու դորժունէութեան համար։ 1808 թուի Հոկտեմբերի 9-ին մեռնում է Դանիէլը և ընտրւում է Եփրեմը, որ 1807-ին, Ներսէսի մեկնելուց յետոյ, ինքն էլ գնացել էր Հաշտարխան։ Նա այնտեղ տեսնելով, որ Աղաբաբեան դպրոցը բոլորովին պատրաստ է, 1809 թուի Սեպտեմբերին նորից գալիս է Նախիջևան, որտեղ և կնքահայր է լինում Սերովբէի նորածին տղչկան, անունը դրնելով Կատարինէ և ինքն անձամբ շքեղ հանդիսով բերելով եկեղեցուց տուն։ Հէնց այդ ժամանակն էլ նա պախարակելով Նախիջևանցւոց անհոգութիւնը և անփութութիւնը դէպի իրեանց որդիների ուսման գործը և դէպի իւրեանց ուսումնարանը, առաջարկում է Սերոբէին տեղափոխուել Հաշտարխան և սանձնել Աղաբաբեան վարժարանի Հայոց լեզուի վարժապետութեան պաշտօնը, իսկ ինքը իբրև ընտրեալ կաթուղիկոս գնում է Պետերբուրգ կայսեր տեսութեան։ Երբ որ նա Պետերբուրգից վերադառնում է Հաշտարխան, արդէն դտնում է Սերովբէին պաշտօնի մէջ Աղաբաբեան դպրոցում. նա Ս. Էջմիածին մեկնելուց առաջ, երբ վերջին պատարագն էր մատուցանում Պօղոս-Պետրոս եկեղեցում և պիտի վերջին հրաժեշտը մատուցանէր Հաշտարխանցւոց, քարոզ է խօսում և կանչելով ատեան աղա Նիկողայոս Աղաբաբեանին, ասում է, թէ ինքը նորա խնդիրքով քանդել է Սերովբէի տունը Թիֆլիսում և բերել Ռուսաստան. ճանապարհին նա ընկել է Նախիջևանցւոց ձեռքը, և այնտեղ Նախիջևանում կրկին տուն շինել։ Երբ նորա վարժարանը պատրաստուել է, այս տարի յատկապէս ինքը գնացել է Նախիջևան և կրկին քանդել նորա տունը և բերել Հաշտարխան, և ահա այդ կարճ ժամանակամիջոցում ամենքն էլ վայելում են դորա երե-

խայրիքը այնպիսի կարգերով ու ժամասացութեամբ, որ Հաշտարխանը երբէք տեսած չէ։ Սերովբէն միայն երգեցողութեան վարժապետ չէ, նա Պռոմեթէոսի պէս դնացել է և Աբրայութիւնից Հայոց լեզուի լոյսը դողացել բերել, որ ազգի տան ճրագը վառէ։ Նորա պաշտպանը ինքն է, Ս. Էջմիածինը, յաջորդ կաթողիկոսները և առաջնորդները։ Մինչև նորա դպրոցից մէկը ուսման վկայական չունենայ, առաջնորդը չհամարձակուի նորա գլխին ձեռք դնելու, և թող նզովեալ լինի այն իշխանը, որ կ'կամենայ ոդէտ քահանայ ձեռնադրել տալ։ «Ահա՛, վերջացնում է նա իւր խօսքը, ես իմ հայրապետական իշխանութեամբս հրապարակով տալիս եմ նրան աւագ քահանաներին միայն կրելիք թասակը և գաւազանը եկեղեցուց դուրս բռնելու ձեռքին և իմ մատի մատանին»։ Եւ հանում է մատանին մատից և դնում է Սերովբէի մատը, ծոցից թաւշեայ թասակը և հագցնում նորա գլուխը և բերել տալով գաւազանը, տալիս նորա ձեռքը, Սերովբէի, որ այդ պատարագին դպրապետութեան պաշտօն էր կատարում 5)։

Առաջնորդ Եփրեմի տեղ 1811-ին ընտրւում է Յովհաննէս Գառնակերեանը կամ Յակոբեանը։ Այդ Յովհաննէսը մի ապէտ, բայց հեզահոգի մարդ էր, նորա ընտրութիւնը եղել էր Ներսէսի հաճութեամբ, որ կարողանայ նորա միջոցով իւր ձեռքին պահել Ռուսաստանի կարևոր թեմը։ Նոր առաջնորդը, որ «Հոխտբան» անունն էր ստացել, որովհետև Եփրեմի ձեռնադրութեան օրը մի լաւ քարոզ էր խօսել, որ շարադրել էր Ներսէսը, հրահանգ էր ստացել կաթողիկոսից, որ Հաշտարխանում ամեն բանում ղեկավարուի Սերովբէ վարժապետի խորհուրդներով, բայց նա տեղ ժամանելով, ընկնում է Ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխ մոմջի Սարգիս կամ Սալլահ Սարգիս կոչուած Բենկերցեանի ազդեցութեան տակ, և ոչ թէ միայն չի լսում Սերովբէի խորհուրդներին, այլև շատ բանում և շատ անգամ խստառ հակառակ է գնում նորան։ Երբ Յովհաննէսը առաջին անգամ գալիս է Նախիջևան, քաղաքացիք ընդառաջ չեն գնում նորան, և. նա սարսափած է լինում ուղղակի գնալ ս. Խաչ վանքը, յետոյ միայն նոքա բերում են նորան Խաչերես Աղաջանեանի տունը, որ վարձել էին նորա համար։ Նա աղանեբի ցանկութեամբ անուս քահանաներ է ձեռնադրում և ամե-

նին հանոյ լինելու համար, յանախ այդելութիւն է անում ա-
դաներին, ներկայ է դառնում նոցա սարքած խնջոյքներին և
սովորութիւն է արած լինում խաչակնքելու դինու բաժակների
վերայ. նորա միակ լաւ գործը Նախիջևանում լինում է այն,
որ հաշուեմատեաններ է մտցնում եկեղեցիների մէջ, որոնք սա-
կայն մնում են անգործադրելի։ Նախիջևանցիք նորա մասին ա-
սում են եղել. «Սուրբազանը աղէկ մարդ է. որուն համար կը
խնդրենք, չէ չի ասիր, կ'ձեռնադրէ, դրել-կարդալ գիտէ-չիտէ,
չի հարցուռնուր. ինքնալ մեղի պէսնակ սայէն կըքալէ,
մեղի ալ անկէ աղէկ վարդապետ ինչերռուս է պէտք. Աստուած
իրեն կեանք տայ»։

Հաշտարխանում էլ առաջնորդն առաջինն է լինում, որ
խանդարում է կաթուղիկոսի տուած պատուէրը ազէտ քահա-
նաներ ձեռնադրելու վերաբերմամբ. նա Բենդերցիեանի ցանկու-
թեամբ քահանայ է ձեռնադրում նորա եղբօրորդուն Յովհան-
նէսին և կնոջ ազգական Սարգսին, որոնցից առաջինը կարող
էր լինել լաւ աւագակապետ, իսկ երկրորդը զուրկ էր թէ խել-
քից և թէ պատկառանքից։ Ժողովրդի մէջ շփոթ է ընկնում,
և Բենդերցիեանն ու նորա սիրելի Տէր-Սարգիս քահանայ Բե-
ռեժանեանը հասկացնում են առաջնորդին, թէ այդ ապմուկի
պատճառն ու ժողովրդին դրդողը Սերովբէն է, իսկ ժողովրդի
մէջ տարածում են, թէ Սերովբէն է կաշառքով սուտ վկայա-
կան տուել, թէ Սարգիսն ու Յովհաննէսն ուսել են դպրոցում,
այն ինչ դոքա երկուսն էլ ազա Նիկողայոս Աղտարաբեանի հրա-
մանով դուրս էին արուած դպրոցից, որովհետև «բրուա» բառը
հոլովելիս, աղայի առաջ ծիծաղելի հնչիւններ էին հանել բե-
բաններից։ Այս բոլոր կատարուածի համբաւը հասնում է կա-
թուղիկոսի ականջը. նա մի նամակ է գրում այդ առթիւ Սե-
ռովբէին և գնում Յովհաննէսին գրած թղթի մէջ բաց, որ նա էլ
կարդայ։ Այդ բաց նամակի մէջ Վեհափառը գրել էր Սերովբէին,
թէ «Ոչ բարւոք դատարարակես», այսինքն լաւ չես խրատում
առաջնորդին։ Բայց այս էլ խրատ չի լինում առաջնորդին. նա
1814 թուին գնում է Մոսկով և Լազարեան Յովակիմ աղայի
խնդիրքով քահանայ է ձեռնադրում Հաշտարխանցի բաշմաղչի
Մանուկի որդուն Գէորգ Ալամդարեանին, անունը փոխելով
Յարութիւն, որին Եփրեմը դեռ իւր առաջնորդութեան օրով
հրամայել էր հոգևոր կոչումից հանել [6]։

(Յաջորդ թուով) ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ՖՐԵԴԵՐԻ ՄԻՍԹՐԱԼ

ՄԻՐԷՅՕ

Պրովանսական քերթուած

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

ԼՏՏԵՆԻՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

—

Կ'երգեմ աղջիկ մը Փրովանսի։
Իր մատաղատի տարփանքներուն մէջ,
Մեր Քրօին մէջէն, ցորեններն ի վար, ու դէպ ի ծովը,
Խոնարհ աշակերտ մեծ Հոմերոսին,
Կ'ուզեմ էնոր հետևիլ։
Որովհետև ազարակի աղջիկ մ' էր լոկ,
Քիչ է խօսուած էնոր մասին Քրօէն դուրս։

Թէպէտ էնոր ճակատը կը փայլէր միայն
Երիտասարդութեամբ, թէպէտ և էն չունէր
Ոչ ոսկի ապարօշ, ոչ դամասկեան լոդիկ,
Կ'ուզեմ որ փառքի մէջ՝ թագուհիի մը պէս
Էն բարձրանայ, և փայփայուի արհամարհուած մեր լեզուովը,
Վասըն զի մենք ձեզի՛ համար միայն կ'երգենք,
Խաշնարածներ 'ւ ազարակի բնակիչնե՛ր։

Ո՞վ Տէր Աստուած իմ հայրենիքիս,
Դուն որ ծընար հովիւներուն մէջ,
Բոցավառէ խօսքերս ու շունչ տուր ինծի.
Կանանչներուն մէջ, դուն գիտես,
Ցօղերուն ծոցն, արևուն տակ,
Երբ հասուննան թուզերն, անկուշտ գայլի պէս՝
Մարդը կուգայ և պտղաթափ կ'ընէ ծառը։

Բայց ծառին վրայ որուն ոստերը կը կոտրէ,
Դուն նորէն ճիւղիկ մը կը բուսցընես
Որուն անկարող կ'ըլլայ անյագ մարդն իր ձեռքն հասցընել,
Գեղեցիկ ընձիւղ մը վաղափրթիթ,

Անուշահոտ, և կուսական,
Որ յուլիս ամսուն կը դառնայ աղուոր պըտուղ մը հասուն,
Ուր կուգայ իր քաղցը յագեցընել թռչունն օդաչու։

Կը տեսնեմ ահա այդ ճիւղը քնքուշ,
'Ի անոր թարմութիւնն հոգիս կը մոգէ.
Կը տեսնեմ հովուն տակ երկնքին մէջ օրօրուիլն անոր
Տերևներուն 'ւ անմահական պըտուղներուն։
Ո՜վ աղուոր Աստուած, բարեկամ Աստուած,
Թոյլ տուր ինծի որ փրովանսեան լեզուին թեով
Թռչուններու ճիւղին հասնիմ։

Ռոնի ափին վրայ, կաղամախներուն
Եւ ուռիներու շարքերուն միջև,
Ջուրէն կըրծըւած խեղճ հիւղի մը մէջ,
Կողովագործ մը կը բնակէր
Որ ագարակէ ագարակ կ'անցնէր
Իր որդիին հետ ու կը նորոգէր
Քակուած կողովներ, ծակած սակառներ։

Օր մ' որ արտերէն այդպէս կ'երթային
Իրենց ոզորի մորճերու երկայն տրցակներովը,
—Հայր, ըսաւ Վինսեն, արևը նայէ.
Կը տեսնե՞ս հունա, Մակլոնի վերև,
Ամպի սիւներն՝ որ զայն ահա կը պաշարեն.
Եթէ այդ պատնէշն այսպէս կուտակուի,
Հայր, տուն չըհասած՝ թերևսս թըրջինք։

—Ծովու հովն է որ կը շարժէ տերևները,
Չէ, անձրև չի գար, ըսաւ ծերունին.
Ա՜հ, տարբեր բան՝ եթէ փըչողն
Արևմտեան հովն ըլլար։
—Հայր, ո՞րքան արօր կը բանեցընեն
Լըտենիներու ագարակին մէջ։
—Վեց, պատասխանեց կողովագործը.
Քրօի ամենէն մեծ կալուածներէն մէկն է անիկա։

Նա, չե՞ս տեսներ հոն՝ ձիթենիներու իրենց մեծ այգին.
Անոնց մէջը կան քանի մը շարքեր որթետունկերու
Ու նշենիներու... Բայց էն աղուոր բանն, ըսաւ՝ իր խօսքը
Կտրելով (և այս կողմերն ատոր պէս երկու հատ չըկայ)
Սա է որ այնքան ծառուղի կայ հոն
Որքան օր ունի տարին, և անոնց ամէն մէկուն մէջ

Ճիշդ այնքան ծառ կայ՝ որքան ծառուղի։

— Բայց, ըսաւ Վինսեն, զարմանալի բան,
Ո՞րքան հաւաքող պէտք է ունենալ՝
Բաղելու համար ձիթապըտուղներն այդքան ծառերու։
— Օ՜, այդ բոլորն ալ կ'աւարտի դիւրաւ.
Պօի աղջիկներն, Ամենայն Սրբոց տօնը երբոր գայ,
Կարմիր կամ նըշագոյն ձիթապըտուղներով
Կը լեցընեն ինչքան տոպրակ կայ ու սաւան...
Երգելով երգելով, աւելի ալ ըլլար՝ պիտի հաւաքէին։

Եւ Ամպրուա կ'շարունակէր դեռ խօսիլ...
Եւ ահա արևն որ կ'անհետանար բլուրներուն ետին,
Ամենէն աղուոր գոյներով կ'երփնէր ամպերը թեթև.
Եւ երկրագործները՝ զոյգ զոյգ լծուած ջորիներուն վրայ,
Կը դառնային, յամր, իրիկուան ճաշին,
Խրթանը ցրցած...
Եւ գիշերը մութնալ կը սկըսէր հեռաւոր ջրամարգերուն մէջ։

— Ահա արդէն կ'ընդնշմարուի կալին մէջ
Ցարդի դէզին կատարը,
Ըսաւ Վինսեն, ալ վախ չունինք անձրևէ։
— Այդտեղ կ'աճին ոչխարները.
Ամառը, անտառն ունին շոճերու
Եւ ձմեռը՝ դաշտը գայլախազուտ,
Ցարեց ծերունին... Հոդ ամեն բան կայ.

Եւ ծառի բոլոր թաւուտներն այդ մեծ
Որ կղմինտրներուն վրայ շուք կը ձգեն,
Ո՛ւ այդ աղուոր աղբիւրն որ ձկնարանի մը կը հոսի,
Եւ մեղուի այդ փեթակները բոլոր
Որ անձնիւր աշնան կը կողոպտըւին
— Եւ երբ մայիսը հասնի,
Լրտեսներն ի վար հարիւր պարս կըկախեն.

— Բայց այս ամբողջ կալուածին մէջ՝
Ինծի համար էն հաճելին, ըսաւ Վինսենը յանկարծ,
Ագարակին աղջիկն է.
Եւ եթէ դեռ կը յիշես,
Էնիկա մեզ անցեալ տարի շինել տըւաւ
Ձիթապըտուղ հաւաքողի երկու կողով,
Ու երկու կանթ դընել տըւաւ իր սակառին։

Խօսուըռտելով այսպէս՝ հասան

Դիրան առջև.
Աղջիկը կերը տբուեր էր շերամներուն,
Ու սեմին վրայ, ցողին տակ,
Հիմա կուգար կարժ մ' ոլորել.
— Բար՝ իրիկուն ամենուդ,
Ըսաւ ծերունին գետին նետելով մոլճերն ոզորի։

—Աստուծու բարին, Ամպրուա վարպետ,
Ըսաւ Միրէյօ. տեսէք, իլիկիս ճոթը կ'անցընեմ.
Բայց դուք ինչո՞ւ այսպէս ուշ էք մընացեր.
Ո՞ւրկից կուգաք, վալապրեկէ՞ն։
—Այո. և մեր ճամբուն վրայ պատահելով ագարակը
Լրտտենիներուն,
Ուշ է՝ ըսինք, երթանք գիշերն յարդի դէզին տակ պառկինք։

Եւ կողովագործն իր որդիին հետ
Գընաց տափանի մը վրայ նըստաւ.
Խոսիլն ալ ձրգած, երկուքը մէկէն
Կիսկատար մնացած կողով մը սկըսան
Հիւսել եռանդով,
Եւ իրենց խուրձը քակելով,
Կ'ընդելուզէին ու կը պրկէին ոզորներն հըլու։

Վինսեն տասնըվեց տարեկան չըկար.
Բայց մարմինով ինչպէս դէմքով՝
Աղուոր կտրիճ մըն էր, հուժկու շինուածքով,
Ճիշդ է՝ բաւական թուխ երեսներով,
Բայց սև հողը միշտ
Ազնիւ ցորեն կը բերէ,
Ու սև խաղողէն կը հանուի գինի մ'որ պարել կուտայ։

Ինչ կերպով պէտք է ոզորը
Պատրաստուի ու գործածուի,
Շատ աղէկ գիտէր. ըսել չէ թէ նուրբ
Գործերու վերայ կաշխատէր ան սովորաբար,
Այլ կը յօրինէր գրաստի զամբիւղներ,
Ամէն ինչ որ ագարակի մէջ պէտք է,
Շէկ հողնոցներ ու յեսանի պատեաններ,

Ճեղքուած եղէգէ սակառներ, շուտով ծախուելիք բաներ,
Կորեկէ աւելներ,
Եւ դեռ ուրիշ ասոնց պէս շատ մ' իրեղէններ
Արագ արագ կը շինէր, լաւ, շնորհալի,

Վարպետի ձեռքով...։
Բայց հանգչած արտէն ու տափաստանէն
Արդէն մարդիկն աշխատելէ դարձած էին։

Դուրսը, զով օդուն,
Մէրէյօ, քնքուշիկ ագարակպանուհին, քարէ սեղանին վրայ
Բանջարեղէնի աղցանը դրեր էր.
Բեռնաւորուած լայն պընակէն,
Իւրաքանչիւր ծառայ՝ տօսախէ դըգալի խոշոր հարուածներով՝
Բակլաներն արդէն կը խլէր կը քաշէր։
Ծերն ու իր որդին դեռ կը հիւսէին։

—Է՜, չէ՞ք գար ընթրել, Ամպրուա վարպետ,
Ըսաւ Ռամոն վարպետն՝ ագարակին տէրը,
Իր քիչ մը վէս ձեռվը.
Ա՛լ մէկդի դրէք կողովը.
Չէ՞ք տեսներ, աստղերն ահա ծագեցան։
Միրէմ, շուտով ըսկուտեղ մը բե՛ր.
Սեղանին քով եկէք, յոգնած ըլլալու էք։

Ահ կուգանք, ըսաւ Ամպրուա վարպետը.
Ու քարէ սեղանին դէպի մէկ անկիւնը
Եկան մօտեցան ու հաց կտրեցին.
Միրէյօ, գողտր և աշխոյժ,
Ձէթով համեմեց պընակ մը բակլայ,
Յետոյ վազն ի վազ բերաւ զայն ձեռքովն անոնց հրամցուց։

Տասնհինգ տարու էր Միրէյօ.
Կապոյտ գետնափ Ֆոն-վիէօի,
Եւ դուք, Պօի բըլուրներ,
Եւ դուք, ո՞վ Բրօի դաշտեր/
Անկից ի վեր այլ ևս էտոր նըման աղուոր չըտեսաք։
Զըւարթ արևը հասուցեր էր զէնիկա.
Ու թարմ, անմեղուկ,
Դէմքն այտերուն վըրայ երկու փոսիկ ունէր։

Էնոր նայուածքը ցօղ մըն էր
Որ ամէն ցաւ կը փարատէր...
Նըւազ անուշ, նըւազ մաքուր է աստղերուն ճաճանչը.
Մազերը, վերէն վար խոպոպաւոր,
Սև կը փայլէին.
Եւ կուրծքը կըլոր
Դեղձ մըն էր կրկին՝ դեռ ոչ շատ հասուն.

Եւ խօլազուարթ ու կայտառ,
Ու քիչիկ մ՚ալ վայրենի...։
Գաւաթ մը ջուրի մէջ՝ տեսնելով այդ բոլոր շընորհը՝
Մէկ ումպով խըմել պիտի ուզէիք։
Յետոյ, երբ անձնիւրն՝ ըստ սովորութեան՝
Իր գործին վըրայ ըսելիքն ըսաւ,
(Ինչպէս, վա՜խ, վա՜խ, վա՜խ, հօրկանս օրով՝ մեր ագարակին մէջ),

— Նայինք այս գիշեր, Ամպրուա՛ վարպետ,
Ի՞նչ պիտի երգես,
Ըսին, ասիկա քընացողներու ընթրիքն է կարծես։
— Սուս եղէք, տըղաք. ծաղրողին վըրայ,
Ըսաւ ծերունին, Աստուած կը փըչէ
Ու հոլի նըման զայն կըդարձնէ.
Դուք ինչու չէք երգեր, դուք որ երիտասարդ էք և ուժով։

— Ամպրուա՛ վարպետ, ըսին մըշակներն,
Իրա՛ւ, կատակով չէ որ կըխօսինք.
Տես, Քրօի գինին հիմայ գաւաթէդ դուրս պիտի յորդէ.
Բաղխենք բաժակնիս, հայրիկ, ու կոնծենք։
— Ա, իմ ժամանակս երգիչ էի ես,
Ըսաւ այն ատեն կողովագործը.
Բայց ինչ ընենք, հիմայ՝ ճաթած են հայլիներն*)։

— Ամպրուա՛ վարպետ, զըւարթացնելու համար մեզ, խնդրեմ,
Կըտոր մը երգէ, ըսաւ Միրէյօ։
— Աղուոր աղջիկ, պատասխանեց Ամպրուա,
Նըման է իմ ձայնս հատաքաղ հասկի,
Բայց քեզ հաճելի ըլլալու համար պատրաստ է արդէն։
Եւ անմիջապէս սա երգն ըսկսաւ,
Պարպելէ ետք իր գինիի գաւաթը։

Ա.

Սուքրեն պայլն որ ծովու վըրայ կը հրամայէ,
Նըշանը տուաւ նաւհանգըստին մէջ Թուլոնի.
Ահա Թուլոնէն կը մեկնինք մենք՝ հինգ հարիւր փրովանսցի։

*) Հայլիները ճաթում են (Li mirau soun creba)։ Փրովանսական լեզուին մէջ, mirau (հայելի) կը կոչուին այն երկու փայլուն ու հնչուն փոքրիկ թաղանթները զոր ճպուռներն ունին իրենց փորին տակ և որոնք՝ շփումով յառաջ կը բերեն այն աղմուկը որ իրենց երգը կըհամարուի։ Երբ մէկը ծերանալով՝ ձայնը մարի, առածի կարգ անցած է ըսել՝ «Հայլիները ճաթել են»։ Ծ. Հ.

Անգլիացւոյն յաղթելու մեծ էր փափաքնիս.
Ա՛լ չէինք ուզեր մեր տունը դառնալ՝
Անգլիացիին կորակոր փախչիլը դեռ չըտեսած։

Բ.

Սակայն առաջին ամիսը որ մենք կը նաւարկէինք,
Ոչ մէկը տեսանք բայց եթէ միայն
Թեքափայտերուն մէջ հարիւրներով թռչող որորներն։

Բայց երկրորդ ամսուն,
Փոթորիկ մը մեզ բաւական տանջեց,
Դիշեր ցերեկ կը պարպէինք նաւուն ջուրը.

Գ.

Բայց երրորդ ամսուն, ա՛լ կատաղութիւն եկաւ վրանիս,
Արիւննիս կ'եռար՝ մարդ չըգտնելնուս
Որ կարենայինք մեր թնդանօթովն աւլել ու սրբել։

Այն ատեն Սուֆրեն՝ «է, տըղա՛ք, կայմին թակաղաղն
ելէք»,
Ըսաւ, և յանկարծ, սարապանը՝ վար ծրռելով՝ հեռուն
Արաբական ծովափին կողմը կընայի։

Դ.

— Է՜, աչքերնիս լոյս, գոչեց սարապանն, ահա երեք
հատ
Խոշոր նաւ շիտակ մեր վրայ կուգան։
— Շուտ, տըղա՛ք, պատրաստ, շո՛ւտ, թնդանօթները տեղն
անցուցէք,

Պոռաց իսկոյն ջոջ նաւապը.
Թող Անտիպեան թուզերը նախ շօշափեն,
Յետոյ մենք անոնց ուրիշ կողովէ մը կըհրամցընենք։

Ե.

Խօսքն աւարտած չէր տակաւին, և բոց մ' ահա կերևայ.
Քառասուն ռումբ մէկէն կերթան փայլակի պէս
Անգլիացւոյն ծակել նաւերն արքայական...

Նաւերէն մէկուն հոգին լոկ մընաց։
Ա՛լ ուրիշ բան չի լըսուիր բայց թնդանօթի ձայնը խռպոտ,
Տախտակներու ճայթիլն ու մռունչը ծովուն.

Զ.

Բայց թշնամիէն հիմա մենք հաղիւ մէկ քայլ հեռու ենք.
Ի՜նչ երջանկութիւն, ա՜խ, ինչ հեշտութիւն.
Սուֆրեն, անվախ ու գունատ,

Եւ որ ծածքին վրայ անշարժ կը կենար,

—Տղա՛ք, պոռաց վերջապէս, ալ կրակ մի՛ ընէք,
Եւ էքսի իւղով զանոնք լաւ մ՚օծենք։

Է.

Խօսքը դեռ բերանն էր, և ահա մեր նաւուն մարդիկը
Կ՚առնեն գեղարդ, սուին, տապար։
Ճանկը բռնած, փրովանսցիները խիզախ
Կը գոչեն՝ «Սըւոնց նաւերը մտնենք».
Ու մէկ ոստումով անոնց նաւերուն մէջը ցատկեցինք,
Ու այն ատեն ըսկըսաւ մեծ կոտորածը։

Ը.

Ի՜նչ բուռն հարուածներ, ի՜նչ սարսափելի արիւնհեղութիւն.
Այն ի՜նչ շըռինդ կը հանեն կայմն որ կը կոտրի,
Ու ծածքը նաւուն որ նաւազներուն ոտքին տակ կը փլի։
Քանի քանի Անգլիացի ծովը կ՚թափին,
Մերոնց շատերն Անգլիացի մը կոկորդէն կը բռնեն
Ու թաթերնուն մէջ զայն սեղմած կը սուզուին խորը ջուրին։
—Անհաւատալի կերևան ասոնք ձեզի, այնպէս չէ՞,
Ըսաւ բարի ծերուկն իր երգն ընդմիջելով.
Սակայն ճիշտ այնպէս եղած է ինչպէս երգը կը պատմէ.
Ճշմարիտ, կրնանք աներկիւղ խօսիլ։
Ես ինքս հոն էի, ղեկն էի բռնած.
Ահա ինչու, հազար տարի ալ ապրիմ,
Ատիկա մըտքէս պիտի չելլէ բնաւ։

—Ի՞նչ, դուն մասնակցե՞ր ես այդ մեծ կռուին.
Բայց ինչպէս մանգաղ մը մուրճին ներքև որ զայն կը ծեծէ,
Մէկի դէմ երեք՝ անոնք յաղթեցին ձեզ անտարակոյս։
—Ո՞վ, ըսաւ՝ զայրոյթէն ծառացած՝ ծեր նաւազն, Անգլիացիները...
Յետոյ՝ ժպտելով՝
Ընդհատուած երգը խրոխտաբար շարունակեց։

Թ.

Արիւնի մէջ ոտնաթաթախ, այդ պատերազմը տևեց
Ժամը երկուքէն մինչև գիշերը։
Ու երբ վառօդն ալ աչքերնիս կուրցընելէ դադրեցաւ,
Հարիւր հոգի կը պակսէր մեր ցոկանաւէն,
Բայց երե՛ք նաւ, երե՛ք, ծովուն տակը գացին,
Երեք աղուոր նաւ Անգլիոյ թագաւորին։

Ժ.

Ցետոյ երբ քաղցր հայրենիքնիս կը դառնայինք,
Հարիւր հատ ռումբ տանելով մեր նաւուն կողերը միուած,
Առագաստակալը կըտոր կըտոր, և առագաստները բըզիկ բըզիկ,
Պայլն անուշբրան, կատակի ձևով,
—Ընկերներ, ըսաւ, դուք հոգ մի՛ ընէք,
Ես Փարիզի թագաւորին պիտի խօսիմ ձեր մասին։

ԺԱ.

—Ո՞վ մեր ծովակալ, քու խօսքդ անկեղծ է,
Պատասխանեցինք, թագաւորն անշուշտ քեզ մըտիկ կընէ,
Բայց մեզ պէս խեղճուկ նաւաստիներու ի՞նչ պիտի շնորհէ.

Ձըգեցինք մեր տունն ու մեր ծովափը,
Եւ իրեն համար վազեցինք կռուիլ ու զինք պաշտպանել.
Կը տեսնես սակայն որ պէտք եղածին չափ հաց իսկ չունինք։

ԺԲ.

Բայց օր մ՚երբ երկինք երթաս, դուն յիշէ,
Երբ խոնարհին պիտի ամենքը փառաւոր անցքիդ շուրջը,
Յիշէ որ ոչ ոք քու նաւազներուդ պէս քեզ կը սիրէ.

Դառնալէ առաջ մերին գիւղերը,
Ո՞վ բարի Սուֆրէն, եթէ կարելի ըլլար ատիկա,
Թագաւոր ըրած քեզ ձեռքի վըրայ կը պտըտցնէինք։

ԺԳ.

Մարթէկցի մըն է, որ՝ իրիկուն մը՝
Ուռկանը ձգելով՝ այս երգն յօրինեց.
Սուֆրէն Պայլն ելաւ Փարիզ մեկնեցաւ.

Ու կըսեն թէ անոր փառքին
Նախանձեցան մեծամեծներն այդ երկրին,
Եւ իր նաւազներն ալ անոր երեսն երբէք չը տեսան։

Ճիշտ ժամանակին ծեր կողովագործն
Իր ծովային երգն աւարտեց,
Վասընգի քիչ մընացեր էր որ արցունքէն ձայնը խըղդուէր.
Բայց մըշակներուն համար շատ շուտով էր ան աւարտած,
Որովհետև անխօս, մըտքերնին արթնցած
Բերաններին կիսաբաց,
Երգն աւարտելէն յետոյ դեռ երկար մըտիկ կընէին։

— Եւ ահա, ըսաւ, մին այն երգերէն

Որ կ' երգուէին երբ Մարթա կ' մանէր *),
Գեղեցիկ էին, տըղա՛ք, այդ երգերն ու քիչ մ' երկնկէկ,
Եղանակն հինցած է, սակայն ինչ փոյթ.
Հիմա կ'երգեն նոր նոր երգեր
Ֆրանսերէն լեզուով, ուր կը գտնըւին
Աւելի նուրբ բառեր..., բայց ո՞վ կը հասկընայ։

Եւ ծերունիին այս խօսքին վրրայ
Երկրագործները՝ սեղանէն ելլելով՝
Գացած էին իրենց զոյգերը տանելու
Աղուոր հոսուն ջուրին մօտ,
Եւ կախ ոստերով արիշին ներքև
Վալապրեկցի ծերուկին երգը մրմռալով,
Ջորիներնուն ջուր կը խըմցընէին։

Բայց Միրէյօ, միս-մինակ
Մընացեր էր, ծիծաղկոտ,
Ապրուա վարպետին որդւոյն Վինսենին հետ.
Երկուքը մէկտեղ կը խօսակցէին
Եւ իրենց գլուխները կըհակէին իրարու վրրայ
Ինչպէս երկու ծաղկափըթիթ քապրիոէլ **)
Զոր զըւարթ հովիկ մը վար կը ծռէ։

— Վինսեն կըսէր Միրէյօ,
Երբ քո ժրժանըդ շալկած՝
Կը թափառիս հոս հոն՝ կողով նորոգելու,
Ո՞վ գիտէ որքան, որքան տեսած ես՝ պըտոյտներուդ մէջ,
Հին հին դղեակներ, վայրենի տեղեր, գեղեցիկ վայրեր,
Աղուոր հանդէսներ, ուխտատեղիներ։
Մենք աղաւնոցէն դուրս ելած չունինք։

— Ճիշտ է ըսածդ, օրիորդ,
Հաղարջներուն թըթու համէն
Ծարաւն այնքան կ' անցնի որքան ամանէն ջուր խըմելէն.
Եւ գործ գտնելու հաւար եթէ պէտք է ենթարկըւիլ
Օդին խստութեանց,
Ճամբորդութիւնն իր հաճոյքներն ունի նորէն,
Եւ ճանապարհին շուքը տաքութիւնը կը մոռցընէ։

---

*) «Երբ Մարթա կը մանէր», առածաձև ասացուածք որ կը նշանակէ «աւելի երջանիկ ժամանակի մը մէջ, հին բարի ատենը»։

**) Քապրիոել, տունկ մը որ շատ տարածուած է հարաւային Ֆրանսայի ջրամարգերուն մէջ։

Այսպէս, քիչ օրէն երբ ամառը գայ,
Զիթապըտուղի ծառերն երբ ծաղկի
Ողկոյզներով ծածկըւին,
Ճեփ-ճերմակ դարձած այգիներուն մէջ,
Հացիներուն վրայ, քըթերնիս հովուն,
Յովհաննաճանճն որսալ կ՝ երթանք՝
Երբ՝ էն տաք օրերուն՝ կափ-կանաչ կը շողայ։

Խանութպաններն՝ յետոյ մենէ ծախու կառնեն զանիկա։
Թըզուկ-կաղնիներով ծածկըւած դաշտերուն մէջ որդան
կարմիրը
Կը քաղենք, ու մերթ կըերթանք լըճերուն մէջ տըզրուկ
Ա՜խ, ինչ սիրուն ձկնորսութիւն. բըռնել.
Ոչ ուռկանի պէտք կայ և ոչ ալ խայծի.
Կը բաւէ ոտքով զով ջուրը տրորել,
Ու տզրուկն ինքնին կուգայ կը փակչի մեր սըրունգներուն։

Բայց, խեղճ աղջիկ, գացած չէ՞ս բնաւ Մարիամներուն
ուխտատեղին.
Հոն է որ կ՝ երգեն. այնտեղ հիւանդներ
Ամէն կողմէ կըբերեն.
Մենք այնտեղ էինք տօնին ատենը։
Իրաւ է՝ փոքրիկ էր եկեղեցին,
Բայց որքան ճիչեր, ու որքան ուխտի նըւէրներ այնտեղ.
— Ով սրբուհիներ, զօրքերնուդ զուրբան, գըթացէք մեզի։

Մեծ հրաշքին տարին է... ախ, տէր Աստուած,
Այն ինչ տեսարան...
Տըղայ մը կուլար, գետինը փըռուած,
Վըտիտ բայց աղուոր՝ սուրբ Յովհաննէսին պէս. ու ողբագին՝
«Ո՞վ սրբուհիներ, դարձուցէք ինծի աչքերուս լոյսը,
Կըսէր, ու ձեզի բերեմ իմ գառնուկըս եղջերաւոր։

Անոր շուրջն ամենքը կ՝արտասուէին.
Եւ նոյն ատեն դանդաղօրէն, նշխարապահ արկղերը
Վար կիջնէին ժողովրդին վրայ ծնկաչոգ,
Եւ երբ չըւանը կը թուլնար, ամենքը մէկ՝
Ինչպէս մեծ հով մ՝ անտառին մէջ, կը գոչէին,
«Ազատեցէք մեզ, չարխափան սրբուհիներ»։

Բայց իր կնքաժօր բազուկներուն մէջ,
Երբոր իր փոքրիկ բարակ ձեռքերով
Տըղան կրցաւ դպչիլ երեք երանելի

Մարեամներուն մասունքին,
Հրաշագործ այն արկղերուն կառչեցաւ
Փարումովն ուժգին նաւաբեկեալին
Որ ծովուն մէջ կը փաթրթռի տախտակի մը։

Բայց հաղիւ իր ձեռքը գորովագին
Սրբուհիներուն մասունքը բռնեց,
—Աչքովը տեսայ—յանկարծ գոչեց ան՝
Ըսքանչելի հաւատքով մը.
«Հրաշագործ արկղերն ահա կը տեսնեմ,
Կը տեսնեմ մեծ-մայրս արցունքներու մէջ.
Շուտ, շուտ, երթանք, բերենք գառնուկս եղջերաւոր»։

Եւ քեզ ալ, օրիորդ,
Աստուած պահէ թող աղուոր ու երջանիկ.
Բայց օր մ'օրանց՝ եթէ շուն, գայլ, մողէս կամ օձ մ' ահագին
Կամ մէկ ուրիշ թափառական անասուն մը
Քեզ իրեն սուր ակռաներովը խայթէ,
Դժբաղդութիւնն եթէ ուժերդ քամէ,
Սրբուհիներուն գընա աղօթէ, և շուտ կը բուժուիս։

Այսպէս ժամերը կանցնէին գիշերուան.
Սայլակը՝ թափուր՝
Անիւներուն կ'արձակէր շուքն ոչ շատ հեռու.
Ջրամարգերուն մէջ կը լսուէր մերթ հընչելը
Բոժոժի մը.
Եւ բուիճակն երազուն
Սոխակներու երգին իր ողբը կը խառնէր։

—Բայց քանի որ այս գիշեր լոյսը լուսնակին
Ծառերուն ու ջրկոյտներուն վրայ է զարկեր,
Կուզէս, ըսաւ Վինսեն, արշաւ մը պատմեմ՝
Ուր քիչ մընաց որ մրցանակն ես առնէի։
—Սիրով, ըսաւ պատանուհին միամիտ.
Եւ աւելի քան երջանիկ, շունչը բռնած,
Վինսենին մօտեցաւ։

—Նիմ քաղաքին Հարթավայրին վրայ էր
Որ այդ արշաւը կը տրուէր,
Բազմութիւն մը՝ դիզուած,
Գլխու մազէն աւելի խիտ,
Խռնուեր էր այնտեղ՝ հանդէսը տեսնելու։
Գլխաբաց, բոպիկ, թիկնոցակն հանած, շատ մը վազողներ

Մրցարանին մէջտեղն արդէն եկեր էին։

Ամենքն յանկարծ կը նշմարեն Լակալանթօն,
Վազողներու թագաւորը,
Որուն անունն անտարակոյս
Քու ականջդ ալ հասած է,
Այդ հռչակաւոր Մարսիլիացին,
Որ շնչասպառ ըրեր է շատ, շատ անգամ
Փըրովանսի 'ւ Իտալիոյ էն դիմացկուն մարդիկը։

Ժան Քուէսսօ Սենիսկալէն պէս ազդրեր
Ու սըրունգներ ունէր ան.
Ունէր անագէ պընակներ՝ դարակ մը լեցնելու չափ,
Ուր իր արշաւներն էին փորագրուած.
Ունէր այնքան ճոխ պատուոյ գօտիներ,
Որ գամերուն վըրայ իր տանը մարդակին՝
Պիտի կարծէիր տեսնել ծիածանն ամբողջ պարզըւած։

Բայց անմիջապէս, գլուխնին ծըռելով,
Միւսները նորէն կը հաղնին իրենց թիկնոցակները.
Լակալանթօին հետ ոչ ոք մրցիլ կը համարձակի.
Քրի անունով պատանի մը՝
Բարակ կազմով, բայց ջըլապինդ սըրունգներով,
Այդ օրն եկած Նիմ էր բերած իր կովերը.
Միայն անիկա
Յանդգնեցաւ զայն մրցումի հրաւիրել։

Ես որ դիպուածով ներկայ էի հոն,
«Է՛, հէրն անիծած, պոռացի յանկարծ,
Մենք ալ վազող ենք»։ Զըսած ըլլայի.
Ամենքը վրաս թափեցան՝ «Շուտ, վազէ՛ տեսնենք»։
Հեղ մը մըտածէ. մինչև այն ատեն՝ դաշտերուն մէջէն,
Կաղնիները լոկ ունենալով ինձ իբր հանդիսատես,
Կաքաւներու ետևէն լոկ էի վազած,

Ա՛լ պէտք եղաւ որ ասպարէզ ելլէի.
Լակալանթօն զիս տեսնելուն, սապէս կեցուց.
—Խեղճ տըղաս, դուն կրնաս կապել կօշիկներըդ։
Ու նոյն ատեն կը պարփակէր
Մրկանունքներն իր պըրկըւած ազդրերուն՝
Մետաքս վարտիքի մը մէջ՝ որուն շուրջը կը կախուէին
Տասն ոսկի բոժոժ։

Հանդչեցընելու համար շունչերնիս, շրթունքներնուս մէջ

Կ'առնենք ծըղօտ մ'ուռենիի.
Բարեկամի պէս՝ ամենքս իրարու ձեռք կը սեղմենք շուտ.
Անհամբերութեամբ դողալով ամբողջ,
Արիւննիս եռ ելած, երեքս ալ՝ ոտքերնիս
Գրծին վրայ դնելով ու վերցընելով, նըշանին
Կը սպասենք։ Նըշանն ահա կը տըրուի.

Փայլակի պէս, երեքս ալ դաշտը կը լափենք,
Ես եմ, դուն ես. ասպարէզին մէջ ընդալրձակ՝
Փոշիի յորձանք մը մեր ոստումները կը պաշարէ.
Օդը մեզ կը տանի, մազերնիս կը մըխայ.
Ա՜խ, այն ինչ եռանդ, ինչ վազք մոլեգին,
Այնպէս բուռն էր մեզ վառող կրակն, որ վայրկեան մը
Կարծեցին թէ պիտի երեքս ալ մրցանակը շահէինք.

Վերջապէս ես առաջ անցայ։
Բայց ահա այդտեղ իմ բաղդըս դարձաւ։
Վասըն զի երբ խրոխտ ոգիի մը պէս՝
Յիմարաբար կը սլանայի,
Յանկարծ, ոգեսպառ ու գոյնըս նետած
Ճիշտ այն պահուն ուր ես զանոնք կանցնէի,
Շունչըս կըտրած ինկայ գետին փոուեցայ։

Անոնք երկուքն, ինչպէս մեր էքս քաղաքին մէջ՝
Խաւաքարտէ ձիերը որ կըպարեն,
Կը սլանան քայլով մը կանոնաւոր։ Մարսիլիացին
Կըկարծէր արդէն թէ ապահով էր իր յաղթանակը.
Սակայն, օրիորդ, Մարսիլիացին
Մուրիէսցի Քրիին մէջ
Իր մարդը գըտաւ։

Բազմութեան մէջէն,
Արդէն մօտեցեր էին թիրախին.
Տեսնելու էիր, աղուոր օրիորդ, Քրիին ցատքելը.
Լեռներու վրայ, որսարանի մէջ՝
Զըկայ եղջերու ոչ ալ նապաստակ
Որ վազելու մէջ այդքան ջիղ ունենայ։
Լակալանթօ կը խոյանայ գայլի նըման ոռնալով։

Փառքով պըսակուած,
Քրի մրցանակին ցիցը կըգրկէ.
Բոլոր նիմցիք կ'երթան անոր մօտ կը վազեն.

Կ'ուզեն գիտնալ անունն անոր ծընած տեղին.
Անագէ պնակն արևուն տակ կըցոլայ.
Ծնծղաներն ուժգին կըհնչեն. ու սրինգը կ'երգէ. և Քրի
Կը ստանայ պնակն անագէ։

— Իսկ ԼակալանթՕն, հարցուց Միրէյօ.
— Զոգած փոշիի մառախուղին մէջ
Զոր կ'յարուցանէր ոտնահարութիւնը ժողովրդին,
Ան իր երկու ձեռքով ծունկերը կըսեղմէր,
Ու հոգին խոցուած
Այն անարգանքէն որ զինք կ'անպատուէր,
Ճակտէն ինկած քրտինքներուն առատ արցունք կը խառնէր։

Քրի մօտեցաւ ու բարևեց.
— Կապելայի մը ձողիքին տակ, եղբայր,
Եկուր, ըսաւ անոր, եկուր ինծի հետ,
Զըւարճանանք այսօր, վաղուան ձրգենք ողբը.
Եկուր, բարի յաջողութեան խըմենք մէկտեղ.
Այս մեծ կրկէսէն անդին, հոն, հեռուն,
Ինծի ալ քեզ ալ՝ դեռ շատ արև կայ։

Բայց վեր առնելով իր դէմքը գունատ,
Եւ իր մարմինէն որ կը դողդըղար
Փրցընելով ու հանելով ոսկէբոժոժ վարտիքը,
«Քանի որ տարիքն, ըսաւ, իմ ուժերըս կը խորտակէ,
Առ, քո՛ւկդ է աս.
Երիտասարդութիւնը քեզ կը զարդարէ կարապի մը նըման.
Քեզի կ'իյնայ կըրել վարտիքն էն ուժովին»,

Այսպէս խօսեցաւ.
Եւ խըռնըւած ամբոխին մէջ
Տըխուր՝ ծայրահատ հացիի մը պէս,
Անհետացաւ մեծ վազողը,
Ոչ Յովհաննու տօնին, ոչ սուրբ Պետրոսին,
Ա՛լ անկէ ետքը ոչ մէկ տեղ մը երևցաւ՝ վազելու։
Կամ ուռած տիկին վրայէն ցատքելու,

Լըտտենիներու Ագարակին մէջ,
Այսպէս Վինսեն բոլոր գիտցածը կը թափէր.
Եւ իրաւ երեսները կը շիկնէին,
Սև աչքը բոց կ'արձակէր։
Շարժումներով ալ ըսածները կը շեշտէր,

Եւ իր խօսքերն առատ առատ կը հոսէին
Ինչպէս Մայիսի խոտերու վրայ թօն մ'յանկարծական։

Ու ծըղրիդներն, որ բունծերուն մէջ կ'երգէին,
Քանի հեղ՝ զանի մըտիկ ընելու համար՝ լըռեցին·
Ցաճախ, սոխակներն ու գիշերահաւն
Անտառին մէջ մունջ կեցան
Ու մինչև հոգոյն ալքերն ազդըւած
Կտրած ոստերու դէզին վրայ նըստուկ,
Միրէյօ պատրաստ էր մինչև լոյս աչքը չըգոցելու։

— Ինծի այնպէս կուգայ, կ'ըսէր իր մօրը,
Թէ պարզ բանւորի տըղայ մ' ըլլալով՝
Հըրաշալի կը խօսի... Մայր, մեծ հաճոյք է
Ձըմեռը՝ քընանալ. բայց հիմայ, գիշերը
Այնքան պայծառ է որ չ'ուզեր մարդ քընանալ.
Դեռ կենանք մըտիկ ընենք։ Եթէ իմ գիշերներս ամբողջ
Ու կեանքըս բոլոր զինքն ունկնդրէի՝ չէի կշտանար։

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆ

«ԳԻԼԱՍԱՐ»

(ԱՆՏԻՊ ՎԷՊԻԿԻՑ)

Տ ա տ ը

—Աշխարհ ի՞նչ կասի, ա՛ղջիկ, արաժիդ,
Ուզում ես կամովդ խանի ճանկ ընկնել.
Մեզք արի ա՛նգութ, խեղճ նշանաժիդ,
Չէ՞ որ երդուել ես նրան պատկանել։

Թ ո ռ ը

«Քաղցր է ինձ համար ազիզ նշանած,
Հոգիս որ ուզի, կը հանեմ, կը տամ.
Բայց հայրս Զաւադ խանի բերդն ընկած
Ինձ է ձէն տալիս. ես ո՞նց չը գնամ։

Թուր էլ շողացնեն, երես չեմ թեքիլ,
Թո՛ղ տուր ժամ առաջ Գեանջի բերդ հասնեմ,
Կրակ էլ ածեն դոգս, չեմ վախիլ,
Միայն քաջ հօրս երեսը տեսնեմ։

Զուր ես ուշացնում աղաչանքներով,
Մահ ու տարտարոս աչքի տակ ունեմ.
Գետ, անտառ, լեռներ կանցնեմ վազելով,
Միայն թէ հօրս վզով փաթաթուեմ։

Քառք պատիւներից վեռեց վեր դասել
Իմ սիրու համար բերդի սև օրը,
Զոհ կերթամ խանի կրակին ես էլ,
Միայն թէ բերդից փրկեմ իմ հօրը.

Քաղցր է ինձ համար ազիզ նշանած.
Հոգիս էլ ուզի, կը հանեմ, կը տամ.
Բայց հայրս, տա՛տի, խանի ճանկ ընկած
Ինձ է ձէն տալիս, ես ո՞նց չը գնամ։

Ս. ՔԱՄԱԼԵԱՆՑ

ԻՇԽԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԵՀԲՈՒԹԵԱՆԻ ՅԻՇՏԱԿԻՆ

Յետաշրջութեան յաղթանակի տարիներն էին, անցեալ դարու ութսնականի վերջերին, Ալէքսանդր Բ. կայսեր վերջին տարիների ազատագրական շարժման վերջին հալածականներն ապաւինել էին գաւառի անկիւններն և մատնուել անգործութեան։ Այդ անկիւններումն իսկ դրանք գործունէութեան ասպարէզ էին գտել, եթէ անհնարին էր կենդրոններում և ընդհանուր պետական գործերում մասնակցել, հնար կարող էր լինել գաւառական կեանքի նեխուած ճահիճները ցամաքեցնելու... զոնէ այդպէս էին հաւատում շատերը։

Իշխան Կ. Բեհբութեանն էլ վերադարձել էր Թիֆլիզ, իւր ծննդավայրը։

«Տիֆլիսսկի Վէստնիկի» խմբագրի կծու լեզուից, սրամիտ կատակներից և անողոք արդարամտութիւնից շատերն էին վախենում։ Կովկասեան լրագրողների շրջանում իշխանն իսկոյն իւր արժանի տեղը գրաւեց, այդ շրջանի փայլուն մի խմբակ էր կազմուել այն ժամանակ Թիֆլիզում։ Իշխան Դ. Էրիստովը, Իլիա Ճաւճաւաձէն, Ն. Նիկոլաձէն, Աբգար Յովհաննիսեան, Իզմայիլեան տեղական մամուլի և հասարակական գործերի ղեկը ձեռքերներին պահում։

Իշխան Կ. Բեհբութեանը քաղաքային վարկի ընկերութեան մէջ աչքի ընկնող դեր խաղաց բանալով հին վարչութեան գեղծումները, որի հետևանքն եղաւ հին վարիչների բանտարկութիւն և աքսորը։

Քաղաքային խորհրդարանի անդամ Կ. Բեհբութեանի սրամիտ յարձակումները բերնէ բերան էին թռչում։ Այդ գործունէութեան պտուղն եղաւ փոխադարձ ապահովագրութեան հիմնարկութիւնը, որի առաջին տարիների վարիչն ինքն էր։

Անմասն չէր նա և ազգային գործերից. ընտրուելով Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան անդամ, եռանդուն հոգաբարձուներից մէկը դարձաւ։ Հայերէն միայն Թիֆլիզու բարբառը գիտենալով չէր կարող ազգային գործերի մէջ իրեն վայել դիրքը բռնել, ուստի սկսաւ հայերէն ուսանել աւետարանի վրայ, միևնոյն ժամանակ, զգալով որ հոգևոր դպրոցի հոգաբարձուին վայել է և հոգևոր գիտութիւնների ծանօթութիւնը, առանձին եռանդով ուսումնասիրում էր աստուածաբանութիւնը։

Այսքան գործունէութիւնը դեռ քիչ էր թւում իշխանին, նա մտածեց եւրոպական ձևով ծաւալել ընթերցանութիւնը մեր երկրում, երկաթուղու կայարանների գրադարանները կապալով մեր առաւ և Բաղու քաղաքի կենդրոնական հրապարակում (պարապետ) մի սիրուն կիոսկ կանգնեց գրքեր վաճառելու համար։ Սակայն գրքերն ու թերթերը դեռ չէին հետաքրքրում մեր երկրի բնակիչներին, գոնէ այնքան չէին հետաքրքրում, որ նրանք պահանջ զգային ուղևորութեան և անցորդութեան ժամանակ գիրք ու լրագիր գնեն, ուստի իշխանն ստիպուեցաւ փնասով ծախել այդ ամենն։ Այսօր էլ դեռ կանգուն է իշխանի արևելեան ճաշակով շինել տուած կիոսկը Բաղուի պարապետ կոչուած հրապարակում և այնտեղ զովացուցիչ ըմպելիներ են վաճառում։

1890 թուի գարունն էր, Մակար կաթուղիկոսն յանկարծամահ էր եղել և ամէն կողմից պատգամաւորներ էին գալիս Էջմիածին կաթուղիկոսի թաղմանը։ Ներսիսեան դպրոցի կողմից եկան Աբգար Յովհաննիսեան ու իշխան Բեհբութեանը, ճանապարհին ուղեկցել էր նրանց պ. Փ. Վարդանեանը, որ իւր պերճախօս լեզուով նկարագրել էր Վաղարշապատն ու Էջմիածինը։

Կառքից իջնելուն պէս պատգամաւորներն հետաքրքրուեցան կաթուղիկոսի մահուան արտակարգ հանգամանքներով և ապա իշխանը ցանկութիւն յայտնեց տեսնել վանքն ու շրջակայքը։ Ղաղարապատից դուրս եկանք դէպի Ներսիսի հոյակապ լիճը։

—Այս ի՞նչ փառահեղ ջրամբար է, ասաց իշխանը, Ֆիլիպպ

Արտեմիչ. սա՞ է այն ճահիճը, ուր գործերը գիշերը նուազահանդէս են տալիս, որ լսելի է Հռիփսիմէի վանքի մօտ։

—Այո՛, այո՛, միայն թէ այժմ գորտեր չը կան, սա մի հոյակապ շինուածք է, որով կարող է էջմիածինը պարծենալ...

—Կեցիր,—եղբայր, կեցիր, ասաց իշխանը, այժմ պիտի սկսես գովել այն, որ պարսաւել ես ճանապարհին, իսկ գովասանքդ էլ պիտի այնքան չափազանց լինի, որ ես դարձեալ դրրկու�եմ տեսածիս հրապոյրից։

—Բայց իշխան, յարեց Աբդարը, այն ժամանակ Ֆիլիպպը խօսում էր ճնշուած տրամադրութեան տակ, իսկ այժմ Մասիսների հոյակապ տեսքը, Ներսէսի սիրուն ձեռակերտը ոգևորել է նրան, ամենայն ինչ կախուած է տրամադրութիւնից...

Դարձանք վանքն ու պատրաստուում էինք վեհափառի թաղման, ամենիս յուզողն էր մութն ապագան։

Թաղման տխուր հանդէսը վերջացել էր, միաբանութիւնն ու պատգամաւորութիւնը դուրս էր գալիս վանքի սեղանատնից, ուր մի ճառ վրդովել էր ամենին։

Հանդուցեալ Արիստակէս սրբազանի տնղգոյշ խօսքերը՝ թէ «կաթուղիկոսական աթոռի սև քօղը պիտի վերանայ ռուսաց ամենաղօր կայսեր ձեռքով», դիպել էր պատգամաւորների սրտին, ամենքն ասում էին—«իսկ հայ ազգն, իսկ ընտրական իրաւո՞ւնքն» և տաք տաք վիճաբանում։ Այդ միջոցին իշխանը լուռ էր, չը կարենալով հայերէն վիճաբանութեան մասնակցել, նա ձեռքով թափհարեց և ասաց.

—Նու մեղը ուտեց. արժէ՞ խօսել այդ մասին։

Այդ ուտիցը մնաց այնուհետև իբրև թռուցիկ խօսք։

Անիշխանութեան կամ Երեմիական տեղապահութեան շրջանում կատաղի կռիւ մղեց «Արծաղանքը» էջմիածնի վարիչների դէմ, այդ կռուին անմասն չէր իշխանն և սուր գրչով ու եկեղեցական իրերի հիմնական ծանօթութիւնով։

Հետզհետէ հայկական ասպարէզ մտնելով իշխանը սրեց իւր նուրբ գրիչը ժամանակակից հասարակական ախտերի դէմ և «Արծաղանքի» ֆելիէտոններն այդ շրջանում ամենից աւելի

փնտռած ընթերցանութիւնը դարձաւ։ Արժէր դրանից քանի մի օրինակ արտատպել։

Կաթուղիկոսական ընտրութեան պայքարն անցաւ և Խրիմեանը ժամանեց Բաթում, ուր ընդառաջել էր և իշխան Կոստանդինը։ Կեանքի փորձերով կրթուած և առերևոյթս անտարբերութեան հասած փիլիսոփայութեամբ օժտուած երկու գործիչները սկզբում շատ համակրեցին միմեանց, բայց վերջ ի վերջոյ Հայրիկի անսահման սառնասրտութիւնը դէպի ընթացիկ գործերը չափազանց թուեցաւ նոյն իսկ իշխանին և նրանք պաղեցան միմեանցից։

Հասաւ Գոլիցինի սոսկալի շրջանը. ուժով խեղտուեցաւ ամենայն հասարակական և ազգային գործունէութիւն, փակուեցաւ և «Արծագանքը»։ Իշխանը կրկին մայրաքաղաք փոխադրուեցաւ, այնտեղ էլ հալածանքների հանդիպեց և մի առ ժամանակ Փարիզ էր ապաստանել։

Երկու ազատագրական շրջանն և իշխան Կոստանդինը կրկին Պետերբուրգ ժամանեց ու գրաւեց իւր տեղը մայրաքաղաքի մամուլի գործօն շրջանի մէջ։ Հասաւ այն ժամանակը, երբ կարող էր իրագործուել իշխանի հրատարակած ծրագիրը ծխի մասին, երբ կարող էր ծաղկել և տոհմական գործունէութիւնը, սակայն հակադիր ոյժերի կռիւն այնքան մեծ թափով էր սկսուել, որ այնտեղ ծերացած գործչի ուժերն այլ ևս չէին բաւեր, նա դեռ պէտք է սպասէր կրքերի խաղաղուելուն։

Այս տարուն յուլիսի 25-ին սրընթացք գնացքը Պետերբուրգից դէպի Փարիզ խորտակուեց և տարագիր իշխան Կոստանդինը զոհ գնաց այդ դիպուածին։

Պակասեցաւ և մի հին ու հասուն գործիչ։

ՆԻԿ. ՔԱՐԱՄԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ.

—

Յեղափոխութեան օրեր և գեղարուեստական գրականութիւնը։— Ի. Վեսելովսկին, հայոց կեանքը և գրականութիւնը։—Հայոց նոր գրականութեան պատմութիւնը գրուած է։—Հայերը գերմանական վէպերում։—Հայակերութիւն։

Ա.

Յեղափոխութեան օրեր—ահա այն անունը, որ պէտք է կրէ մեր տաժանելի ժամանակը։ Ամբողջ Ռուսաստանը «օրորւում է» և յայտնի չէ, թէ երբ պէտք է հանգստանայ։ Եւ զարմանալի չէ, որ այդքան ժամանակ է տեւում «կրիզիսը». դեռ շատ ժամանակ կարող է շարունակուել այս անորոշ դրրութիւնը։ Ինչո՞ւ այդքան շուտ ենք մոռանում յեղափոխութիւնների պատմութիւնները. յիշեցէք ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը՝ քանի՞ տարի տեւեց, որքան ելևէջներ ունեցաւ. իսկ գերմանական և աւստրիական յեղափոխութիւնները, որոնք սկսուեցին քառասնական թուականների վերջին և տեւեցին երկար տարիներ, մերթ հանգչելով, մերթ կրկին բոցավառուելով։

Ռուսաստանի յեղափոխութիւնն սկսուել է բռնակալ Պրեւէի սպանուելու օրից և շարունակւում է ալիքանման հոսանքով,—այսօր նա յաղթող է և տիրում է աղատութիւնը, վաղը դլուխ է բարձրացնում «յետադիմութիւնը» — և աղատութիւնը խեղդում է բռունցքների մէջ։ Ռուսիայի բաղտն է դարբնւում և ահագին սալի բոցերն են, որ ցայտում են մեր չորս դին։

Իբրև Ռուսիայի մի մաս, մեր խեղճ երկիրն էլ ընդհանուր հոսանքով է մղւում և իւր ոսկոր ու կաշի դառած մտրմնի վրայ է զգում թէ յառաջադիմութեան և թէ յետադիմութեան

բոլոր հեռանքները։ Եթէ յեղափոխութեան յաղթանակի օրերին հայերը մի բոպէ ազատ շունչ քաշեցին—այժմ, այսքան ժամանակ, «հակայեղափոխութեան» դառն բաժակն ենք խմում։

Տուն, տեղ, գործ, հանգստութիւն մոռացած հայը գոյութեան կռիւ է մղում, զարմանալի քաջամարտութեամբ ապացուցանելով, որ կարելի է «ընդդէմ խցանի էլ ոքացել»։

Ամեն ոյժ, ամեն միտք այդ ուղղութեամբ է գործում. մտածւում են և յօրինւում միջոցներ կամ թշնամու հարուածին հարուածով պատասխանելու, կամ այդ հարուածը անվտանգ անելու։ Պատերազմ է, որ կայ, ուստի և ամեն ինչ արիւնով է բոցավառուած, մարդկային ջղերը լարուած, կեանքը մակերեւոյթը ալեկոծուած։ Մեր հասկացողութիւնների, յարաբերութիւնների, վճիռների, գործերի և դաղափարների միջոցով անցնում է կարմիր թելի նման յեղափոխական տագնապը, նրա ոգին՝ եռուն, համարձակ, անհամբեր...

Ուշադրութեամբ դիտեցէք մեր կեանքը և դուք կտեսնէք, որ նա այս բոպէիս լիովին ներշնչուած է այդ ոգով։ Յեղափոխութեան օրերը իրանց դրոշմը դրին և գիւղական և բանւորական կեանքի վերայ. նրանց արձագանք տուին և Ս. Էջմիածինը և ինտելիգենցիան. հասարակական կեանքը ի դէմս կենտրոնական ժողովի այդ ոգով էր տոգորուած. դպրոցական կեանքի, մամուլի մէջ—նրանք յեղաշրջումներ առաջացրին։ Ինչ որ փոխուել է—փոխուել է և յետադիմութիւնը անկարող է հին կարգերը վերահաստատել, մինչև իսկ եթէ ոյժ ստանայ. այդ հիշատ է թէ Ռուսիայի թէ մեր կեանքի վերաբերմամբ։

Յեղափոխութեան օրերը դեռ շարունակւում են և առաջ են մղում ուրոյն խնդիրներ, որոշ պահանջներ։ Գրականութիւնն էլ նրանց արձագանք է դառնում։ Յեղափոխութեան օրերին գեղարուեստական գրականութիւնը կարող չէ ծաղկել. նրանք ստեղծում են սեփական գրականութիւն յեղափոխական հրապարակախօսութիւն։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ Կամիլլ Դէմուլէնի հրաշալի յոդուածներն էին օդը թնդացնում, իսկ Հէբէրի անիրխանական վիճուածները—ամբողջ

Փարիզի տականքները գժուացնում։ Ճառեր ժողովներում, ճառեր ակումբներում, ճառեր լրագրներում—ահա յեղափոխութեան սիրած գրականութեան ձևը։ Նոյն է և մեր կեանքի մէջ՝ այս յեղափոխական օրերին գեղարուեստական գրականութիւնը պահուել է, ասպարէզ չի դուրս գալիս։

Բ.

Գրականութեան պատմութեան մէջ դրանք լուսանցքներ են։ Անշուշտ լաւ կլինէր օգտուել դրանից և անցեալի մի հաշիւ տեսնել։ Քսաներորդ դարու սկզբին ինչ լաւ կլինէր մի յետահայեացք ձգել նախընթաց դարու գեղարուեստական գրականութեան վերայ...

Եւ ահա մի դէպք լաւ առիթ է տալիս մի պտոյտ անելու մեր սիրած հեղինակների հետ. այդ առիթը տալիս է մեզ յարգելի Պ. Իւրիյ Վեսելովսկին [1]։

Նրա գրուածքների նոր ժողովածուն պարունակում է տասն և հինգ յօդուած, որոնց նիւթը վերաբերում է կամ հայոց կեանքին կամ գրականութեանը. յօդուածները զանազան ժամանակ լոյս էին տեսել ռուսաց այլ և այլ լրագրներում ու ամսագրերում։ Ամենագնահատելին այստեղ ի հարկէ հեղինակի այն ջերմ համակրութիւնն է, որ նա ցոյց է տալիս դէպի մեր ազգը, նորա ցաւերը և սակաւաթիւ երջանկութիւնները. միևնոյն ժամանակ այն ազնուութիւնն է, որով ղինուած, նա իւրովանն պաշտպանն է հանդիսանում հայ ժողովրդին, երբ Վէլիչկոյի նման օտարազգիները աշխատում էին ցեխոտել հայ անունը, վարկաբեկ անել ամբողջ մի ազգ։ Ժողովածուի մէջ երեք յօդուած յատկապէս զբաղուած են այդ խնդրով. բայց և միւս յօդուածների մէջ էլ լսւում է հեղինակի կռիւը որոշ ռուս և օտար շրջանների չարակամութեան և ամենալաւ դէպքում—անտարբերութեան դէմ։

Հեղինակի բերած օգտի սա միմիայն «բացասական» ձևն

[1]) Ю. Веселовскій. Очерки Армянской Литературы и жизни, Изд. М. Мурадова. Армавиръ (Куб. обл.). 1906.

է. իսկ գրականը—ռուս ընթերցողներին մեր իսկական կեանքի և գրականութեան հետ ծանօթացնելն է։ Այս ասպարէզի վերայ նա թողնում է հրապարակախօսի գրիչը ու քննադատ և պատմաբան է դառնում։ «Արդի հայ բանաստեղծութեան մի քանի մօտիւերը», «կանանց տիպերը հայ գրականութեան մէջ», «Պ. Դուրեան», «Պարոնեան» և այլն—դրանք բոլորը գրուած են իհարկէ ռուս ընթերցողի համար և այդ կողմից պ. Վեսելովսկին միակն է թէ հայերիս և թէ օտարների մէջ։ Բայց ցաւալին այն է, որ մեր քննադատական գրականութեան մէջ էլ շատ չենք գտնի այնպիսի ուսումնասիրութիւններ, ինչպիսին տալիս է Վեսելովսկին իւր այդ և ուրիշ «հայկական» յօդուածների մէջ։ Ճիշտ որ շատ են արուած մեր գրականութեան մէջ դիտողութիւններ մեր բանաստեղծների «ընդհանուր», «գերակշռող» մօտիւների մասին. դարձրե՞լ են ուշադրութիւն կանանց տիպերի զանազան սերունդների մէջ տեղի ունեցող կռուի վրայ և այլն։ Էլ չեմ ասում՝ շա՞տ են համեմատել մեր և օտար գրական արտադրութիւնները, որոշե՞լ են նրանց իսկական արժէքը, գնահատե՞լ են ըստ եւրոպական չափու։

Իհարկէ ոչ։

Ճիշտ է Վեսելովսկու «Էրուդիցիան» հայոց գեղարուեստական գրականութեան մէջ հարուստ կարող չէ կոչուել. նա նախ մասամբ ծանօթ է մեր հին և նոր բանաւոր գրականութեան հետ. տաճկահայ գրականներից նրան ծանօթ են միմիայն գլխաւոր դէպքերը. ըստ երևութին նա չի կարողանում միշտ հետևել մամուլին և մեր նորագոյն հեղինակների գրուածքներին։ Այդ բոլորը ճիշտ է և այդ ուղղութեամբ կարելի էր ցոյց տալ մի քանի պակասութիւններ, երբ հեղինակը չի յիշում այս կամ այն բանաստեղծին, կամ աւելի մեծ նշանակութիւն է տալիս թոյլ հեղինակութեան, անծանօթ լինելով գուցէ լաւագոյնի հետ։ Այնուամենայնիւ նա այնքան մօտ ծանօթ է մեր գրականութեան, որ եթէ մի օր նրա բոլոր յօդուածները թարգմանուին և առանձին գրքով հրատարակուեն—նրանք պատուաւոր տեղ կրռնեն մեր քննադատական գրականութեան մէջ և իբրև ձեռնարկ կրգործածուեն մեր դպրոցներում։ Նա իսկա-

պէս արդէն իսկ տուել է մեր նոր գրականութեան պատմութիւնը, զանազան ժամանակներում գրած լինելով յօդուածներ՝ Մխիթարեանների, Աշուղների, Աբովեանի, Ռաֆֆու, Թատրոնի և Սունդուկեանցի մասին, Հիւսիսափայլի, Ս. Նազարեանի և Նալբանդեանի, Մամուլի, Ռ. Պատկանեանի, երիտասարդ բանաստեղծների, Ս. Շահազիզի, Դուրեանի, Պեշիկթաշլեանի, Պարոնեանի մասին և բազմաթիւ մանր և մեծ յօդուածներ մեր ուրիշ վիպասանների, թատերագրողների, բանաստեղծների և այս կամ այն նոր լոյս տեսած գրքերի մասին։

Ես անկեղծ խորհուրդ եմ տալիս մէկին զբաղուել այդ հարցով և հեղինակի հետ համաձայնութիւն կայացնելուց ու հարկաւոր յաւելումները և փոփոխութիւնները մտցնելուց յետոյ— թարգմանել և որոշ սիստէմով խմբագրուած մի հատորով հրատարակել։ Հաւատացած եմ, որ մեր ընթերցողներից շատերը այդպիսի մի հատորի մէջ կը գտնեն իրանց չ՝երևակայած հայ մտքի ստեղծագործութեան աշխարհը, որը բացած կը լինի նրանց առաջ ռուս հեղինակի բարեացակամ և տաղանդաւոր գրիչը։

Գ.

Բացի բուն քննադատութիւնից Ի. Վեսելովսկին զբաղւում է և գրական հետազօտութիւններով։ Այս ասպարէզումն էլ նա մեզ տկներև օգուտ է տալիս, չնայած, որ նրա նպատակը մենք չենք և մեր գրականութիւնը, այլ ռուս հասարակութիւնը, ընդհանուր գրականութեան պատմութիւնը։ Գլխաւորապէս նա զբաղւում է օտարների մեր մատաւոր կեանքի վերայ ունեցած ազդեցութեամբ։ Այս ուղղութեամբ մասնաւորապէս զբաղուել են ռուս գիտնականներից Ի. Վեսելովսկու հայրը—Ալէկսէյ Նիկ. Վեսելովսկին և հօրեղբայրը՝ Ալէկսանդը Նիկ. Վեսելովսկին (Նորերս վախճանուեց). վերջինս յայտնի է բանաւոր գրականութեան վերաբերեալ իր համեմատական ուսումնասիրութիւններով, իսկ երիտասարդ հայրենասէրի հայրը— ռուս գրականութեան վերայ օտարների արած ազդեցութեան ուսումնասիրութեամբ։ Այսպէս ուրեմն Ի. Վեսելովսկին նրանց

հետևող է հանդիսանում և որոշում է Բայրընի ազդեցութիւնը Շահազիզի վերայ, ռուս բանաստեղծների—Յովհաննիսեանի, Ծատուրեանի և այլոց. հետաքրքրում է Պուշկինի, Շիլլերի, Վ. Հիւգոյի ազդեցութիւնները մեր գրականութեան վերայ և բերում է հետաքրքրական օրինակներ և հետքեր։ Ափսոս, որ հեղինակը ծանօթ չի եղել Վ. Հիւգոյի և Ռուսինեանի միջև եղած յարաբերութեանց մասին, թէ չէ նրա յօդուածը Վ. Հիւգոյի ազդեցութեան մասին աւելի ևս կճոխանար։

Միւս կողմից հեղինակը աշխատում է գտնել օտար գրականութեան մէջ այն ամէնը, ինչ որ հայի մասին է կամ մի որևէ կապ ունի հայի կեանքի և գրականութեան հետ։ Այդ տեսակի յօդուածներից յիշենք տաղանդաւոր Զոլանեանի գրակ. գործունէութեան նուիրուած յօդուածը. XVIII-րդ դարու ռուս բանաստեղծների յիշատակութիւնները հայոց մասին և գերմանացի վիպասան Ռուդոլֆ Լանդաուի Ein unglücklich Volk (Անբաղդ ժողովուրդ) վէպի քննադատութիւնը։ Ռ. Լանդաուի վէպը չի վերցրած բացառապէս հայոց կեանքից, բայց բովանդակութիւնը սերտ կապուած է Կ. Պոլսի քաղաքական աղէտալի դէպքերի հետ (1895—1896 թ.) և տալիս է բազմաթիւ նկարագրութիւններ հայոց կեանքի, բնաւորութիւնների, այդ դէպքերի և այլն։ Եթէ այդ վէպը կրճատուի և հայերէն թարգմանուի—ընթերցողի համար շատ հետաքրքրական նիւթ կլինի։ Մի այլ տեղ[1]) յիշում եմ—պ. Վեսելովսկին խօսել էր ուրիշ գերմանական հեղինակի մասին, որը իւր վէպերի նիւթը, ամբողջ բովանդակութիւնը, վերցրել է հայոց կեանքից. դա կին գրող Իլզա Ֆրափան'նէ, որը այժմ ստորագրում է՝ Ֆրափան Ակունեան։ Սրա հայոց կեանքից վերցրած վէպերը աւելի յաջող են, քան Լանդաուինը։ Իլզա Ֆրափանի «Անիծեալ Վայր» պատմուածքում կամ «Աշխատանք» վէպում—պատկերացրած է հայոց իրական կեանքը, դուրս է բերուած հայ գաղափարական ինտելլիգէնտը, երևում է, որ հեղինակը ի մստոյ ծանօթ է հայ ուսանողութեան հետ։ Այս բոլորը բաւական է վէպերին իսկական հայկական գոյն և բովանդակութիւն տալու և մենք նոյն-

[1]) Тифл. Л. 1906 № 67.

պէս խորհուրդ ենք տալիս թարգմանիչներին ձեռք զարնել այս երկերի թարգմանութեանը։ Օտար հեղինակները այնքան քիչ են զբաղուում մեզանով, որ իհարկէ մեր «հոգուն մեղք» չէ բոլոր այդ տեսակ երկերը հայերէն թարգմանել։

Դ.

Եւ մինչ Վեսելովսկիները կամ Մառռերը [1]) իրանց գրական գործունէութեամբ ազգերի համերաշխ կենակցութիւն են քարոզում ռուս հասարակութեան, մինչ նրանք աշխատում են ժողովրդականացնել ռուսաց մէջ հայոց գրականութիւնը և պատմութիւնը—նոյն, այսինքն ռուս ինտելլիգէնտ, շրջանների միջից դուրս են գալիս հայակերը Վելիչկոներ ու Վոստորգովներ, իրանց հովանաւորողներով ու խրախուսողներով։ «Մոսկ. վեդ»-ի, «Նովոե վրեմեա»-ի ու այլ գրական ա-նառականոցների այդ վարձկան լակէյները իրանց աղաների հրամանը կատարելով—թոկից փախածների նման յարձակուում են հայերի թէ գրականութեան, թէ պատմութեան, թէ ինտելիգէնցիայի, թէ եկեղեցու, թէ իդէալների և թէ բոլոր ազգային սրբութիւնների վերայ։ Ես չեմ կարծում, որ նրանք կարողանան ռուս հասարակութեան և ժողովրդի մէջ ատելութիւն սերմանել դէպի հայերը. սակայն նրանք որոշ հող են պատրաստում թէ դալիցինների սխրագործութիւնների և թէ Ռոչկովսկիների ու Վուիչների դաւադրութիւնների համար [2])։ Այս տեսակ անպիտանների գրուածքները չի կարելի բոլորովին

[1]) Պրոֆ. Ն. Մառռը նոյնպէս բազմիցս հրապարակախօսական ասպարէզ է դուրս եկել մեզ պաշտպանելու. էլ չեմ խօսում նրա գիտնական ուսումնասիրութիւնների մասին, որոնց շնորհիւ ոչ միայն օտարն է սկսում մեզ ի մօտոյ ճանաչել, այլ և մենք ինքներս մեզ։

[2]) Ոստիկանական դէպարտամենտի նախկին վերատեսուչ Պ. Լափուխինը ապացուցել է, որ վերոյիշեալ երկու պարոնները—մէկը ոստիկան, դէպարտամէնտի վերատեսուչ, միւսը՝ պաշտօնեան—իրանք, իրանց ձեռքով թռուցիկներ են կազմել հրէաներին և հայերին կոտորելու ու ջարդելու հրաւիրող։

անտես առնել և անպատասխան թողնել, ի նկատի ունենալով յայտնի առածը «զրպարտիր, զրպարտիր—նրանից միշտ մի բան կմնայ»։ Եւ հասկանալի են Վեսելովսկու տխուր տողերը այդ տեսակ հայատեաց գրականութեան առթիւ՝ «Որքա՜ն փորձեր է արուած այս վերջի տասը-տասներկու տարիները ռուս հասարակութեան իսկական հայերի հետ ծանօթացնելու, նրանց կենանքի, գրականութեան, ցոյց տալ, որ նրանք ունեն որոշ իդէալներ, ինտէլիգէնցիա, ժողովրդային դասակարգ... դուրս է գալիս, որ մենք իզուր ենք աշխատել»։ Բայց ի հարկէ սա միայն դառն բացականչութիւն է. թող Վեսելովսկիները շարունակեն իրանց գործը՝ կաթիլ կաթիլ ջուրը քար է ծակում»։ Խօսքի ազատութիւն է, ուրեմն պէտք է սպասել, որ դրանից կօգտուեն ոչ միայն ազնիւները ու դիտունները, այլ և ագէտներն ու զրպարտիչները։ Ահա և երկու օրինակ. Մէկը մի ինչ որ Մ. Ախովի գիրքը [2]), որը սրանից չորս տարի առաջ է հրատարակուած։ Հեղինակը իրան նպատակ է դրել ծաղրի առարկայ շինելու մեր պատմական անցեալը, մեր ներկայ կեանքը, մեր ծգտումները։ Նրա ասելով մենք երբէք անկախութիւն չենք ունեցել, որ մենք ինքներս «վաճառել» ենք մեր հայրենիքը բիւզանդացոց, որ մեր ամբողջ անցեալը մի ոչնչութիւն է, որով մենք չիմարաբար պարծենում ենք, որ մեր տեղը չուքչերու, թունդուղներու և այլ այս տեսակ այլասերուող բարբարոս ցեղերի կողքին է և այլն։ Երկրորդ յօդուածում հեղինակը աշխատում է ցոյց տալ, որ մենք միմիայն ռուսաց իշխանութեան տակ սկսեցինք վարել երջանիկ (sic!) կեանք և որ ռուս իշխանութիւնը չափազանց մեծ արտօնութիւններ է տալիս մեզ հայերիս և իբրև ապացոյց չիշում է թէ ինչպէս հայ գաղթականներից ամեն մի ծուխ ստացել է 297-ական դեսեատին հող և բացի դրանից նոյն այդ գաղթականները «զաւթել» են 30,000 դեսեատին արքունական հողերից, մինչդեռ ռուս գաղթականներին... և այն և այլն։ Հեղինակը ամէն քայլափոխում ոչ միայն ցոյց է տալիս իր «իսկական ռուս» լինելը, այլ և իր

2) М. Аховъ. I Очерки изъ исторіи Арменіи. „Государство“. II Россія и Арменія. 1902 С. Т. Б.

կատարեալ տգիտութիւնը։ Բայց նրա ինչ հոգսն է. չէ որ նա այդ հայհոյանքների համար վարձատրութիւն է ստացել, ուրեմն և պէտք է երախտապարտ լինել՝ լակէյութիւն—է՛լի։

Թէ ո՞վ է այդ Պ. Ախովը—ես չգիտեմ. բայց «Նով. Վր.»-ից բազմիցս օրինակներ բերելուց ես տեսնում եմ, որ նա նոյն ախոռից է, ուր կապուած են Վոստորգովները, Մէնշիկովները, Սփուրթնիկները և այլն։

Այդ հայակերների դրականութեամբ սնւում են բազմաթիւ ռուս ընթերցողներ և ոչ միայն տգէտ դասակարգից, այլ և նորերս վախճանուած համաշխարհային հռչակ վայելող գիտնական Մէնդէլէէնը, որ իր Къ познанію Россіи գրքի մէջ բամբասասէր պառաւի նման աշխատում է խայթել, վիրաւորել մեր ազգութիւնը։ Հռչակաւոր գիտնական և Վելիչկոյի աշակերտ... Ճիշդ որ отъ великаго до смѣшнаго одинъ шагъ!

Եւ եթէ մեր միամիտ հայրենակիցները կարծում են, որ հայակերութեան դարը անցել է—շատ սխալւում են. իսկ եթէ կարծում են, որ հակահայկական պրոպագանդան ոյժ և նշանակութիւն չունեն՝ թող գնան նայեն մեր քարուքանդ եղած գիւղերը, թող յիշեն երեկուայ արիւնոտ անցեալը և այն սոդոմական հրդեհը, որի բազմապան խարոյկից մինչև օրս էլ դեռ ծուխ է բարձրանում որպէս բողոք և զգուշացնող memento (արթուն կացէք)...

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆՑ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

Ի Շ Խ Ե Մ Ի Շ Խ Ա Ն

Իշխ-եմ, իշխ-եցի, «herrchen», իշխ-ան «Fürst». իշխ-անական, իշխ-ան-աբար: Բառս հին է և ստէպ գործածելի:

= զնդ. [1]) xsi, սկր ksi նպ. saistan (> sah, Herrscher) «herrschen».

s և x բաղաձայնների տեղափոխումն փոխառեալ բառերում հայերէնի ձայնական օրէնքներին միանգամայն համապատասխան է. հմմտ. նպ. basxidan=հայ. բաշխել, հարշ. xsaթr =հայ աշխարհ: xs արմատական բաղաձայններին հայերէնում նախընթացիկ ի ձայնականեր մեկնելու է նորանով, որ փոխառեալ բառերում արմատական ձայնականերին հատահնչիւն ձայնական բառի սկզբին կցւում է. հմմտ. ա-շակերտ=նպ. sakerd, ա-շխարհ (փոխան. խշարհ)=հարշ. xsaթr, ա-շխատ=xsaita և այլն: Այսու համաձայն զնդ. xsi-ից կարող էր հայերէնում միայն isx (>ixs), ոչ թէ asx կամ esx սերիլ:

Իշխ-ան բառի—an մասնիկը անկասկած պարսից ծագում ունի:

---

[1]) Կրճատումներ. զնդ=զենդերէն, սկր.=սանսկրիտերէն, նպ.=նոր պարսկերէն, հարշ.=հին արշակուներէն:

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Նախ-արար, նախ-արարութիւն, նախ-արարական: Հին և ստէպ գործածելի:

Թէ՛ բառիս բուն իմաստի և թէ՛ նորա ստուգաբանութեան մեկնութեանց փորձերը մինչև այժմ բաւարար չեն հան-

դիսացել։ Խնդիրս լուծելու համար կարևոր է՝ ըստ իս՝ դիմել երկրիս պատմութեան օգնութեանը։ Նախարարը բառը Հայաստանի քաղաքական կեանքի հնագոյն դաղափարներից մէկն է. այլ տեղում մատնացոյց եմ արել, որ նախարարները՝ ինչպէս ապացուցանում է նոցա կատարած մեծ դերը երկրիս պատմութեան ամբողջ ընթացքում, Հայաստանի նախադոյն տէրերը, բազմաթիւ և բազմաբարբառ ցեղերի բնիկ պետերն են հանդիսացել, որոնց տոհմանունները մասամբ ուրարտեան և ասորեստանի բևեռադիր արձանագրութիւններում ենք կարդում (տ. իմ «Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին», Պարիս 1901)։ Իշխելով իրենց տոհմական դաւառների վերայ նախարարները ստիպուած էին անընդհատ կռիւ մղել պարսից արշակունիների դէմ, որոնք՝ տիրելով Հայաստանին՝ ճգնում էին դէնքի զօրութեամբ վերացնել երկրի բնիկ տէրերի անկախութիւնը։ Այս տոհմական հողերը կոչւում էին արար, ինչպէս Մ. Խորենացին երկիցս վկայում է. պարսից արքայ Շապուհ արձակում է հայ նախարարներին հետևեալ պատուէրով. «Անդ դարձեալ ծեր իւրաքանչիւր արարս՝ իշխեցէք, որպէս և ցայժմ» (Գիրք Գ. 43)։ Նոյն գլխում աւանդում է մեր պատմագիրը, որ նախարարները՝ Արշակ արքայի հետ գաղթելով երկրի արևմտեան մասը, թողին իրենց արար-ները, գիւղերը և գաստակերտերը՝ «գնացին զհետ նորա (Արշակայ) հանդերձ կանամբք և որդովք և նախարարութիւնք՝ որ ի բաժնի Շապհոյ, թողլով զիւրաքանչիւր արարս և զդեղս և զդաստակերտս։» Այստեղ առաջին տեղում յիշում է արար իբրև domain, որին հետևում են գիւղեր և ապա դաստակերտեր։

Նախ—(նախ-նի, նախ-նիք, նախ-կին) կամ Նահ—(նահապետ) բառի իմաստը իբրև «առաջին», princeps պարզ է։ Այսպիսով նախարար պէտք է նշանակէր (տոհմական հողի տէր, (Domainenfüst): Իշխան (տէր, պետ) հակառակն աւելի քաղաքական իմաստ ունի. առաջին բառը հայերէն է, երկրորդը՝ պարսկերէն։

Բ. ԽԱԼԱԹԵԱՆՑ

Տփխիս, օգոստ. 28.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԹՈՔՍԽՈՏԸ ՈՐՊԷՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Մինչև անցեալ XIX-երորդ դարու սկզբները բժշկական գիտութեան մէջ ընդունուած էր, որ բոլոր հիւանդութիւնները հասարակական կեանքի պայմաններից անկախ և անհատական երևոյթներ են։ Դրանց արմատները փնտրում էին մարդուն շրջապատող բնական պայմանների մէջ, օրինակ՝ կլիմայի և բնութեան զանազան երևոյթների մէջ։

Միայն վերջերս է ծագել այն գաղափարը, թէ հիւանդութիւնները սոցիալական են և ոչ թէ անհատական։ Այդ գաղափարի զարգացման նպաստեցին մէկ կողմից բժշկականութեան յառաջադիմութիւնները, իսկ միւս կողմից հասարակական գիտութեանց լուսաբանութիւնները, որոնք պարզում են մեզ առանձին անհատի և այն ամբողջ սոցիալական կազմի մէջ եղած սերտ կապը, որի մէջ նրանք ապրում են։ Ներկայումս կարելի է որոշել այնպիսի սոցիալական հիւանդութիւններ, որոնց զարգացումը անխզելի կերպով կապուած է հասարակական կեանքի կազմի հետ և որը սոցիալական պայմաններից դուրս չի կարելի հասկանալ։

Սոցիալական հիւանդութիւնների ամենայատկանիշ օրինակը թոքախտն է։

I

Յայտնի է որ թոքախտը ամենատարածուած հիւանդութիւնն է աշխարհիս երեսին. բայց այդ հիւանդութեան պատճառած չարիքի իսկական ծաւալը հազիւ թէ յայտնի լինի ընդհանուր հասարակութեան և միայն վերջին տարիների վիճակագրութիւնը ցոյց տուեց, թէ ինչ սարսափելի պատիժ է ներկայ մարդկութեան համար թոքախտը։

ԼՈՒՍԱՅՍ Ա.-Բ. 1897

Թոքախտից մեռածների թիւն այնքան մեծ է, որ ամեն 1000-ից 105—107 թոքախտից են լինում։ Թոքախտը, ինչպէս երևում է, աւելի կորստաբեր է, քան հին ժամանակներում եղել է ծաղիկ հիւանդութիւնը։ Թոքախտի վնասակարութիւնն աւելի պարզ կ'երևայ, եթէ հանենք երեխաներին և մանկահասակներին, որոնց մէջ այդ հիւանդութիւնը շատ սակաւ է պատահում։ Այժմ 15—60 տարեկան հասակում ամեն 1000-ից 322 դէպքը թոքախտից է լինում։

Աւելի պարզ դաղափար կազմելու համար, այդ թուերը պէտք է համեմատել ուրիշ հիւանդութիւններից մեռածների թուերի հետ։ Ինչպէս երևում է թոքախտը, բացի ստամոքսի և աղիքների հիւանդութիւններից, որոնց զոհ են դնում անթիւ երեխաներ մինչև մէկ տարեկան հասակը, առաջին տեղն է բռնում բոլոր միւս հիւանդութիւնների մէջ։ Գերմանիայում 1892 թ. 100 հազար բնակչից մեռել են՝ [1])

Ստամոքսի բորբոքումից (մեծ մասը երեխաներ)	320
Թոքախտից	359
Ծերութիւնից	253
Շնչառութեան գործարանների բորբոքումից	171
Բկախտից (դիֆտերիտից)	118
Խլիրդից (ракъ) և ուրիշ նման հիւանդութիւնից	61
Կապոյտ հազից	40
Կարմրուկից	31
Քութէշից	22
Ժանտատենդից	17

Ընթերցողը տեսնում է, որ բոլոր այն հիւանդութիւնները, որոնք սարսափ են ազդում, օրինակ՝ դիֆտերիտը, քութէշը, ժանտատենդը և այլն, թոքախտի հետ համեմատած՝ ոչինչ են։ Մինչև անգամ այնպիսի աւերիչ հիւանդութիւնները, ինչպիսին է դիցուք խօլերան, թոքախտի հետ համեմատած, շատ քիչ վնասակար են։ Յայտնի ռուս առողջաբան Էրիսմանը, համեմատելով թոքախտից և խօլերայից առաջացած վնասները, գալիս

[1]) Георгъ Майръ. Статистика и обществовѣдѣніе Т. II стр. 455.

է այն եզրակացութեան, թէ Ռուսաստանում վերջին 60 տարուայ ընթացքում թոքախտը 5 անգամ աւելի զոհեր է արել, քան խօլերան։

II

Սակայն թոքախտը նրա համար չէ սոցիալական կոչւում, որ այդքան տարածուած հիւանդութիւն է, կամ թէ՝ որ սահմանի քանակութեամբ զոհեր է տանում։ Թոքախտի սոցիալական յատկանիշն է նրա՝ մարդկանց սոցիալական դրութիւնից կախումն ունենալը։ Թոքախտը դիւաւորապէս բանուոր դասակարգի հիւանդութիւն է և որքան սոցիալական սանդուխքով ցած ենք իջնում, այնքան աւելի զոհեր ենք գտնում այդ հիւանդութեան։

Սոցիալական դասակարգի միևնոյն շրջանի սահմաններում թոքախտից մեռնողների թիւը զանազան է լինում, նայած կեանքի և աշխատութեան պայմաններին։ Կործանիչ են մանաւանդ այն աշխատանքները, երբ բանուորը ստիպուած է աշխատել թոզով լի մթնոլորտում, կամ թէ երբ աշխատանքի ժամանակ լանջավանդակը շարունակ սեղմուած և կորացած դրութեամբ է լինում։ Երբ մաքուր օդի մէջ աշխատող բանուորներից 100 հազար բնակչից թոքախտով մեռնում են 230 հոգի, թոզով լի մթնոլորտում աշխատող բանուորների նոյն հիւանդութեամբ մեռածների թիւը բարձրանում է մինչև 542-ի, այսինքն համարեա թէ $2^1/_2$ անգամ աւելի։

Ներշնչած թոզի զանազան տեսակները նոյնպէս զանազան ազդեցութիւն են ունենում թոքախտի զարգացման վրայ. օրինակ՝ այն աշխատանքների ժամանակ, երբ արճեի թոզ է գոյանում, ամեն տարի 100 հազար բանուորից 779-ը զոհ է գնում թոքախտին. ծխախոտի գործարաններում, այդ հիւանդութեամբ մեռնողների թիւը աւելի մեծ է լինում, 100 հազարից 847-ը։ Կան այնպիսի արհեստներ, երբ վերջ ի վերջոյ համարեա թէ բոլոր բանուորներն էլ թոքախտից են մեռնում։

Եթէ համեմատելու լինինք մի կողմից հարուստ և շքեղ բնակարանների բնակիչներին, որտեղ թոքախտը համեմատաբար հազուագիւտ հիւր է, իսկ միւս կողմից այնպիսի արհեստի ներ-

կայացուցիչներին, օրինակ ջնարակիչների (полировщикъ), որոնք համարեա թէ ամենքն էլ թոքախտից են մեռնում, պարզ կը տեսնենք այդ հիւանդութեան սոցիալական բնաւորութիւնը և նրա սոցիալական պայմաններից կախումն ունենալը։

Այժմ անհրաժեշտ է իմանալ, թէ սոցիալական պայմանները ի՞նչ կերպով են ազդում թոքախտի զարգացման վերայ։ Բայց նախ հարկաւոր է գիտենալ, թէ ի՞նչպէս և ի՞նչի ազդեցութիւնից է զարգանում մարդու կազմուածքի մէջ թոքախտը։

III

Մի շարք գիտնականների երկար ջանքերից յետոյ, վերջապէս 1882 թ. գերմանական գիտնական Ռոբէրտ Կոխին յաջողուեց գտնել թոքախտի մանրանեին, այսպէս կոչուած տուբերկուլէօզի մանրէն։ Այդ դիւտի և ուրիշ անթիւ հետազօտութիւններից երևաց, որ մարդ հիւանդանում է թոքախտով, երբ նրա թոքերում այս կամ այն կերպով թափանցում են Կոխի մանրէները։ Այդ մանրէները սկզբում բորբոքում են առաջացնում, իսկ յետոյ աւերում են թոքի ամբողջ մի մասը։ Բացի դորանից նրանք թունաւորում են մարդու ամբողջ կազմուածքը իրանց գործունէութեամբ։ Թոքերի աւերումը մէկ կողմից, ամբողջ կազմուածքի թունաւորումը միւս կողմից, կամաց կամաց մաշում են մարդու առողջութիւնը և մահուան դուռը հասցնում նրան։

Սկզբում բժշկական գիտութեան ներկայացուցիչներն այն կարծիքի էին, որ թոքախտը շատ պարզ ծագում ունի։ Բայց ժամանակի ընթացքում պարզուեց, որ հարցը աւելի բարդ է քան մեզ թւում էր. գիտնականների մի շարք հետազօտութիւնները երևան հանեցին, որ տուբերկուլէօզի մանրէները շատ են տարածուած, մանաւանդ գլխաւոր քաղաքներում. այնպէս որ հաղիւ թէ գտնուի մէկը, որ իր կեանքում գոնէ մէկ անգամ ներշնչած չլինի այն իր թոքերի մէջ։ Զր նայելով նրա այդքան տարածուած լինելուն, յայտնի է որ ամբողջ մարդկութիւնը վարակուած չէ այդ հիւանդութեամբ, նոյնիսկ մեծ քաղաքներում։ Սրանից եզրակացնում է, որ մեծ մասամբ՝ տուբերկուլէօզի մանրէի ներշնչելը անպատիժ է անցնում մարդու համար։

Եթէ մէկը հիւանդանում է թոքախտով, այդ չէ նշանակում թէ նրա կեանքի վերջը եկել է. վերջին ժամանակներս բժշկական գիտութիւնը գտել է, որ թոքախտը անբուժելի հիւանդութիւններին չէ պատկանում։ Կարելի է ասել, որ թոքախտաւորներից մեծ մասը բոլորովին բժշկւում են. բայց զարմանալին այն է, որ վարակուածներից շատերը ոչ իրանց հիւանդանալու և ոչ էլ առողջանալու մասին տեղեկութիւն ունին, այնքան ծածուկ և աննկատելի կերպով է անցնում թոքախտի գործողութիւնը։ Դիակնահատութիւնը ցոյց է տալիս, որ քաղաքներում ազգաբնակութեան համարեա 1/2-ը և մինչև անգամ 3/4 մասը իրանց թոքերում կրում են թոքախտի հետքեր, իսկ որովհետև անմիջապէս թոքախտից մեռնում են միայն եօթներորդ կամ ութներորդ մասը, այդ ցոյց է տալիս մեզ, որ թոքախտի գործունէութիւնը շատ դէպքերում յաջող է անցնում։

Այդ հետազօտութիւններից երևում է, թէ միայն թոքախտի մանրէն չէ, որ մարդուն կորստեան է դատապարտում։ Գոյութիւն պէտք է ունենայ մի ուրիշ բան, առանց որի թոքախտի մանրէն հասնելով թոքերին կամ բոլորովին վնաս չէ պատճառում և կամ թէ նրա տուած վնասը աննշան է լինում։ Ակներև է, որ թոքախտի մանրէն իր զարգացման համար պէտք է յարմար պայմաններ գտնէ հենց մարդու կազմուածքի մէջ։ անհրաժեշտ է բացի թոքախտի մանրէով վարակուելուց և թոքերի այդ հիւանդութեան յատուկ կանխատրամադրութիւնը։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր խառնակութիւն է. մարդիկ կորցրել են շրջապատող կեանքի պայմանները հասկանալու և, որ գլխաւորն է, բարին ու չարը, ընդհանուրի օգուտն ու վնասը չափելու ընդունակութիւնը:

Համայն Ռուսաստանի կեանքը խառնուել է և մենք էլ, իբրև վիթխարի կաղմուածքի փոքրիկ մասնիկ չենք կարողանում ինքնուրոյն խելքով ու զգացմունքով տնօրինել մեր գործերը: Երբոր Ռուսաստանում հրատարակուեց Պետական Դումայի մասին հրովարտակ՝ իսկոյն մենք էլ կապկաբար կենտրոնական ժողով ստեղծեցինք, թէև շատ լաւ գիտէինք, որ հայը երբէք ընկերովի, խելքը գլխին մի բան դեռ չէ ստեղծել, շատ լաւ գիտէինք, որ ժողովը ժողովրդի իսկական ներկայացուցիչներ չը-պիտի տայ, այլ կուսակցական մարդկանցից շինովի մի պատահական մարմին պիտի ստեղծէ: Երբոր մամուլի ազատութեան մասին խօսք չկար՝ մեր թերթերն ապրում էին, ժողովուրդը կարդում էր, բայց երբոր մի չնչին ազատութիւն տրուեց, երբ որ դժուարութիւնը վերացաւ հայերէն թերթ հրատարակելու համար՝ բազմաթիւ հայ թերթեր երևեցան և մէկը միւսի ետևից մեռան, որովհետև ժողովրդին հետաքրքրող մի լուրջ հրատարակութիւն հրապարակ չեկաւ:

Հայի ազգասիրութեան գլխաւոր մօտիւը կարծես բռնութիւնն է: Երբոր հային չեն թակում՝ նա էլ ազգասիրութիւն չի անում: Երբոր հային ազատութիւն են տալիս՝ նա չափը կորցնում է և անտարբերանում դէպի հասարակական գործերը: Երբոր դպրոցները փակուեցան՝ մենք աշխարհ դղրդեցրինք մեր վերաբերմամբ գործ դրած անարդարութեան համար, բայց երբ

դպրոցներ բացանելու լիակատար իրաւունք տրուեց՝ մենք սկսեցինք մեր նախկին անմիաբանութիւնը և դպրոցները վերածեցինք կուսակցական կռիւների կրկէսի, ոչ միկոպէկ այլ ևս չենք տալիս դպրոցներին, մենք միտարուայ ընթացքում բոլոր հայոց դպրոցներում կենդանացրինք հային յատուկ կոպտութիւնը, նեղսրտութիւնը և հասարակական լայն գաղափարներով ապրելու անընդունակութիւնը։ Երբոր դաշոյնով ու ատրճանակով էին սատկում մեր հարուստներին ազգասիրութեան համար փողեր տալ՝ նրանք հարիւր հազարներ էին զոհում հային կոտորել տալու համար, բայց երբոր եկեղեցական կալուածները յետ տրուեցան և դպրոցները բացուեցին՝ ոչ մի հարուստ չը մտածեց մի դումար նուիրել այդ կալուածները շահագործելու և կանոնաւորելու, մի ազգային լուրջ ընկերութիւն ստեղծելու, որ կարող է ահագին հարստութիւն ստեղծել և ժողովրդի թէ լուսաւորութեան գործը և թէ տնտեսական կեանքը բարւոքել։

Այս բոլոր երևոյթների պատճառն այն է, որ մեր ինտելլիգենցիայի մի մասը գաղափարական կեանքով ապրելու համար վաղուց դիակնացած է, միւս մասը անիրագործելի գաղափարների ետևից ընկած վեհ գաղափարները շահագործում է յօդուտ մի քանի բաղտախնդիր ղեկավարների, որոնք յանուն գաղափարի իրը գործելով՝ իրենց անձնական գործերն են տնօրինում, ճանապարհորդութիւններ կատարում, պաշտօններ տիրապետում, կլուբներում թուղթ խաղում և նման վայելչութիւնների ետևից ընկնում. իսկ բարձր հոգևորականութիւնը մտաւորապէս և բարոյապէս մանրացած միմեանց միսն են ուտում, ինտրիգներով և բամբասանքներով անցնում իրենց ողորմելի օրերը, իսկ ոմանք էլ կաթողիկոսական գահին ձգտելու նշաններ են ցոյց տալիս, առանց մի բոպէ մտածելու, որ իրանց «տուտուց» խելքով նոյն իսկ իրանց ներկայ վիճակին արժանի չեն։

Ժողովուրդը մնացել է անտէր և անղեկավար։

Հայ ժողովրդին հող և կրթութիւն է հարկաւոր։ Բայց ո՞ր կուսակցութիւնը, ո՞ր ինտելլիգենցիան, ո՞ր հոգևորականութիւնն է մտածում կարելի ճանապարհով և շուտափոյթ դարման անելու ժողովրդի ցաւերին։ Բայց մենք ունինք բոլոր կուսակցութիւն-

ների հայկական ճիւղեր, մենք ունենք յեղափոխական զանազան կուսակցութիւններ։

Քանի՞ հոգի են այդ մարդիկ և ինչ են մտածում գիւղացու համար։ Նախ այդ կուսակցութիւնների գործունէութիւնը կենտրոնացած է քաղաքներում, ոչ մի առնչութիւն չունին գիւղացու հետ և չեն էլ կարող ունենալ, նրանց ծրագիրները մօտիկ ապագայում գործադրուելու կարելիութիւնից զուրկ են։ Պէտք է, ասում են, այդ ծրագիրները, ընդհանուր Ռուսաստանի յեղափոխութիւն ստեղծել, որ հայ ժողովուրդն էլ բաղտաւորուի։

Չեն մտածում այդ մարդիկ, թէ արդեօ՞ք հայի պէս մի սակաւաթիւ, բնիկ երկրից զրկուած, երկպառակութեան ոգով տոգորուած ու ուժաղուրկ եղած ժողովուրդ կարո՞ղ է առաջին դերակատարը լինել այդ ծրագիրները իրագործելու համար և, որ գլխաւորն է, չեն մտածում թէ արդեօ՞ք որքան օգտաւէտ պիտի լինին այդ ծրագիրները հային։ Հայ գիւղացին, հայ վաճառականը և հայ ինտելլիգենցիան որպէս և հայ հոգևորականութիւնը չի մասնակցում ոչ մի յեղափոխութեան և չպիտի էլ մասնակցի, որովհետև մեր ուժերին նայելով՝ այդ կը լինի ուղիղ ճանապարհ կորստեան և ոչնչացման։ Այսպէս է եղել Թուրքիայում, նոյնն էլ կըլինի և Անդրկովկասում, եթէ մեր գիտակից խմբերը և հոգևորականութիւնը լեհական „Կոլոյի“ նման չստեղծէ ազգային քաղաքականութեան մի ինքնուրոյն ծրագիր։ Մինչև հայ սոցիալ դէմոկրատները կըստեղծեն իսկական համերաշխութիւն վրացի և Թուրք սոցիալ դէմոկրատների հետ՝ հայ ժողովուրդը շունչը փչած կըլինի, մինչև առուն ջուր կրգայ՝ գորտի հոգին դուրս կրգայ։

Իրական կեանքը անհերքելի փաստերով դալիս է ապացուցանելու, որ այդ համերաշխութիւնը մի ցնորք է, որ դարերի ընթացքում հազիւ թէ կիրականանայ։ Վերջին օրերս Թուրքիայից եկած լուրերը կարծես թէ դալիս էին համոզելու, թէ իբր այնտեղի Թուրք յեղափոխականները հայ յեղափոխականների հետ համերաշխութեամբ են գործում, բայց „Խարիսխում“ տպուած հեռագիրը, որ հաղորդում է Գէորգ Զաւուշի

սպանութիւնը երկու բարեկամ տաճիկների շնորհիւ, փառաւորապէս ապացուցանում է, թէ ոչ մի դրօշ չարժէ այդ համերաշխութիւնը և ե՞րբ պիտի լինի այն երջանիկ օրը, երբ տաճիկն ու քուրդը հայերի հետ միացած պիտի խորտակեն կարմիր սուլթանի չար թախտը։ Մինչև այդ երեխայական և էրեակայական համերաշխութիւնը կիրաղործուի՝ Հայաստանն արդէն դատարկուած կլինի, իսկ Անդրկովկասում մինչև „ընկեր„ Օքրօպիրը ու Հասանը ընկեր Վարդանի հետ կառապարեն Ռուսաստանի միապետութիւնը՝ Գրիգոր քեռու տունն ու տեղը այրուած կլինի և հայ գիւղացու մեծ մասը ականջը կրմնայ։

Այս պատճառով ամենից առաջ հայ հողևորականութիւնն ու ժողովուրդը և ապա հայ ինտելլիդենցիան բարձրածայն և անկեղծօրէն պիտի յայտարարեն, որ Ռուսաստանի յեղափոխութեան մէջ հայը առաջին դերակատարը չպիտի լինի, իսկ յեղափոխական կուսակցութիւնները լիովին ազատ են իրենց գործողութեան մէջ, բայց նրանք իրաւունք չունին հայ ազգի կամ հայ ժողովրդի անունից կատարելու իրենց գործերը։

Մի չնչին ազգ, որ շրջապատուած է բազմաթիւ թշնամիներով, չունի մի կատր հայրենիք, դարերի ընթացքում բողոքել է իւր գլխին եկած թշուառութիւնների դէմ և ոչինչ չի կարողացել վաստակել՝ ոչ մի լուրջ հիմք չունի նորանոր վասնդների ենթարկելու իւր դաւակների ապագան։ Ռուսաստանի ազատագրական շարժման օգտին հայը արդէն բազմաթիւ զոհեր է տուել և այժմ պէտք է լեհացիներից խելք սովորէ, որովհետև լեհացիք էլ պատմական դառն փորձերից յետոյ են եկել այն եզրակացութեան, թէ ամեն մի ազգ լաւ պիտի իմանայ իւր ազգային շահերը և թեթևամիտ քաղաքականութիւնից պիտի զգուշանայ։

Սխալ է այն միտքը, թէ Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի բանուորը աւելի մօտիկ է Զանդեզուրի հայ բանուորին քան թէ հայ բուրժուան կամ հայ վաճառականը. սխալ է, որովհետև մենք մեր աչքի առաջ տեսանք, որ Բագուի երեք կոտորածների ժամանակ միևնոյն գործարանում քանող ռուս բանուորը ոչ միայն չգուրս եկաւ պաշտպանելու իւր ընկեր հայ

բանուորին և ազատելու նորա և նորա որդոց կեանքը, այլ հոկտեմբեր ամսին կային նոյն իսկ ռուս բանուորներ, որոնք կազակների և Թուրքերի հետ միասին վառեցին Զամբարաքեանդի հայերի տները, օր. Միրզաբէգեանի, Թառայեանի, Արուտչեանի և այլն։ Այս այսպէս է, որովհետև պատմական-հասարակական կեանքում ազգութիւնը առաւել զօրեղ ֆակտոր է քան դասակարգային շահերը։

"Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ"։

ՊԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան փոխարքայի դիւանատանը կազմուած է մի ժամանակաւոր յանձնաժողով, որ պիտի պատրաստէ Ռուսաստանի բոլոր հայ ուսումնարանների համար կանոնադրութիւն ու ծրագիր։ Փոխարքան առաջարկել է վեհ. Հայրապետին իւր կողմից երկու ներկայացուցիչ նշանակել մասնակցելու այդ յանձնաժողովին։ Լսում ենք, որ Վեհափառը մի եպիսկոպոս և երկու աշխարհական է նշանակել՝ միմիայն խորհրդակցական ձայնով։

Վեհ. Հայրապետի կոնդակով ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի տեսուչ է նշանակուած յայտնի գրագէտ պ. Մինաս Բերբերեանը։ Արդեօք պիտի յաջողի՞ նորան վերջին տարուայ քարուքանդ ճեմարանը կարգի դնել և բնական շաւղի մէջ դնել մեր բարձրագոյն վարժարանի յառաջադիմութիւնը։ Հաւատում ենք, եթէ միայն...թողին։

Հաագի կոնֆերէնցիային Վեհ. Հայրապետի կողմից մի եպիսկոպոսից և երկու աշխարհականներից բաղկացած պատգամաւորութիւն է ներկայացել Տաճկահայերի տառապանքները նկարագրելու և դարման հայցելու, բայց կոնֆէրէնցիան չէ ընդունել պատգամաւորութեան խնդիրը։

Բագուի հայոց Կուլտուրական միութիւնը առաջիկայ սեպտեմբերից 42 ծխական դպրոց է բաց անում Ղարաբաղի գիւղերում։

Յայտնի գրագէտ պ. Նիկողայոս Քարամեանցը պատրաստում Հայոց պատմութեան մի ընդարձակ դասագիրք։

Հանգ. Զուբալովի կտակի համաձայն քաղաքային վարչութիւնը Թիֆլիսում յատուկ շինութեան մէջ բաց արեց լսարան ժողովրդի կրթութեան համար, ուր այժմ կարդացւում են դասախօսութիւններ ամէն լեզուով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մի տարուայ ակամայ ընդմիջումից յետոյ «Լուման» այսօր վերսկսում է իւր հրատարակութիւնը։

Ինչու՞ համար է «Լուման» վերսկսում, կըհարցնէ թերևս պատահական ընթերցողը։ Ահա թէ ինչու։

Երբ մի տարի առաջ քաղաքական արհաւիրքների պատճառով սկսեց կաղալ ինչպէս ամբողջ Ռուսիայի, այսպէս նաև հայոց լուրջ մամուլը, մեր թերթը չէր կարող բացառութիւն կազմել, մանաւանդ որ առանց այն էլ արդէն զգալի վնասներ էր կրել մեր խմբագրութիւնը։ «Լուման» իւր հրատարակութեան տասնեամէկ տարուայ ընթացքում աւելի քան ութն հազար ռուբլու դէֆիցիտ է ունեցել, որ դամոկլեան սուրի նման կախուած է խմբագրութեանս վերայ։

Այս հանգամանքները ստիպեցին մեզ ժամանակաւորապէս դադարեցնել թերթը և մենք կարծում էինք, որ այլևս «Լուման» ոչ մի հետաքրքրութիւն չի արթնացնում հայ ընթերցող և բանասէր հասարակութեան մէջ։ Բայց մեր ենթադրութիւնը սխալ երևեցաւ.—խմբագրութիւնս վերջին տարուայ ընթացքում առիթ ունեցաւ համոզուել, որ «Լուման» անհրաժեշտ է հայ հասարակութեան. մեզ համոզեցին այն բազմաթիւ գրաւոր և բերանացի դիմումները, որ անում էին խմբագրութեանս օր առաջ վերսկսելու թերթի հրատարակութիւնը, և մենք այսօր վերստին հրապարակ ենք իջնում, յուսալով, որ թերթի համակրողները, ինչպէս և ընթերցող հայ հասարակութիւնը թէ բաժանորդագրութեամբ և թէ այլ միջոցներով օգնութիւն

կգայ խմբագրութեանս՝ թերթի հրատարակութիւնը կանոնաւորելու համար։

«Լուման» առ այժմ լոյս է տեսնելու այս դիրքով 4—5 մամուլից բաղկացած, իսկ ընթերցողների աւելի լայն խաւերին հնարաւորութիւն տալու համար՝ որոշեցինք բաժնէգինը իջեցնել ութից՝ վեց ռուբլու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Systematisch-Alphabetscher Hauptkatalog der Kön. universitätsbibliothek zu Tübingen. Von franz Nik. Finck und L. Gjandschezian. Tübingen 1907.

Atlas zum katalog der Armenishen Handshriften Tub. 1907.

Արտաշիր Բարական. «Կարնամակ» Պահլաւ բն. թարգմ. Յ. Թիրեաքեան, Փարիզ. 1907.

Տունկերը և անոնց անունները. դոկ, Յ. Արթինեան. Փարիզ 1906.

Մարիկ. իմ երգերից. Թիֆլիս 1906.

Հայկ Տէր-Աստուածատրեանց. Հայ վաճառականութիւնը Ռուսիայում. Պարիս 1907.

Նոյն. Հայոց պատմութիւն. Թիֆլիս 1907.

Գր Վանցեան. Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի. Թիֆլիս 1906.

» Դպրոցական քերականութիւն. Ալէքս. 1906.

» Հայոց պատմութիւն. Թիֆլիս 1907

» գրպանի ուղղագրութիւն. Թիֆլիս 1906

Վ. Նեմ. Դանչենկո. Հայուհի Գայիանէն. Թարգմ. Արսէն սարկ. Սիմէօնեանց Մոսկուա 1907.

Յուսիկ եպս. Անապատականներ և վանականութիւն. Վաղարշապատ 1906.

Ա. Ջանեան. Բանաստեղծութիւններ II պր. Բագու 1907.

Կ. վ. Ազգային եկեղեցի. Բագու 1907.

Թիֆլիսի Հայուհեաց բարեգ. ընկ. 25 ամեակ. Թիֆլիս 1907

Բենիկ վրդ. Անարդարութեան երեսից Թիֆլիս 1907.

Գրիգորիս ք. Մատինեան, ս. Շուշանիկ. Թիֆլիս 1907.

Նախագիծ Կովկասի հայոց հրատ. ընկ. կանոնադրութեան Թիֆլիս 1907.

Կարակաշ. Ձայն Ռուսիայից. Ն. Նախիջ. 1907.

Գրիգոր ա. ք. Մանդակունի. Կանոն. Տփխիսի հայ քահանաների միաբանութեան. Տփխիս 1907.

Յ. Սոլովեան. Խռովարկուներ. Թիֆլիս 1907.

» Որն է իսկական ներկայացուցչութիւնը Թիֆլիս 1905.

Կաուցկի. Գործաւոր դասակարգը, թարգ. Ս. Սապահգիւլ. Բոստոն 1906.

» Կապիտալիստ դասակարգը, թարգմ. նոյն Պարիզ 1906

Կ. Գալանդաուէր. Որտեղից աշխարհ եկաւ քո եղբայրը. թրգմ. Տ. Թոփչեան. Թիֆլիս 1906.

Շտապեցէք օգտուել ձեր իրաւունքներից. Թիֆլիս 1907.

Բեն. Տէր-Գրիգորեան. իմ պատասխանը պ. դ. Բալուլին Թիֆլիս 1007.

» Ազատութեան խանդ. Թիֆլիս 1907.

» Նախս. վէպ. ա. մ. » »

Լ. Տալստոյ. Աղօթք. թարգմ. Էմմ. ք. Նազարեան Մոսկուա 1906.

« սեռային յարաբերութիւն. թարգմ. նոյն Մոսկուա 1096,

» սէր, թարգմ. նոյն 1906

Լ. Բուրհէրշտէյն. Առողջապահիկ կանոններ թարգմ. նոյն Մոսկուա 1906.

Ե. Գոգեբաշվիլի Ի՞նչ արաւ օրօրոցի երգը. թարգմ. Ղ. Կ. Թիֆլիս 1907.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լուսայ»-ի խմբագրատանը վաճառուում են՝

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

Աշխատութիւններ.

1	Աղօթատետր Ե. տպ. 1903. . . .	— 10
2	Կրօնի դասագիրք տ. տ. 1889 (սպառուած) .	— 15
3	» » Բ. տ. դ. տպ. 1891	— 25
4	» » Դ. տ. դ. տպ. .	— 25
5	Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. Բ. տպ. 1894 .	— 50
6	Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891 .	— 10
7	Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893	2 —
8	Նոյն. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. .	7 —
9	Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899.	4 —
10	Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902.	4 —
11	Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904	4 —
12	Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1907. .	4 —
13	Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Զ. տպ. 1907 . .	— 50
14	Հնից-նորից, հնախօս. ուղևոր. պրակ Ա. 1900.	— 30
15	Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի	— 50
16	Նամակագիրք 1902	— 50
17	Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն . . .	— 15
18	Զաքար Ղարդաճեանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.)	— 5

Թարգմանութիւններ.

19	Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877	— 40
20	Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) .	— 40
21	Դոն Քիշոտ լամանչեցի, Մ. Սէրվ. 1878 (սպ.) .	— 70
22	Դէորդ Ռօլլէստոն, 1879 (սպառ.) . .	— 60
23	Երրորդ ոսկի, առակ. Լակիդէի Բ. տպ. 1893 . .	— 10
24	Ռոբինզոն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութ.) (սպ.)	— 60
25	Զէստէրտոնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպ.)	1 —
26	Ակտէա. տ. Սիսօեվայի. 1885 (սպառ.) .	— 50
27	Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.)	— 20
28	Արծուի մտածմունքը, պրոֆ. Մ. Բողդան. 1892	— 5
29	Դիւղի սուրբը. Սվեատ. Զէխի, 1892 . .	— 10
30	Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . .	1 —

31 Դէպի Աթէնք, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901 . — 15
32 Մի կտոր հաց, Պոտապէնկոի բ. տպ. 1901 . — 10
33 Որսորդ, Օ. Շրայների . . . . — 10
34 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների. . — 10
35 Կարա. Իրլանդական զրոյց 1904 . . — 5
36 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903 — 40
37 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէսը) 1 —
38 Ն » » պրակ. Բ. գրքի ամբ. կէսը 1 60

Հրատարակութիւններ.

39 Ի. Յարութիւնեան, Հայոց գիրը 1893 . . 1 50
40 Իշ. Կ. Բեհբուդեան, Ծուխ. 1893 . . — 15
41 Ռանդաբէ, Էմաէ, վէպ թարգմ. Յ. Լալայեանի . — 25
42 Ալբէր Այնօ, Քուրդի լեռն, 1894 . . — 20
43 Ճաղարբէգեան Յ. Հայոց լեզու ա. տ. 1904 . — 30
44 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895 . . — 15
45 պիրի, Այծարած Մանի թ. Ի. Յարութիւն. 1885 — 15
46 Բակ. (Բարդէն վ.) Կիլիկիա 1896 . . — 10
47 Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896 . 1 50
48 Մելքիսեդեկ արքայ. Մուրատեան, Պետրոս Շանշեան պատկերով. 1897 . . . . — 50
49 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904 . — 50
50—61 Լումայ, գրական հանդէս 1891—1901 իւր. գիրքը 2 —
62—64 Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան 6 —
65—66 Լումայ ամսագիր 1905—1906 իւր. տար. 8 —
67 Յ. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899 . 1 25
68 » Արևել. ատամնաբոյժ կատակ. 1901 — 50
69 » Քաղաքավար. վնասները, 1901 — 75
70 Ի. Յարութիւնեան, Ստեփանոս Պալասանեան . — 25
71 Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան (ոպառ.) — 60
72 Ի. Յարութիւնեան, Աշակերտի յուշատետր . — 30
73 » Զգացմունքների աշխարհ. — 30
74 Յարութիւն Թումանեան, Մելիք-Իսուսի . — 25
75 Մ. Եօկայի, Ուրացողը, թարգ. Ի. Յարութիւնեան — 20
76 1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը. . — 25
77 Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին . . . — 60
78 Կարալենկո, Կոյր երաժիշտը. թարգմ. Մուշէ վարդ — 60
79 Չորրորդ դարու հայ եկեղեցին . . — 20
80 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը — 40
81 Ի. Յարութիւնեան, Իմ օրագիրը . . — 20
82 Մեծ Ներսէս . . . . . — 25
83 Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը — 60
84 Ի. Յարութիւնեան, Կին վիպագիր Ե. Սպիրի . — 10
85 Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հայեր, բ. տ. — 5

86 Կարալէնկо, Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդ. — 40
87 Կ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902 — 20
88 Գ. վ. Յովսէփեան, Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902 . . . .
89 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 . . . — 25
90 Մ. Գոյրկի. Զէլկաշ. թարգմ. Մուշէ վարդ. . — 20
91 Քուչակ Նահապետի երգերը, Յով. Թադ. . — 15
92 Սահակ Պարթև . . . . . — 25
93 Ապուշը, Ժորժ Էսպարբի, թար. օր. Ն. Աղանեանց, բ. տ. — 5
94 Վարժապետը. թարգմ. Լ. Մ.-Ա. . . . — 5
95 Հազարան Բլբուլ. Յ. Թումանեանց . . — 30
96 Պատմական պատկերներ, Եր. Շահազիզ 1903 — 50
97 Ժ. Ժ. Ռուսսо. Էմիլ. 1. թ. Իս. Յարութիւնեան 1904 — 50
98 Խորէն արք. Գալֆայեան և Նալբ. Աղցմիքը, Եր. Շահ. 1904 — 60
99 Հերոստրատ. Լ. Ֆուլգայի, թարգմ. Տ. Վ. 1904 — 50
100 Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904 . . — 55
101 Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմելի թ. Օր. Ն. Աղան. 1904 — 20
102 Գթութիւն » » 1904 — 5
103 Գ. Ե. Սրուանձտեանի երկերը 1 Համով-հոտով 1904 1 25
104 Ալէմգիր. վէպ Վ. Փափազեանի, 1904 . — 50
105 Սուտի հոգեբանութիւն. Գար. Ենգ. 1904 . — 10
106 Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. թ. Մուշէ վ. 1904 — 75
107 Կօնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. թ. Տ. Վ. 1904 — 15
108 Ազէրֆէզա. վէպ Վ. Փափազեանի, 1904 . — 50
109 Ֆր. Դրկիւբէլ. Նոր Կուռք, թարգմ. Տ. Վ. 1905 — 30
110 Կար. Եղեան. Ս. Էջմ. Մ. Աթ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծագումը. 1905 . . — 40
111 Զ. Ռիչարդսօն. Գրքերի ընտրութիւնը թարգմ. Բենիկ վարդ. 1905 . . . . . — 60
112 Իսլամ. տաճկ. թարգմ. Գր. Եղ. 1905 . . — 20
113 Հոդեկան վարակումն և նրա նշանակութիւնը. բժշկ. Կ. Աղաջանեանց 1905 . . . — 1
114 Խանզադէ, մեր արիւնոտ անցեալից 1907 . — 20

Պատկերներ.

115 Ս. Լուսաւորչի իւղանկարկ մեծագիր պատկեր 3 —
116 Նոյնը կտաւի վերայ . . 15 —
117 Պետրոս Շանշեան . . — 10
118 Յակոբ Պարոնեան . . — 10
119 Արդար Յովհաննիսեան . . — 10
120 Աւետիք Ղուկասեան . . — 10
121 Գարեգին եպս. Սրուանձտեանց . . — 10
122 Լումայի պոստկարտ. . . — 5

Նոր բաժանորդագրութեան մասին հետևեալ համարում

Ա Զ Դ

Խմբագրութիւնս խնդրում է այն ամենին, որոնք ժողովել են «Լումայի» բաժանորդագներ և դեռ մինչև օրս չեն ուղարկել մեզ, նոյնպէս և այն բոլոր բաժանորդներին, որոնք վերջին տարիներս ստացել են մեր թերթը իրանց ցանկութեամբ, և չեն վճարել, անմիջապէս հասցնել խմբագրութեանս իրանց վերայ մնացած ապառիկները:

Զուլարկողների անունները կապուին «Լումայում» հետևեալ համարից սկսած:

ԵԴԻՊՏՈՍ. «Արաէմիսի» խմբագիր պ. Պէյլերեանին: Երկու տարի առաջ մեզանից 110 ռուբլու դրքեր տարաք և խոստացաք անշուշտ վճարել 1906 թ. յունուարի 1-ին. բայց մինչև օրս չուղարկեցիք այդ գումարը: Խնդրում ենք ուղարկել:

ԲԱԳՈՒ. գրավաճառ Անդրէաս Աւագեանին: Մեզանից դրքեր տարաք 128 ռուբլու և մինչև օրս չէք վճարել. հաճեցէք կարգադրել, որ մեզ հասանելիքը վճարուի:

ԵՐԵՒԱՆ. Գրավաճառ Կար. Դաղամեանցին: Ինչու մեր դրքերի վաճառումից դոյացած դրամը չէք ուղարկում:

ՆՈՐ—ՄԱՐԴԵԼԱՆ. Ղուկաս Քեմեչէճեանին. Լումայի համար Մոսկուայ և զանազան տեղեր բաժանորդներ էք հաւաքել և մինչև այսօր դրամները չէք ուղարկել մեզ. ի՞նչ էք մտածում:

ՄՈՍԿՈՒԱ, ԳԱՆՁԱԿ, ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ և այլն և այլն. կարդացէք վերևի պատասխանը:

Այս համարը ուղարկուում է անցեալ տարուայ այն բաժանորդներին, որոնք բաժնեգինը վճարել են:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

պատկերազարդ դասագիրք

աշխ. Հայկ Տէր-Աստուածատրեանի

ԳԻՆՆ Է 45 ԿՈՊԷԿ

ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆՈՒՄ

Ընդունուում են ամեն տեսակ և ամեն լեզուով պատուէրներ:

Հասցէն—Տփխիս, Պօլիցէյսկ., 7.